ՍՈՒՐԲ ՀՈԳԻ

ՄԵՆՔ ՀՐԱՎՏԱՆԳ ԵՆՔ, ԹԵ՞ ՀՐԱԿԱՅՈՒՆ

ՌԵՅՆՀԱՐԴ ԲՈՆԿԵ

Սիրելի ավետարանիչնե՛ր,

Այս գիրքը, որը Սուրբ Հոգու և ավետարանչության մասին է, իմ ավետարանչական ծառայության ժառանգության մի մասն է: Գրքում ներկայացնում եմ Հոգու դպրոցում ամբողջ կյանքի ընթացքում սովորած իմ արդյունավետ ծառայության մասին: Մեր ծառայությունն ականատես է եղել տասնյակ միլիոնավոր թանկ մարդկանց փրկությանը:

Աստված թափում է Սուրբ Հոգին՝ փառավոր կերպով անտարբերության մատնելով մեր տարբերությունները: Թվում է՝ Նա թափում է Իրեն ցանկացած անոթի մեջ, որը բաց է Իր համար: «Վերջին օրերում,- ասում է Աստված,- Իմ Հոգուց կթափեմ ամեն մարմնի վրա...»: Մենք չենք վիճում Աստվածաշնչի հետ: Մենք հենվում ենք դրանում եղած ապացույցների վրա: Այն նման է վավերական հավատարմագրեր ունեցող դեսպանի: Այն հաստատում է իր իսկությունը: «Այն կենդանի և հավիտենական է,- ասում է Պետրոս առաքյալը (Ա Պետր. 1.23),- և շարունակում է գոյություն ունենալ, քանի որ այն կենդանի ճշմարտություն է»:

Այս գիրքը, որտեղ ամփոփված է իմ ծառայության ժառանգությունը, նվեր է ձեզ: Խնդրո՛ւմ եմ, կարդացե՛ք այն ավելի քան մեկ անգամ, և ընդգծե՛ք այն հատվածները, որոնք կարևոր են ձեզ համար: Պահե՛ք այն որպես գանձ ձեր սրտում և հոգում: Այն կտանի ձեզ պտղաբեր կարճուղով դեպի ձեր կոչումը Հիսուսի մեջ:

Աստված օրհնի՛ Հայաստանը: Ես աղոթում եմ ձեզ համար:

Հիսուս Քրիստոսում՝

Ռեյնհարդ Բոնկե, Ավետարանիչ

CfaN CHRIST FOR ALL NATIONS
CfaN.org

ՍՈՒՐԲ ՀՈԳԻ

ՄԵՆՔ ՀՐԱՎՏԱ՞ՆԳ ԵՆՔ, ԹԵ՞ ՀՐԱԿԱՅՈՒՆ

Մինչև սկսեք այս գրքի ընթերցանությունը, ՄԱՐԿԵՐՆԵՐ ունեցեք ձեզ մոտ, որպեսզի ընդգծեք այն հատվածները, որոնք օրհնություն կլինեն ձեզ համար:

Կարո՞ղ եմ մի բան խնդրել: Եթե, ընթերցելով այս գիրքը, դուք օրհնված լինեք, խոստացեք, որ խորհուրդ կտաք այն ձեր ընկերներին:

ՍՈՒՐԲ ՀՈԳԻ

ՄԵՆՔ ՀՐԱՎՏԱՆԳ ԵՆՔ, ԹԵ՞ ՀՐԱԿԱՅՈՒՆ

ՌԵՅՆՀԱՐԴ ԲՈՆԿԵ

Holy Spirit - Are we Flammable or Fireproof? – Armenian
© 2019 by Reinhard Bonnke
Published by Christ for all Nations
PO Box 590588
Orlando, FL 32859-0588, USA
CfaN.org

Originally published in English as
Holy Spirit - Are we Flammable or Fireproof?
by Christ for all Nations
ISBN: 978-1-933446-52-3 (paperback)
ISBN-13: 978-1-933446-53-0 (e-book)

This book is a free gift from the author and it is NOT FOR SALE
Follow Evangelist Reinhard Bonnke on Facebook

«Սուրբ Հոգի. Մենք հրավտա՞նգ ենք, թե՞ հրակայուն», հայերենով
© 2019 Ռեյնհարդ Բոնկե
Հրատարակված է «Քրիստոսն՝ ազգերի համար» ծառայության կողմից
Փ/Ա 590588
Օռլանդո, Ֆլորիդա 32859-0588, ԱՄՆ
CfaN.org

Սկզբնապես հրատարակվել է անգլերենով
«Holy Spirit - Are we Flammable or Fireproof?» վերնագրով
«Քրիստոսն՝ ազգերի համար» ծառայության կողմից
ISBN: 978-1-933446-52-3 (տպագրված գիրք)
ISBN-13: 978-1-933446-53-0 (էլեկտրոնային գիրք)

Այս գիրքն անվճար նվեր է հեղինակի կողմից և ՎԱՃԱՌՔԻ ԵՆԹԱԿԱ ՉԷ
Հետևե՛ք Ավետարանիչ Ռեյնհարդ Բոնկեին Ֆեյսբուքով

ՀՐԵՂԵՆ ԿԱՌՔ

Ավետարանչությունը հրեղեն կառք է՝
բոցավառվող անիվներով, որում ջերմեռանդ
ավետաբերը քարոզում է կրակե Ավետարանը:
Թո՛ւյլ տվեք Սուրբ Հոգուն դարձնել ձեր
ծառայությունը Իր կառքը:



ԸՆԾԱՅԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ

Այս գիրքը նվիրում եմ իմ սիրելի կնոջը՝ էննիին, ով հավատարմորեն իմ կողքին է եղել ամուսնության մեջ, ընտանիքում և համաշխարհային ծառայության մեջ ավելի քան 53 տարի:

Մեկ շաբաթ առաջ էր, որ ասացի նրան. «Երբ նայում եմ դեմքիդ, ծագող արև եմ տեսնում»:

Սկսելով մեր համատեղ կյանքը՝ մենք ընտրեցինք Սաղմոս 113.3-ը.
«Արևելքից մինչև արևմուտք օրհնյա՛լ լինի Տիրոջ անունը»:

ՌԵՅՆՀԱՐԴ ԲՈՆԿԵ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան.....11
Ներածություն.....13
Ավետարանը՝ որպես զենք.....17

ԲԱԺԻՆ 1. Ո՞Վ Է ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ.....19
Հրաշքների Աստված.....20
Մկրտված՝ կրակով.....24
Դուք զորություն կընդունեք.....27
Օգնական, Ով մշտապես ներկա է.....30
Մի՛ սահմանափակեք Նրան.....33
Լիովին նվիրված Հիսուսին.....36

ԲԱԺԻՆ 2. ՀՈԳԻՆ ԵՎ ՈՐԴԻՆ. ՄԿՐՏՈՂ ՀԻՍՈՒՍ 39
Օծյալը.....40
Որդու նախանձավորությունը.....45
Աստվածային առաջնահերթություն.....48
Գինը վճարված է 51

ԲԱԺԻՆ 3. ՍԱՍՏԻԿ ՓՋՈՂ ՔԱՄԻ. ՊԵՆՏԵԿՈՍՏԵ.....55
Կատարված խոստում.....58
Մարգարեական ավետարանչություն.....62
Պենտեկոստեի Ավետարանը.....65
Կրակե համադրություն.....69
Լույս՝ հեթանոսներին.....73

ԲԱԺԻՆ 4. ԸՆԿՂՄՎԱԾ ԿՐԱԿԻ ՄԵՋ. ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆԸ 77
Վերջին անձրևը 78
Սուրբ Հոգու գործունեությունը.....82
Խիստ լիքը.....86
Անժխտելի ապացույց.....89

ԲԱԺԻՆ 5. ԿՐԱԿԵ ԳՈՐԾԻՔՆԵՐ. ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ՊԱՐԳԵՎՆԵՐԸ
ԵՎ ՁՈՐՈՒԹՅՈՒՆԸ.....93
Թանկարժեք և անգին.....94
Պարգևներ, ոչ թե գնված իրեր.....97

Մեծագույն պարգևը.....101
Արծարծել պարգևը.....105
Զորություն՝ ի վերուստ.....109

ԲԱԺԻՆ 6. ԿՐԱԿՈՏ ՄԱՐԴԻԿ. ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ԵՎ ՀԱՎԱՏԱՑՅԱԼԸ.....113
Ոչ մի կրկնօրինակ.....114
Ավելի, քան կրկնակի չափը.....118
Թագավորական քահանայություն.....122
Նոր չափումներ փառքի և զորության մեջ.....125
Ավելի, քան ունակ.....128
Դուք երբեք միայնակ չեք.....132

ԲԱԺԻՆ 7. ԿՐԱԿԵ ԱՆՏԱՌ. ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ԵՎ ԵԿԵՂԵՑԻՆ 135
Նոր Ծննդոց.....136
Անփոփոխ Վերափոխողը.....140
Օժտված եկեղեցի.....143
Զորացված՝ Սուրբ Հոգով.....148
Նրա ներբնակվող ներկայությունը.....151

ԲԱԺԻՆ 8. ԲՈՐԲՈՔՎԱԾ ԿՐԱԿ. ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ԿՈՉԸ.....157
Հիմա է ձեր ժամանակը.....158
Հավատք՝ մանանեխի սերմի պես.....163
Ո՛չ կարողությամբ, և ո՛չ զգացմունքներով.....167
Գերբնականորեն գործող զորություն.....171
Աշխարհը սպասում է.....174
Ընտրեք հավա՛տքը.....177
Գնալու ժամանա՛կն է.....181

ԲԱԺԻՆ 9. ՄՈՒՏՔ ԴԵՊԻ ԿՐԱԿՈՏ ԿՅԱՆՔ. ԻՆՉՊԵ՞Ս ԸՆԴՈՒՆԵԼ ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆԸ.....183

ՄԱՍ ՄԵԿ

Սուրբ Հոգու մկրտությունը. ի՞նչ է այն 185

ՄԱՍ ԵՐԿՈՒ

Սուրբ Հոգու մկրտությունը. ինչպե՞ս ընդունել այն.....201

ՆԱԽԱԲԱՆ

Ինձ հրավիրել էին քարոզելու մի քրիստոնեական հավաքույթի, որտեղ մարդիկ չէին հավատում Սուրբ Հոգու զորությանը: Հանկարծ իմ ծառայության ժամանակ Սուրբ Հոգին թափվեց. մարդիկ ցնծում էին, լցվում էին Սուրբ Հոգով և փառաբանում էին: Ես նայեցի լսարանին, դահլիճի մեջտեղի մասում երեք, չորս մարդ կար, որոնց այն բոլորովին չէր հպվել: Նրանց աչքերը բաց էին, նրանք նայում էին իրենց շուրջը, փոխարենը մասնակցեին այդ գերբնական իրադարձությանը: Ես մտածեցի. «Երևի, այս մարդիկ *անթափանցելի քրիստոնյաներ* են»: Նրանք հրակայուն էին նույնիսկ Սուրբ Հոգու կրակի թափման ժամանակ: Ուզում եմ ասել ձեզ, որ անձամբ ես հրավտանգ ու բռնկուն եմ Աստծո համար: Ես ուզում եմ վառվել Սուրբ Հոգու կրակով և տանել Նրա վառվող ջահը մինչև իմ կյանքի ավարտը: Այս փորձառությունից առաջացավ այս գրքի վերնագիրը: Եվ այսօր ուղղում եմ այս հարցը ձեզ. դուք հրավտա՞նգ եք, թե՞ հրակայուն:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Գործք առաքելոց գիրքն ավելի լավ է ընթերցվում, քան ցանկացած ժամանակակից վեպ: Դրանում հստակ նշված են գործող անձիք. ոմանք գլխավոր դերերում են, ոմանք՝ երկրորդական: Գրքում կան գործողություններ, արկածներ, հաղթանակներ և ողբերգություններ: Տեսարանները փոփոխվում են՝ Երուսաղեմից Դամասկոս, Անտիոք և Հռոմ, և բանտախցերից նավաբեկություններ: Մենք հանդիպում ենք Սուրբ Հոգու քամուն և խիզախ գեղջուկ առաքյալներին, որոնք բացառիկ հրաշքներ էին գործում և շփոթեցնում իրենց օրերի պետությունների ղեկավարներին: Այնուամենայնիվ, այս մեծ առաքյալները միշտ չէ, որ ակնառու էին, և միշտ չէ, որ ազնվագույն կերպով էին վարվում:

Ես հանկարծակիի եկա՝ Մարկոսի 16.8-ում կարդալով, որ Հիսուսի Երկինք համբարձվելուց առաջ աշակերտները չհավատացին: Նույն անհավատության մասին գրված է Մարկոսի 16.11-ում: Եվ երկու խոսք հետո՝ 13-ում, գրված է նույն բառը՝ *չհավատացին:* Կրկին, 14-րդ խոսքում նույն բառն է՝ *չհավատացին:* Նրանք իսկական անհավատներ էին: Բայց ինձ ամենից շատ զարմացնում է այն փաստը, որ 15-րդ խոսքում Հիսուսն ասաց այդ անհավատ և վախկոտ հավատացյալներին. «Գնացե՛ք ամբողջ աշխարհով, Ավետարանը քարոզե՛ք ամեն արարածի»: Թույլ տվեք ասել, որ եթե ես այնտեղ լինեի, կմոտենայի Հիսուսին և ականջին կշշնջայի. «Տե՛ր, մի՞թե չգիտես, որ այն աշակերտները, որոնց հենց նոր տվեցիր Մեծ հանձնարարականը, պարզապես անհավատներ են: Նրանք չեն կարողանա կատարել այն»: Կարծում եմ՝ Հիսուսը կշրջվեր, մատը կդներ շուրթերին և ցածրաձայն կասեր. «Բոնկե՛, Ես մի գաղտնիք ունեմ, որի մասին դու չգիտես»:

Ո՞րն էր այդ գաղտնիքը: Ինչ-որ բան տեղի ունեցավ 14-րդ և 20-րդ խոսքերի միջև: Քսաներորդ խոսքում գրված է. «Նրանք էլ դուրս

գնացին, ամեն տեղ քարոզում էին, և Տերը գործակցում էր նրանց հետ և խոսքը հաստատում էր այն նշաններով, որ հետևում էին: Ամե՛ն»: Ի՞նչ տեղի ունեցավ 14-րդ և 20-րդ խոսքերի միջև: Ըստ ժամանակագրության՝ տեղի ունեցավ Գործք առաքելոց 2-րդ գլխում նկարագրված իրադարձությունը: Աշակերտները թողեցին տկարությունը և ընդունեցին զորություն, որն անհրաժեշտ էր՝ կատարելու համար այն, ինչ Հիսուսը հանձնարարել էր իրենց Երկինք համբարձվելիս. «Բայց դուք զորություն կառնեք, երբ որ Հոգին ձեզ վրա կգա, և Իմ վկաները կլինեք Երուսաղեմում և ամբողջ Հրեաստանի և Սամարիայի մեջ, մինչև երկրի ծայրերը» (Գործք 1.8): Նույն կերպով, բոլորս կարող ենք թողնել տկարությունը և քայլ անել դեպի անսահման զորություն:

Զորությունը քրիստոնեական վկայության էությունն է: Այն Ավետարանի լրացուցիչ պարագա չէ: Այն հեծանվի զանգը չէ. այն ամբողջական հեծանի՛վն է: Աստվածաշնչում չկա նույնիսկ մի փոքր ակնարկ այն մասին, որ աշակերտներից մի քանիսն անզոր կլինեն: Եթե ուղիղ խոսենք, քրիստոնեությունը կա՛մ գերբնական է, կա՛մ ոչինչ է: Մենք ունենք գերբնական Հիսուս, Ով ունի գերբնական ծառայություն և ստեղծել է գերբնական Եկեղեցի. մենք ունենք գերբնական Ավետարան և գերբնական Աստվածաշունչ: Հեռացրեք հրաշքները, և դուք կհեռացնեք քրիստոնեության կյանքը: Եկեղեցին կվերածվի բարոյագիտական ընկերակցության կամ հասարակական ակումբի, այնինչ այն պետք է լինի միասնական էներգահամակարգ, որը փոխանցում է Աստծո զորությունն այս անզոր աշխարհին: Այս աշխարհի համար մենք Աստծո զորության հաղորդիչներն ենք:

Սուրբ Հոգին և Քրիստոսի փրկարար սիրո Ավետարանն անքակտելիորեն կապակցված են կյանքի կապով: Եթե ուզում եք տեսնել Աստծո զորությունը, անտեսե՛ք բոլոր մեթոդները, հմտությունները և հոգեբանական հնարները և պարզապես քարոզե՛ք Խոսքը, քանի որ Աստծո զորությունը բխում է անմիջապես Ավետարանից: Ես չեմ վերցնում միայն մեկ բան Աստծո գանձերի արկղից: Ես ազդարարում եմ ամբողջ Ավետարանը, որը պարունակում է այն ամենը, ինչի կարիքը մենք ունենք՝ փրկություն, ներում, բժշկություն, խաղաղություն, հույս և ազատագրում:

Ես գրի եմ առել մի շարք ազդեցիկ ուսուցումներ Սուրբ Հոգու մասին և կազմել եմ հզոր սկզբունքներ՝ Սուրբ Հոգու ԿՐԱԿԵ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ: Ուզում եմ կոչ անել, որ մտածեք Սուրբ Հոգու մասին, և ոգեշնչել ձեզ, որ հավատաք Հոգու զարմանալի զորությանը, որը ձեր մեջ է: Ձեր ներսում կա ազդեցիկ ուժ, որը կարող է հարություն տալ մեռելներին: Աստված տվել է այն յուրաքանչյուր հավատացյալի: Մենք չունենք ոչ մի արդարացում՝ մեղքի և չարիքի առջև տկար լինելու համար: Չէ՞ որ մենք կարող ենք անել ամեն բան մեզ զորացնող Քրիստոսով (տե՛ս Փիլիպ. 4.13):

Իրականում, այս գիրքն ամփոփում է իմ կյանքի և ծառայության գաղտնիքները: Ես համոզված եմ՝ եթե դուք կիրառեք այս սկզբունքները, դրանք ձեր կյանքում կգործեն նույն կերպով:

Մեր ավետարանչական հավաքույթների ժամանակ բազմաթիվ մարդիկ մկրտվել են Սուրբ Հոգով, և մենք մշտապես Աստծո զորության և սիրո զորավոր դրսևորումների ականատեսներ ենք լինում: Ես ուզում եմ ներկայացնել այն, ինչ հասկացել եմ այդ իրադարձություններից: Իմ վերջնական հեղինակությունը մշտապես Աստվածաշունչն է: Իհարկե, փորձառությունն օգնել է ինձ հասկանալ բազմաթիվ իրողություններ Հոգու մասին, սակայն, ինչպես գրում է Պետրոսը, Աստված «շնորհեց մեզ այն ամենը, որ կյանքի և աստվածապաշտության համար պետք է» (Բ Պետրոս 1.3): Աստվածաշունչն է վավերացնում մեր փորձառությունը: Ներկայացնելով այն, ինչ հասկացել եմ Հոգու իրողությունների մասին՝ ես փորձում եմ ցույց տալ, որ իմ հետևությունները արվել են Խոսքի միջոցով և պարզաբանվել են այն ամենով, ինչ տեսել եմ:

ԱՎԵՏԱՐԱՆԸ՝ ՈՐՊԵՍ ԶԵՆՔ

«Որովհետև ես Քրիստոսի Ավետարանը ամոթ չեմ համարում, որովհետև Աստծո զորությունն է՝ փրկելու համար ամեն հավատացողի, առաջ՝ հրեային, և հետո՝ հույնին»:

ՀՌՈՄԵԱՑԻՆԵՐԻ 1.16

ԲԱՑԵ՛Ք ԱՊԱՀՈՎԻՉԸ

Ավետարանը միակ զենքն է, որը կրակելու դեպքում մահացած մարդը կենդանանում է:

ՀԻՄՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

Աստվածաշունչն Աստծո թագավորության սահմանադրությունն է: Ոչ մի երկրային խորհրդարան, կառավարություն կամ գերագույն դատարան չի կարող փոխել այն: Աստվածաշնչի ճշմարտությունը չի որոշվում ժողովրդավարական քվեարկությամբ կամ համաձայնությամբ: «Ո՛վ Տեր, Քո Խոսքը հավիտյան հաստատ է Երկնքում» (Սաղմոս 119.89): Հիսուսն ասաց. «Ես եմ ճշմարտությունը» (Հովհաննես 14.6):

ԿԱՐԵՎՈՐ ԼՈՒՐ

Երբ Ավետարանը քարոզվում է, այն կատարվում է: Այն դառնում է կատարված իրադարձություն:

ԿՐԱ՛Կ ԲԱՑԵՔ

Մի՛ պաշտպանեք Ավետարանը փշոտ մետաղալարով: Աստվածաշունչը լավագույնս պաշտպանված է, երբ այն ներկայացվում է իր թշնամիներին: Այն գիտի՝ ինչպես վարվել նրանց հետ:

ԺԱՅՌԻ ՊԵՍ ԱՄՈՒՐ

Աստծո Խոսքն ամուր ժայռ է, ոչ թե քրիստոնեական կարծիքների քարակույտ:

ԴԵՍՊԱՆՆԵՐ

Ավետարանը լրացում չէ՝ մարդկային օրենքները բարելավելու համար: Որքան էլ խոնարհ լինի Ավետարանի քարոզիչը, նա, ըստ էության, Գահի պաշտոնյա է, ով խոսում է Աստծո թագավորության իշխանությամբ:

ՈՉ ԲԱՐԿԱՑԱԾ ԼՈՒՐ

Ավետարանը դատաստան չէ: Այն ԲԱՐԻ լուր է, ոչ թե ԲԱՐԿԱՑԱԾ լուր: Քրիստոսը Հարությունն է և Կյանքը:

ՄԻՇՏ ՆՈՐ

Ավետարանը պահպանված պատմություն չէ՝ նման Ալեքսանդր Մեծի պատմությանը: Այն անցյալի զմռսված մասունք չէ: Գոյություն չունի հին էլեկտրականություն կամ հին քամի. նույնպես և գոյություն չունի Հին Ավետարան:

ԱՆԺԱՄԱՆԱԿՅԱ

Աստծո Խոսքը կյանքի պես անժամանակյա է: Այն հնություն չէ, որը պետք է պահպանել: Աստված է պահպանում եկեղեցին. «Մենք Նրանով ենք ապրում, շարժվում և կանք» (Գործք 17.28):

ԱՎԵՏԱՐԱՆԸ՝ ՈՐՊԵՍ ՆՈՆԱԿ

Երբ հավատքը և վկայությունը միանում են, պայթյունի պես բան է տեղի ունենում: Պողոսն ասաց, որ Ավետարանը «Աստծո զորությունն է» (Հռոմեացիների 1.16):

ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Ավետարանն ազգեր է փրկում: Այն զորություն է ազգերի համար և ուժ է հաղորդում բոլորին: Հիսուսը փրկո՛ւմ է:

ԿՐԱԿԵ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

ԲԱԺԻՆ 1

Ո՞Վ Է ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ

ՀՐԱՇՔՆԵՐԻ ԱՍՏՎԱԾ

«Եվ երբ որ Նա նավը մտավ, Նրա աշակերտները գնացին Նրա ետևից: Եվ ահա մեծ ալեկոծում եղավ ծովի մեջ, որ նավն էլ ծածկվում էր ալիքներից, և Ինքը քնած էր: Եվ Նրա աշակերտները, մոտենալով, Նրան զարթնեցրին և ասացին. «Տե՛ր, փրկի՛ր մեզ, կորչում ենք»: Եվ նրանց ասաց. «Ինչո՞ւ վախկոտ եք, սակավահավատնե՛ր»: Այն ժամանակ վեր կացավ, սաստեց քամիներին և ծովին, և մեծ խաղաղություն եղավ: Իսկ մարդիկ զարմացան և ասում էին. «Սա ինչպիսի՞ մեկն է, որ քամիները և ծովն էլ հնազանդվում են սրան»»:

ՄԱՏԹԵՈՍ 8.23-27

ՄԵԳԵԹՈՍ. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ

> *Սուրբ Հոգով մկրտվելու շնորհիվ բոլորիս համար հասանելի է մեռելներին հարություն տվող, կենսատու զորությունը: Անզոր եկեղեցին խայտառակություն է: Սուրբ Հոգին մշտապես գործում է, երբ դուք գործում եք Աստծո համար: Եթե դուք չեք գործում Աստծո համար, ձեզ պետք չէ զորություն, և այն չի տրվի ձեզ: Բայց երբ մկրտվում եք Հոգով, դուք անհաղթահարելի կարողություն եք ստանում:*

ՊՈՂՈՍՆ ԱՂՈԹՈՒՄ է ԵՓԵՍԱՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ (1.18-20), որ «... ձեր սրտերի աչքերը լուսավորվելով՝ գիտենաք... Նրա զորության գերազանց մեծությունը ՄԵԶԱՆՈՒՄ, որ հավատացինք, Իր կարող զորության հաջողության պես, որ Քրիստոսում գործադրեց՝ Նրան մեռելներից հարություն տալով»: Այս հատվածում Պողոսն օգտագործում է *«մեգեթոս»* բառը՝ նկարագրելու համար մեզ հասանելի միջոցների մեծությունը: Միջուկային ռումբի պայթուցիչ ուժը չափվում է *մեգատոններով:* Բայց Պողոսն է՛լ ավելի է առաջ գնում՝ խոսելով *«հիպերմեգեթոսի»* կամ գերազանց մեծության մասին: Ահա թե ինչպես պետք է չափենք մեր արդյունավետությունը քրիստոնեական ծառայության մեջ, և ահա թե ինչ է հասանելի Աստծո ծառաներից յուրաքանչյուրին:

ԱՆՀՆԱՐԻՆԸ ՏԵՂԻ է ՈՒՆԵՆՈՒՄ

> *Աստվածային բնությունը ոչ միայն գերբնական է, այլև՝ հրաշագործ: Աստծո զորությունը, սերը և բարությունը գերազանցում են ամեն ինչ: Այնտեղ, որտեղ Աստծո ներկայությունն է, կարելի է ակնկալել լույս, կյանք և գերազանցություն. սարերը կցածրանան, ձորերը կբարձրանան, և այն, ինչ ծուռ է, ուղիղ կդառնա (տե՛ս Եսայի 40.4): Աստծո բառարանում չկա «անհնարին» բառը:*

ԱՆՀՆԱՐԻՆԸ ՏԵՂԻ է ՈՒՆԵՆՈՒՄ, ԵՐԲ ԱՍՏՎԱԾ ՆԵՐԿԱ է: ԱՅՆ ՆՐԱ հատկանիշն է: Արարչագործությունը սկիզբ առավ, երբ Նա անցավ դրա կողքով: Հոբը խոսում է տիեզերքի մասին՝ անվանելով այն «Նրա

ճանապարհների ծայրերը» (Հոբ 26.14)՝ նման հետքերի, որոնք մնում են թաց խոտի վրա քայլելուց հետո: Նույնը վերաբերում էր Հիսուսին: Երբ Նա անցնում էր ինչ-որ հրեական գյուղով, դա ակնհայտորեն երևում էր. այդ գյուղում չէր մնում ոչ մի հիվանդ: Այնտեղ, որտեղ Նա է, առանց որևէ խնդրի կարելի է քայլել ալիքների վրայով, բժշկել հիվանդներին կամ կերակրել 5.000 մարդու՝ մի տղայի նախաճաշով: Այդ ամենը պարզապես տեղի է ունենում. նյութական աշխարհը ենթարկվում է Նրա կամքին: «Աստված դրդում է, որ ԱՄԵՆ ԻՆՉ միասնաբար գործի դեպի բարին՝ Աստծուն սիրողների համար» (Հռոմեացիների 8.28, NLT):

ՀՐԱՇԱԳՈՐԾ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ

> *Աստված պարզապես գերբնական չէ: Նա հրաշագործ է՝ Իր բնությամբ, և Նրա Հոգին՝ նույնպես: Նրա էությունը հրաշալի է, և Նրա գործերը լի են հրաշքներով: Հոգուն ունենալը նշանակում է սպասել հրաշքների, Հոգուն հավատալը նշանակում է հավատալ հրաշքների, և Հոգով վարվելը նշանակում է հրաշքներ գործել: Դուք ստեղծված եք հրաշքների և նշանների համար:*

ՄԻԱԿ ՀՈԳԻՆ, ՈՐԸ ՀԻՍՈՒՍԸ ԽՈՍՏԱՑԱՎ ՄԵԶ, ՀՐԱՇԱԳՈՐԾ

Հոգին է՝ Սուրբ Հոգին: Գոյություն չունի հրաշքներ չգործող Սուրբ Հոգի: Այն, որ մարդը պնդում է, որ Սուրբ Հոգին իր մեջ է, սակայն մերժում է այն գործը, որով Նա մշտապես առանձնացել է, միայն կարող է տրտմեցնել Նրան: Նա սկսեց Իր գործունեությունը մեծագույն նյութական հրաշալիքներով՝ ստեղծելով այս աշխարհը: Նա չի փոխել Իր բնությունը: Նա եղել է, կա և մշտապես կլինի Աստված, Ով գործում է այս աշխարհում: «Ես Եմ Որ Եմ» (Ելից 3.14): Սուրբ Հոգին, Ով գերբնականորեն ստեղծեց այս աշխարհը, առանց որևէ դժվարության շարունակում է վարվել գերբնական ձևով:

ՁԵՐ ՍՊԱՍՈՒՄՆԵՐԻՑ ԱՎԵԼԻՆ

Մենք՝ անկում ապրած և տկար մարդիկս, բնականորեն հակված ենք կասկածելու Հոգու իրողություններին և տրամաբանելու դրանք, բայց Քրիստոս Հիսուսում մեր հոգիները վերածնված են: Այժմ մենք հավատք ունենք, որպեսզի ապրենք գերբնական կյանքով և հավատանք գերբնականին: Թույլ մի՛ տվեք, որ ձեր բնական վիճակը և հանգամանքները համոզեն ձեզ, որ դուք չեք ստանա ձեր հրաշքը:

ԱՍՏՎԱԾ ՍՏԵՂԾԵԼ Է ԲՆԱԿԱՆ ԿԱՐԳԸ, ԵՎ ՆԱ ԳՈՐԾՈՒՄ Է բնական օրենքների միջոցով: Սակայն Նա սահմանափակված չէ ո՛չ այդ օրենքներով, ո՛չ էլ մեր տկարությամբ: Նա կարող է գերազանցել մեր սպասումները և նույնիսկ՝ մեր ամենահամարձակ երազանքները (տե՛ս Եփես. 3.20): Եվ մենք կարող ենք հավատալ այս ճշմարտությանը: Չէ՞ որ գրված է. «Աստված մարդ չէ, որ սուտ խոսի, ո՛չ էլ մարդու որդի, որ զղջա: Մի՞թե կասի և չի անի, կամ՝ կխոսի և չի կանգնեցնի (կամ՝ կատարի)» (Թվոց 23.19):

ՄԿՐՏՎԱԾ՝ ԿՐԱԿՈՎ

«Ես ջրով եմ մկրտում ձեզ՝ ապաշխարության համար, բայց իմ ետևից Եկողն ինձնից զորավոր է, Ում կոշիկները վեր առնելու ես արժանի չեմ: Նա ձեզ կմկրտի Սուրբ Հոգով և կրակով»:

ՄԱՏԹԵՈՍ 3.11

ԱՄԲՈՂՋՈՎԻՆ ԸՆԿՂՄՎԱԾ

> *Հոգու մկրտությունը ձեր ամբողջ էության՝ հոգու, անձի և մարմնի ամբողջական ընկղմումն է Սուրբ Հոգու մեջ: Այն մասնակի, խորհրդապատկերային և ժամանակավոր չէ: Ձեր էության ամեն մի մասնիկն ընկղմված է և ամբողջովին պատված է այս թանկ Հեղուկ Կրակով, որի արդյունքը մշտատև է: Սա մեկանգամյա իրադարձություն չէ՝ նման ջրով մկրտվելուն: Սա շարունակական վերապրում է, որը փոխում է ձեր բնությունը և ձեզ շրջապատող ամեն ինչ:*

ՈՐՈՇ ՄԱՐԴԻԿ ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՆ ՊԱՂՊԱՂԱԿԻ ՊԵՍ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆԸ՝ սառը, բայց հաճելի: Նրանք ցանկանում են, որ իրենց եկեղեցիները թանգարանների նման լինեն: Բայց եկեղեցին սառցարան չէ: Այն Հոր տունն է: Սուրբ Հոգին ջերմացնում է մեզ՝ Հոր տան համար:

ՕԺՏՎԱԾ՝ ՄԱՐԳԱՐԵՆԵՐԻ ՀՈԳՈՎ

> *Աբրահամ, Մովսես, Հեսու, Դեբորա, Եղիա և Եղիսե... այս անունները երկյուղածություն ու ակնածանք են ներշնչում, սակայն նրանք կրքեր ունեցող մարդիկ էին, ինչպես և մենք (տե՛ս Հակոբ. 5.17): Նույն Հոգին, որը նրանց վրա էր, մեր մեջ է: Մենք չստացանք երկրորդական Հոգի կամ վերապրում, և չպետք է երկրորդական արդյունք ակնկալենք:*

ՀՈԳՈՎ ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆՆ ՕԺՏՈՒՄ Է ՀԱՎԱՏԱՑՅԱԼՆԵՐԻՆ Մարգարեների Հոգով: Երբ մարգարեները գերբնականորեն վերապրեցին Աստծուն, նրանք անվանեցին Նրան Մարգարեների Հոգի: Հովել 2.28-ը խոստանում է, որ նույն Մարգարեների Հոգին կթափվի ամեն մարմնի վրա: Կմարգարեանան բոլորը, ոչ թե միայն հատուկենտ մարդիկ:

ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԼԱՐՆ ԱՆՎՆԱՍ Է ԹՎՈՒՄ, ՔԱՆԻ ԴԵՌ ՉԵՆ ԴԻՊՉԵԼ ԴՐԱՆ

Աստծո թագավորությունը եկել է, և բանալիները մեր ձեռքում են: Միգուցե մենք սովորական, անվնաս կամ անկարևոր տեսք ունենք, բայց մի՛ խաբվեք արտաքինով. մենք լցված ենք զորությամբ՝ Սուրբ Հոգու զորությամբ, և անփոխարինելի ենք Աստծո փրկարար ծրագրի համար: Մեր լեզուներն ի զորու են ազդել մարդկանց կյանքերի վրա և փոխել իրադարձությունների ընթացքը, իսկ մեր ձեռքերի ափերում Գաղաադի բժշկարար բալասանն է:

ԵՐԲ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵՑ ԷԼԵԿՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ՇԱՏԵՐԻ կարծիքով՝ այն պարզապես զվարճալի նորույթ էր: Երկու հարյուր տարի առաջ քչերն էին կարծում, որ էլեկտրականությունն ի զորու է գործարկել արդյունաբերությունը և լուսավորել ամբողջ քաղաքներ: Երբ մարդիկ խոսում են այլ լեզուներով, դա վկայում է Սուրբ Հոգու զորության ներուժի մասին: Շնորհիվ Հոգու այս դրսևորման՝ մենք կարող ենք վստահ լինել, որ Աստված կգործի մեր կյանքում: Աստծո Հոգին չի սահմանափակվի առանձին իրադարձություններով, այլ կթափանցի մեր ամբողջ ծառայության մեջ, եթե թույլ տանք Նրան: Դուք սովորական տե՞սք ունեք: Քրիստոնյաները կարող են անվնաս թվալ, բայց այդպիսին է թվում նաև էլեկտրական լարը, քանի դեռ դրան չեն դիպչել:

ԴՈՒՔ ԶՈՐՈՒԹՅՈՒՆ ԿԸՆԴՈՒՆԵՔ

«Եվ նրանք մեկտեղ գալով՝ հարցնում էին Նրան
և ասում. «Տե՛ր, այս ժամանակո՞ւմ ես կանգնեց-
նում Իսրայելի թագավորությունը»: Եվ Նա ասաց
նրանց. «Ձեր բանը չէ գիտենալ ժամերը և ժամա-
նակները, որ Հայրն Իր իշխանությունում դրեց:
Բայց դուք զորություն կառնեք, երբ որ Հոգին ձեզ
վրա գա, և Իմ վկաները կլինեք Երուսաղեմում և
ամբողջ Հրեաստանի և Սամարիայի մեջ,
մինչև երկրի ծայրերը»»:

ԳՈՐԾՔ 1.6-8

ԼԵՑՈՒՆՈՒԹՅՈՒՆ

> *Հիսուսն ասաց. «Դուք զորություն կառնեք, երբ որ Հոգին ձեզ վրա գա» (Գործք 1.8): Առանց այս կենսական ուժի՝ մենք կունենանք աշխարհիկացված, տրամաբանական և անզոր կրոն: Խորհրդապաշտական մտածողությունը չունի որևէ առնչություն Նոր կտակարանի գործուն կյանքի հետ: Իրականությունից անջատ ապրելը բուդդայականների համար է, ոչ թե քրիստոնյաների: Օգտագործե՛ք այս զորությունը:*

ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ԶՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏՔ Է ԼԻՆԻ ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐԻ կյանքի սովորական վիճակը: Հոգու լեցունությունը գործողության է մղում և օժտում է զորությամբ *(«դունամիս»):* Սա տեղի է ունեցել թե՛ Նոր կտակարանի հավատացյալների, և թե՛ նրանցից հետո ապրող միլիոնավոր մարդկանց կյանքում: Գոյություն ունեն սակավաթիվ հատվածներ Սուրբ գրքից, որոնց հիման վրա մենք կարող ենք ենթադրել, որ Սուրբ Հոգին գալիս է մարդկանց վրա մեղմ զեփյուռի նման՝ ուշադրություն չգրավելով և աննկատ: Որպես կանոն, Նրա գործունեությունը խիստ ուշագրավ է: Հոգու դրսևորումների թվում են կրակը, քամին, աղմուկը, հրաշքները, արտաքին նշանները, զորությունը և տեսանելի արդյունքները:

ԶՈՐՈՒԹՅՈՒՆ՝ ՀԱՂԹԵԼՈՒ ՀԱՄԱՐ

> *Սուրբ Հոգին հակասթրեսային, հանգստացնող կամ խթանող դեղամիջոց չէ: Նա չի գալիս զգացմունքային վերապրում տալու համար, բայց, միևնույն է, Նրա ներկայությունը հպվում է մեր սրտին: Կյանքը դժվար է: Աստված ուղարկում է Իր զորությունը դժվարին իրավիճակներում եղող մարդկանց: Նա այն սկզբնական կենսական ուժն է, որը զորացնում է մեզ, որպեսզի մենք հաղթական և առատ կյանք ունենանք և վկաներ լինենք այս աշխարհի համար:*

«ԴՈՒՔ ՍՈՒՐԲ ՀՈԳՈՎ ԿՄԿՐՏՎԵՔ ՈՉ ԹԵ ՇԱՏ ՕՐԵՐ ՍՐԱՆԻՑ հետո... *դուք զորություն կառնեք, երբ որ Հոգին ձեզ վրա գա»* (Գործք 1.5,8): Կարո՞ղ է սա տեղի ունենալ մեր օրերում: Սա տեղի ունեցավ իմ կյանքում: Չեմ կարծում, որ մարդիկ կարող են Սուրբ Հոգու մկրտությունից ավելի հրաշալի վերապրում ունենալ: Այն նշանակում է լցված լինել Աստծով: Այն չի նշանակում ունենալ «աստվածային արբեցություն»՝ մի տեսակ բերկրալի, գլխապտույտ և անհոգ երջանկություն: Այն նշանակում է ունենալ իրական կարողություն, հաստատուն բնավորություն, մարմնի բժշկություն, աստվածային պաշտպանություն, իմաստություն և մտավոր աճ, բարեհաճություն, ինչպես նաև բոլոր բարիքները, որոնց կարիքը մենք ունենք այս կյանքում:

ԶՈՐՈՒԹՅՈՒՆ՝ ՄԱՐԱԹՈՆԻ ՀԱՄԱՐ

> *Օծությունն անչափ թանկ է, սակայն դուք չեք վաստակում օծությունն այնպես, ինչպես որ մարզիկը վաստակում է իր օլիմպիական մեդալը: Նման մեր փրկությանը՝ մենք Հոգին ստանում ենք հավատքով, ոչ թե այն պատճառով, որ մենք արժանի ենք, այլ՝ որպեսզի զորություն ունենանք՝ Քրիստոսի վկաները լինելու համար:*

ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ԶՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՉԻ ՏՐՎՈՒՄ ՈՐՊԵՍ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ: Զորությունը մարաթոնի վերջում տրվող հաղթանշան չէ: Մեզ զորություն է պետք սկզբից, եթե ցանկանում ենք վազել մեր մարաթոնն Աստծո համար: Միգուցե վարկաբեկենք մեզ կամ սայթաքենք մեր ընթացքի մեջ, բայց հենց այդ պատճառով է անհրաժեշտ, որ ընդունենք Սուրբ Հոգուն: Նա չի տրվում մեզ կատարյալ լինելու պայմանով. Նա տրվում է, քանի որ մենք կատարյալ չենք: Նա եկել է, քանի որ մենք ունենք Նրա կարիքը. Նա եկել է մեզնից ամենալավերի և ամենավատերի համար: Պարզապես կրկնե՛ք ձեր սրտում, «Սո՛ւրբ Հոգի, ես իսկապես ունեմ Քո կարիքը»: Նա անմիջապես կարձագանքի, քանի որ ձեր կողքին է:

ՕԳՆԱԿԱՆ, ՈՎ ՄՇՏԱՊԵՍ ՆԵՐԿԱ Է

«Եվ Ես Հորը կաղաչեմ, և ուրիշ Մխիթարիչ կտա ձեզ, որ մնա ձեզ հետ հավիտյան»:

ՀՈՎՀԱՆՆԵՍ 14.16

ԱՄԵՆԱԿԱՐՈՂ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ԳՈՐԾՈՒՄ Է ՄԵՐ ՄԻՋՈՑՈՎ

> *Սուրբ Հոգին Աստծո Հոգին է՝ Հիսուս Քրիստոսի Հոգին: Նա Աստված է: Մենք չենք զորացնում Սուրբ Հոգուն, երբ աղոթում ենք. Նա ամենակարող է՝ առանց մեր օգնության: Այնուամենայնիվ, Աստվածաշնչում գրված է, որ մենք պետք է աղոթենք Հոգով (տե՛ս Եփես. 6.18):*

ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ԱՍՏՎԱԾ Է՝ ԵՐՐՈՐԴՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ԱՆՁԸ:
Նա ամենակարող, ամենագետ և ամենագո է: Նա չունի մեր օգնության կարիքը, բայց որոշում է գործածել մեզ՝ գործել մեզ հետ, մեր միջոցով և մեզ համար՝ սիրուց ելնելով: Աղոթքը չի օգնում Աստծուն. այն օգնում է մեզ համագործակցել Աստծո հետ՝ անձնատուր լինելով Նրան և թույլ տալով գրավել Իր տեղը՝ որպես մեր կյանքի Տեր և Փրկիչ: Ինչպիսի՜ պատիվ և հեղինակություն է շնորհվել մեզ, որ մենք դարձել ենք բարի, սուրբ և ողորմած Աստծո գործակիցները՝ փրկություն առաջարկելով այս ցավով և տառապանքով լցված աշխարհին:

ԱՍՏՎԱԾ ՑԱՆԿԱՆՈՒՄ Է ԳՈՐԾԵԼ ՁԵԶ ՀԱՄԱՐ

> *Շատերն են գործում Աստծո համար, այնինչ Աստված է ուզում գործել նրանց համար: Նա չի ուզում, որ մենք այնքա՛ն շատ աշխատենք Իր համար, որ ընկնենք ու մահանանք: Ծառայության գործը խիստ կարևոր է, անփոխարինելի է և պետք է կատարվի հստակ ժամկետներում: Այնուամենայնիվ, Աստված ցանկանում է, որ մենք ժամանակ գտնենք, որպեսզի հանգստանանք մեր ընտանիքի և ընկերների հետ և վայելենք այն բարի բաները, որոնք ծրիաբար շնորհվել են մեզ:*

ՄԵԿ ԱՆԳԱՄ ԵՍ ՄԻ ԳԵՐԵԶՄԱՆԱՔԱՐ ՏԵՍԱ, ՈՐԻ ՎՐԱ ԳՐՎԱԾ էր տղամարդու անուն և հետևյալ տապանագիրը. «Նրա կյանքը բաղկացած էր միայն աշխատանքից»: Ես մտածեցի. «Այս տապանագի-

որը համապատասխան է ջորուն, ոչ թե մարդուն»: Աստծո կամքը չէ, որ մենք բեռնակիր անասուններ լինենք կամ աշխատենք ռոբոտների պես: Նա կարող էր անթիվ բեռնակիր ձիեր ստեղծել, եթե Նրա կամքն այդպիսին լիներ: Սակայն, մտածելով մեր մասին, Տերը չնախատեսեց ստրուկների. Նա կամեցավ որդիներ, ոչ թե աշխատանքային մեքենաներ:

ՄԻ՛ ՍԱՀՄԱՆԱՓԱԿԵՔ ՆՐԱՆ

«Քանի՛ անգամ դառնացրին Նրան անապատում և բարկացրին Նրան անջուր տեղում: Կրկին և կրկին փորձեցին Աստծուն և Իսրայելի Սուրբին նեղացրին (կամ՝ սահմանափակեցին): Չհիշեցին Նրա ձեռքն այն օրում, որ փրկեց նրանց թշնամուց: Որ Իր նշաններն արեց Եգիպտոսում, և Իր հրաշքները՝ Տայանիսի դաշտում»:

ՍԱՂՄՈՍ 78.40-43

ԱՆՓՈԽԱՐԻՆԵԼԻ

Սուրբ Հոգին անփոխարինելի է: Նա քարոզչի կյանքն է և քարոզի զորությունը և այն աստվածային մագնիսը, որը գրավում է մարդկանց դեպի եկեղեցին: Աստծո Հոգին պատմում է Աստծո մասին: Եթե թույլ տանք Նրան զբաղեցնել Իր տեղը եկեղեցում և կառուցել այն, դժոխքի դռները չեն հաղթի Եկեղեցին, և մենք աճ կտեսնենք:

ՈՐՔԱՆ ՔԻՉ է ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ՆԵՐԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐ ՄԻՋԵՎ, այնքան ավելի շատ սուրճ ու թխվածք է մեզ պետք՝ մարդկանց եկեղեցում պահելու համար: Ես բոլորովին դեմ չեմ սուրճին և թխվածքին, բայց ճշմարտությունն այն է, որ Սուրբ Հոգին անփոխարինելի է: Նրա ներկայությունը և գործերն անզուգական են:

ԱՄԲՈՂՋ ԱՇԽԱՐՀԸ՝ ՀԻՍՈՒՍԻ ՀԱՄԱՐ

Սուրբ Հոգին է հնարավոր դարձնում ավետարանչությունը: Առանց Սուրբ Հոգու՝ Մեծ հանձնարարականը ընդամենը անհնարին երազանք է: Սակայն, շնորհիվ Սուրբ Հոգու խթանման և ներգրավվածության, Ավետարանի քարոզումը բոլոր արարածներին պարզապես ցանկություն չէ: Այն հասանելի նպատակ է:

ՆԱԽՈՐԴ ԴԱՐԻ ՍԿԶԲՈՒՄ ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ շրջադարձային կերպով ավելացան՝ նման Գործք առաքելոց 2-րդ գլխին: Ամերիկայից դրանք տարածվեցին Եվրոպա, Ասիա և աշխարհով մեկ: Իմ հարցը հետևյալն է. եթե վերջին 100 տարվա ընթացքում 20 մարդ, որոնք վառվում էին Աստծո համար, կարողացան փրկության բերել 800.000 մարդու, քանի՞ մարդու կարող է այդ 800.000-ը փրկության բերել հիմա: Նույնիսկ երկինքը սահման չէ Աստծո համար:

«ԵՍ ՏԵՍՆՈՒՄ ԵՄ ՀԻՍՈՒՍԻՆ ՔՈ ԱՉՔԵՐՈՒՄ»

Սուրբ Հոգին բնակվում է ձեզանում և ցանկանում է զորավոր կերպով գործել ձեր կյանքում: Նա կամենում է կապ հաստատել ձեր էության ամեն մի մասնիկի և ձեր անձի ամեն մի ունակության հետ: Հանձնե՛ք Նրան ձեր լեզուն, մարմինը, միտքը, կամքը և նույնիսկ ձեր աչքերը, և մարդիկ կտեսնեն Նրան ձեզանում:

ՏԱՐԻՆԵՐ ԱՌԱՋ ԻՄ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՎԱԳԸ ԵՎ ես գնացել էինք նոր սինթեզատոր գնելու: Ցերեկվա ժամերն էին, և մենք մտանք մի մեծ երաժշտական խանութ Յոհաննեսբուրգում՝ Հարավաֆրիկյան Հանրապետությունում: Հանկարծ հայտնվեց վաճառողը: Նա կարծես զարմացած և լայն բացված աչքերով ասաց ինձ. «Պարո՛ն, ես տեսնում եմ Հիսուսին ձեր աչքերում»: Ի՞նչ: Սուրբ Հոգին մտել էր այդ խանութ: Մենք մոռացանք սինթեզատորի մասին և արթնության հավաքույթ սկսեցինք այնտեղ: Բայց երբ վերադառնում էի մեքենայիս մոտ, ես շարունակ հարցնում էի՝ Տե՛ր, չեմ հասկանում, ինչպե՞ս լիովին անծանոթ մարդը կարող է մոտենալ ինձ և ասել, որ տեսնում է Հիսուսին իմ աչքերում: Եվ հանկարծ Սուրբ Հոգին խոսեց ինձ հետ. «Հիսուսն ապրում է քո սրտում, և երբեմն ՆՐԱՆ ԴՈՒՐ Է ԳԱԼԻՍ ՆԱՅԵԼ ՊԱՏՈՒՀԱՆՆԵՐԻՑ»: Ես ծիծաղեցի և լաց եղա: Ինչպիսի՜ փառավոր ճշմարտություն: Ես հասկացա Նրա ասածը: Տարիներ անց հանդիպեցի այդ վաճառողի կնոջը: Նա ասաց, որ իր ամուսինը մինչև կյանքի ավարտը հետևել էր Հիսուսին: Փա՛ռք Աստծուն:

ԼԻՈՎԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԻՍՈՒՍԻՆ

«Ուստի մենք էլ, որ վկաների այսքա՜ն բազմություն ունենք մեզ շրջապատած, դե՛ն գցենք ամեն ծանրություն և մեզ դյուրավ պաշարող մեղքը, և համբերությամբ վազենք մեր առջև դրած ասպարեզի ընթացքը: Մտիկ տանք հավատքի Ձորագլխին և Կատարողին՝ Հիսուսին, որ Իր առջև դրված ուրախության փոխարեն խաչը հանձն առավ, և ամոթն արհամարհելով՝ Աստծո աթոռի աջ կողմը նստեց»:

ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐԻ 12.1-3

ՀԱՆՐԱՅԻՆ, ՈՉ ԹԵ ՄԱՍՆԱՎՈՐ

> *Մենք ամաչո՞ւմ ենք Ավետարանից: Պողոսը չէր ամաչում: Նա սափրեց իր գլուխը՝ ցույց տալու համար, որ երդում էր արել (տե՛ս Գործք 21.24): Մարդիկ կնկատեին այդ սափրագլուխ առաքյալին: Բայց ՆԱ ՉԷՐ ԱՄԱՉՈՒՄ: Նա երդվել էր ինչ-որ բան անել Աստծո համար: Ինչո՞ւ մենք՝ կրակով մկրտված հավատացյալներս, չպետք է անենք նույնը:*

ԵՐԲ 120 ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ ԴՈՒՐՍ ԵԿԱՆ ՎԵՐՆԱՏՆԻՑ, ՆՐԱՆՔ փոխված էին: Նրանք կնքված էին, փոխված էին, և այդ փոփոխությունը նկատելի էր: Ինչպիսի՞ն են այն մարդիկ, որոնք դուրս են գալիս մեր եկեղեցիներից կիրակի առավոտյան: Ի՞նչ կլիներ, եթե Աստծո կրակը թափվեր մի մարզադաշտում՝ ավետարանչական հավաքույթի ժամանակ, և բոլորը, հարբած Սուրբ Հոգով, դուրս գային այդտեղից: Սուրբ Հոգով մկրտությունը մասնավոր հարց չէ: Այն հանրային իրադարձություն է: Փա՛ռք Աստծուն:

ԱՌԱՋ՝ ԱՄԲՈՂՋ ՈՒԺՈՎ

> *Այս աշխարհն ընդունում է խանդավառության ցանկացած պոռթկում՝ բացի Աստծո հանդեպ սիրուց: Ի՞նչ ենք մենք ցանկանում: Արդյո՞ք ցանկանում ենք հարմարավետ մշակույթ և կյանք, թե՞ Աստվածային բնության կրակոտ և հուզիչ մղումը: Եթե կամենում եք լիովին վերապրել Նրան, պետք է շարժվեք առաջ՝ ամբողջ ուժով:*

ԱՐԴՅՈ՞Ք ՄԵՆՔ ՎԱԽԵՆՈՒՄ ԵՆՔ ՄՏՆԵԼ ԱՍՏԾՈ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ օվկիանոսը՝ առաջնորդվելով Հոգեգալստի հզոր քամիով: Արդյո՞ք այն օսլան, որը մենք քաղաքակրթություն ենք անվանում, խստացրել է մեր հանդերձները՝ վերածելով պողպատե զրահի, և այժմ մեզ համար դժվար է «հագնել Քրիստոսին»: Որտե՞ղ են Նրա արցունքները: Նրա տառապանքները և մեր խաչը կրելը: Որտե՞ղ է մեր բացարձակ

անձնուրացությունը և Աստծուն անձնատուր լինելը: Եթե կամենում եք լիովին վերապրել Նրան, պետք է շարժվեք առաջ՝ ամբողջ ուժով: Ետ մի՛ կանգնեք:

ՈՐՏԵՂԻՑ ՍԿՍԵԼ

> *Մի երիտասարդ ասաց ինձ, որ Ավետարանը քարոզելու կանչ ունի, բայց իր հովիվը չէր կամենում զիջել իր ամբիոնը: Ես նայեցի նրան և ասացի. «Ես ամբիոն կտամ քեզ»: Նա զարմացած նայեց ինձ և ասաց. «Ի՞նչ: Դուք ուզում եք տալ ինձ ձեր ամբիոնը»: Ես պատասխանեցի. «Ո՛չ, բայց ես կարող եմ ամբիոն տալ քեզ: Ամեն մի փողոցի անկյունն ամբիոն է»: Ես շարունակեցի. «Ես սկսել եմ հենց այդտեղից, և դու նույնպես պետք է այդտեղից սկսես»: Աստվածաշունչն ասում է. «Մի՛ անարգիր փոքր սկիզբը, քանի որ Տերը ցնծում է՝ տեսնելով, որ գործը սկսվում է» (Զաքարիա 4.10, NLT):*

ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՃԸ ՏԵՂԻ Է ՈՒՆԵՆՈՒՄ ՓՈՒԼ ԱՌ ՓՈՒԼ: ԱՃԸ դանդաղ ընթացք է: Դուք կհասունանաք Խոսքի մեջ, հավատքի մեջ, Սուրբ Հոգու մեջ և պտղաբերության մեջ: Մի՛ հանձնվեք հակառակության ժամանակ: Հիսուսը դարձրեց մեզ ավելի, քան հաղթող: Երկինքը բաց է մեզ համար, հրեշտակները բարձրանում և իջնում են, մեր աղոթքները հասնում են Երկինք անխոչընդոտ կերպով, և Սուրբ Հոգին մշտապես հորդում է մեզ վրա՝ նման արևի լույսի՝ անամպ երկնքում:

ԿՐԱԿԵ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

ԲԱԺԻՆ 2

ՀՈԳԻՆ ԵՎ ՈՐԴԻՆ. ՄԿՐՏՈՂ ՀԻՍՈՒՍ

ՕԾՅԱԼԸ

«Եվ մկրտվելուց հետո Հիսուսը շուտով դուրս եկավ ջրից, և ահա երկինքը բացվեց Նրա համար, և Նա տեսավ Աստծո Հոգին, որ վայր էր իջնում աղավնու պես և գալիս Նրա վրա: Եվ ահա երկնքից ձայն եկավ, որ ասում էր. «Դա՛ է Իմ սիրելի Որդին, Որին Ես հավանեցի»»:

ՄԱՏԹԵՈՍ 3.16,17

ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆ ԿՐԱԿՈՎ

> *Հիսուսն ասաց, որ Հովհաննես Մկրտիչը վառվող և լույս տվող ճրագ էր, սակայն նա մկրտում էր ջրով՝ Հորդանան գետի սառը ջրերում: Հիսուսը ճրագ չէ. Նա Լույսն է, և Նա Տերն է: Նա մկրտում է այլ Հորդանանում՝ հոգևոր գետում, որը վառվում է Աստծո զոհասեղանի կրակով և բժշկություն ու զորություն է բերում:*

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԿՐՏԻՉԸ ԳԻՏԵՐ ՀՈԳՈՎ ՄԿՐՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ. նա իմացել էր այդ մասին Աստծուց: Իրականում, Հովհաննեսն ասաց մեզ՝ ինչպես ճանաչել Քրիստոսին. Նրա տարբերակիչ հատկանիշը կրակով մկրտությունն է: Դա լինելու էր այնպիսի բան, ինչը ոչ ոք չէր արել և չէր էլ կարողանա անել: Գոյություն ունեն բազմաթիվ կրոններ, բայց Քրիստոսը տարբերվում է նրանցից: Միայն Նա է մկրտում Սուրբ Հոգով և կրակով (տե՛ս Մատթ. 3.11):

ՀԻՍՈՒՍԸ ՄԿՐՏՎԱԾ ԷՐ ՍՈՒՐԲ ՀՈԳՈՎ

> *Թեև Հիսուսի ծնունդը Սուրբ Հոգուց էր, Նա Սուրբ Հոգով մկրտվելու կարիք ուներ, երբ սկսեց Իր ծառայությունը: Այն բանից հետո, երբ Հովհաննես Մկրտիչը ջրով մկրտեց Հիսուսին Հորդանանում, տեղի ունեցավ երկրորդ մկրտությունը: Աստծո Հոգին իջավ Նրա վրա՝ աղավնու պես, ոչ թե կրակի բոցի պես, քանի որ Հիսուսի մեջ չկար մի բան, ինչը պետք էր այրել:*

ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐԻ ՄԵԾԱԳՈՒՅՆ ՕՐԻՆԱԿԸ ՀԻՍՈՒՍՆ Է, ԵՎ Նա մկրտվեց Սուրբ Հոգով: Մատթեոսի, Մարկոսի և Ղուկասի Ավետարանները նկարագրում են նույն իրադարձությունը: Չորրորդը՝ Հովհաննեսի Ավետարանը, ավելի մանրամասնորեն է ներկայացնում այն: Հովհաննես Մկրտիչը, ով եկել էր Հիսուսից առաջ, հայտարարեց. ««Տեսնում էի Հոգին, որ աղավնու պես վայր էր գալիս երկնքից և Նրա վրա մնում» (Հովհաննես 1.32): Հիսուսն Ինքն ասաց. «Տիրոջ Հոգին Ինձ վրա է, որի համար էլ օծեց Ինձ. Նա Ինձ ուղարկել է...

ավետարանելու»» (Ղուկաս 4.18): Պետրոսն ասաց Գործք 10.38-ում. «Հիսուսին, որ Նազարեթից է, թե ինչպես Նրան Աստված Սուրբ Հոգով և զորությամբ օծեց»: Հովհաննես Մկրտիչը ապշեցուցիչ մի բան ասաց. «Որի վրա որ տեսնես Հոգին վայր է գալիս և Նրա վրա մնում, Նա է Սուրբ Հոգով մկրտողը» (Հովհաննես 1.33):

Քրիստոսը մարդկային վերապրում ստացավ Աստծուց, որպեսզի ցույց տար, թե ինչպիսին պետք է լինի մարդու կատարյալ վիճակը: Նա առաջինն էր անթիվ մարդկանցից: Նա առաջին Սուրբ Հոգով մկրտված մարդն էր այս երկրի վրա: Հովհաննես 3.34-ում գրված է. «Աստված տալիս է Հոգուն առանց չափի» (NIV): Հովհաննես 1.16-ն ազդարարում է. «Նրա լիությունից մենք ամենքս առանք...»: Սա հրաշալի ճշմարտություն է. այն, ինչ Նա ստացավ, մեզ համար էր: Նա լցվեց մեզ համար, և մենք լցվում ենք Նրա անսահման լիությունից:

ԱՅՆ ԱՄԵՆԸ, ԻՆՉ ՀԻՍՈՒՍՆ ԱՐԵՑ, ՄԵԶ ՀԱՄԱՐ ԷՐ

> *Նա ծնվեց մեզ համար և ապրեց մեզ համար: Նա ասաց, որ Ինքը մկրտվեց ջրով և Հոգով՝ մեզ համար: Նա ծառայեց, մահացավ, հարություն առավ, համբարձվեց դեպի փառքը, և Նա վերադառնալու է մեզ համար:*

ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ՏԱԼԻՍ Է ՄԵԶ ՀԻՍՈՒՍԻ ԿՅԱՆՔԸ: ԳԱԼՈՎ ԱՅՍ աշխարհ որպես մարդ՝ Հիսուսն ընդունեց այն, ինչի կարիքն ունի մարդկությունը՝ Սուրբ Հոգու: Նա նույնացրեց Իրեն մեզ հետ և ասաց. «Այսպես է վայելում մեզ, որ ամեն արդարություն կատարենք» (Մատթեոս 3.15): Հիսուսն Աստծո Որդին էր, բայց Նա զբաղեցրեց մեր դիրքը, և եկավ այն օրը, երբ Նա անցում կատարեց դեպի նոր փորձառություն՝ Հոգով լցված կյանքը: Այս փորձառությունը դարձ կամ վերստին ծնունդ չէր: Աստծո Որդին բոլորովին չուներ դրա կարիքը: Նրա օրինակը ցույց տվեց, որ Հոգով մկրտությունը չպետք է շփոթել վերստին ծնունդի կամ որևէ այլ հոգևոր իրադարձության հետ: Նա ընդունեց Սուրբ Հոգու առանձին և եզակի փորձառությունը՝ Իր ծառայության համար: Նույնը պետք է կատարվի յուրաքանչյուր հավատացյալի հետ, ով հետևում է Նրա օրինակին:

ՕԾՎԱԾ ՇԱՎԻՂՆԵՐ

Դրանք Սուրբ Հոգու հեղուկ կրակի մեջ ընկղմված տղամարդու կամ կնոջ հսկա ոտնահետքերն են: Ամեն մի քայլից կրակ է կաթում, որն այրում է մեր ճանապարհի կարիճներին և օձերին՝ ազատության և օրհնությունների արահետ բացելով:

«ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆ» ԲԱՌՆ ԱՅՍՕՐ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԱՌ է, ԲԱՅՑ ՀԻՆ ժամանակներում այն պարզապես նշանակում էր ընկղմում: Երբ ներկարարը մտցնում էր կտորը ներկի մեջ, այն ընկղմվում կամ մկրտվում էր, ինչը նշանակում էր, որ այդ գործվածքն ընդունում էր այդ ներկի բնույթը: Երբ Հիսուսը՝ կանգնած Սուրբ Հոգու գետի մեջ, կանչում է մեզ, և մենք հետևում ենք, Նա գրկում է մեզ Իր ձեռքով և մկրտում է Սուրբ Հոգու հեղուկ կրակի մեջ: Մենք մտնում ենք կրակի մեջ, իսկ կրակը՝ մեր մեջ: Երբ մենք բարձրանում ենք այդ փառավոր գետից, գիտակցում ենք, որ կրակը լիովին համակել է մեզ և ամբողջովին ներծծվել է մեր մեջ: Այն նախատեսված չէ մեր անհատականության որևէ կողմի կամ առանձին գործառույթի համար. այն ընդգրկում է մեր ամբողջ անհատականությունը: Պատկերացրեք, որ դուրս եք գալիս այդ գետից և զգում եք, թե ինչպես է կենդանի կրակը կաթկթում ձեզնից: Ամեն մի դև ձեր քաղաքում կիմանա, թե ուր եք դուք գնացել, քանի որ նրանք կճանաչեն ձեր ոտնահետքերի կրակե կաթիլները՝ օծված շավիղները:

ԸՆԴԳՐԿՎԱԾ ԼԻՆԵԼ

Հիսուսն Իր երկրային կյանքի ընթացքում ոչ ոքի չմկրտեց կրակով: Նա ասաց, որ անելու էր դա Իր Հոր մոտ գնալուց հետո: Եվ այդպես էլ վարվեց՝ սկսելով Պենտեկոստեի օրվանից, ինչպես որ գրված է Գործք 2-րդ գլխում: Այդ «հետո»-ն դեռ շարունակվում է: Նրա ծրագիրը չի փոխվել: Հիսուսը դեռ Սուրբ Հոգով Մկրտողն է: Նա թոշակի չի անցել և չի փոխել Իր դերը: Մի՞թե նման բան կարող էր տեղի ունենալ, եթե այդ խոստումը «հեռավորների» համար էր (տե՛ս Գործք 2.39):

ՆԵՐԿԱՅՈՒՄ ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՑ ԳՐՔԻ ԵՎՍ ՄԵԿ ԳԼՈՒԽ Է ԳՐՎՈՒՄ:
Այսօր Հոգու մկրտությունը ոգեշնչում է հարյուր միլիոնավոր նորահավատների՝ Ավետարանը զորությամբ քարոզելու համար: Ընդգրկվե՛ք այս գործի մեջ:

ՈՐԴՈՒ ՆԱԽԱՆՁԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

«Եվ Հրեաների զատիկը մոտ էր, և Հիսուսը
ելավ Երուսաղեմ: Եվ տաճարում գտավ եզներ
և ոչխարներ և աղավնիներ ծախողներին
և սեղանավորներին նստած: Եվ չվանից
խարազան շինեց և ամենին տաճարից
դուրս հանեց՝ ոչխարներն էլ և եզներն էլ,
և սեղանավորների պղինձները ցրեց և
տախտակները կործանեց: Եվ աղավնի
ծախողներին ասաց. «Դրանց վե՛ր առեք
այստեղից. Իմ Հոր տունը մի՛ շինեք առևտրի
տուն»: Եվ Նրա աշակերտները հիշեցին, որ
գրված է. «Քո տան նախանձը
կերավ Ինձ»»:

ՀՈՎՀԱՆՆԵՍ 2.13-17

ԱՍՏԾՈ ԿՐԱԿԸ ՀԻՍՈՒՍԻ ՄԵՋ

Ոմանց համար այն երկրպագության վայր էր: Մյուսների համար այն աշխատանքի վայր էր, որտեղ նրանք վաստակում էին իրենց ապրուստը ցանկացած միջոցով: Բայց Որդու համար այն Իր Հոր Տունն էր՝ սուրբ հող և այնպիսի վայր, որտեղ աղոթքներ են բարձրանում ազգերի փրկության, բժշկության և ազատագրման համար: Այնպես որ, Նա մտրակ բարձրացրեց փող փոխողների, գողերի և չարաշահողների վրա՝ դրդելով փարիսեցիներին զայրույթից դողալ, և վտանգի ենթարկելով Իր կյանքը: Այնուամենայնիվ, քանի որ վտանգված էր Իր Հոր պատիվը և ազգերի փրկության աշխատանքը, Նա ծիծաղեց մահվան վրա: Արժեր գործել այդ նպատակների համար: Նա պատրաստ էր խաչվել դրանց համար, եթե հարկավոր լիներ: Ինչպիսի՜ նախանձավորություն:

ՄԵՐ ԿՅԱՆՔՈՒՄ ԱՍՏԾՈ ԿՐԱԿԸ ՎԵՐԱԾՎՈՒՄ Է ՆԱԽԱՆՁԱՎՈՐՈՒԹՅԱՆ՝ այնպիսի նախանձավորության, որը տեսանք Հիսուսի կյանքում: Նա նախանձավոր էր ոչ միայն խոսքով: Մենք կարդում ենք, որ երբ Հիսուսը վերջին անգամ Երուսաղեմ էր գնում, Նա գնում էր Իր աշակերտների առջևից: Նրանք տեսնում էին, թե ինչպես էր Նա ստիպում Իրեն առաջ գնալ: «Եվ ճանապարհի վրա Երուսաղեմ էին գնում, և Հիսուսը նրանցից առաջ էր գնում, և նրանք զարմանում էին և ետևից գնալով վախենում էին» (Մարկոս 10.32): Ինչո՞ւ: Այն կրակը, որը Նրա ներսում էր, երևում էր նույնիսկ Իր քայլերի մեջ:

Երբ նրանք տեղ հասան, Հիսուսը տեսավ, թե ինչպես էր պղծվում տաճարը: Այդ պահին աշակերտներն է՛լ ավելի համոզվեցին Նրա նախանձավորության մեջ: Նրա արձագանքը վերածեց Նրան զարհուրելի անձնավորության: Աշակերտները հիշեցին Սաղմոս 69.9-ը. «Որովհետև Քո տան նախանձը կերավ Ինձ...»: Բայց Նրա բարկությունը ծնվեց սիրուց, ոչ թե սառնասիրտ զայրույթից: Հիսուսը խելագարված մոլեռանդ չէր. Նա սիրում էր Իր Հոր տունը, և վերջ: Նա ցանկանում էր, որ մարդիկ երկրպագեին տաճարում՝ ազատ և երջանիկ: Բայց շահամոլությունը տաճարում փչացրել էր այդ ամենը: Նրա սիրտը հորդեց հրաբխի պես: Սուրբ Հոգու կրակը Նրա

ներսում դրդեց Նրան մաքրել տաճարը: Նրա արարքները վախ էին առաջացնում, և շատերը փախուստի դիմեցին դրա պատճառով:

Չնայած դրան, երեխաները, կույրերը և կաղերը մնացին, և Նա բժշկեց (տե՛ս Մատթ. 21.14-16): Նա հենց դա էր կամենում անել, և հենց այդ պատճառով էր Նրա բարկությունը հնոցի պես բորբոքվել: Նրա ցասման նպատակն ուրախությունն էր, և Նա հասավ Իր նպատակին. ի վերջո, երեխաները երգեցին «Ովսա՛ննա»: Սա միակ դեպքն է Աստվածաշնչում, որում ոգեշնչումն Աստծո վերաբերյալ հանդիմանվեց՝ միակ դեպքը, երբ Տիրոջ սրահներում հնչեց լռության պահանջ: Այդ լռությունը պահանջողները փարիսեցիներն էին. Տիրոջ փառաբանությունը խլացնում էր նրանց դրամարկղերից հնչող զրնգոցը: Փողի երաժշտությունը լռեցվում էր: Դա Տիրոջ կրակի խորհուրդն էր. Նրա մաշող կրակի նպատակն էր ճանապարհ պատրաստել հորդացող փառաբանության համար:

ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆ

«Եվ տոնի վերջին մեծ օրը Հիսուսը կանգնած էր, աղաղակեց և ասաց. «Եթե մեկը ծարավ է, թող Ինձ մոտ գա և խմի: Ինձ հավատացողը, ինչպես Գիրքն ասում է, նրա փորից կենդանի ջրերի գետեր կբխեն»»:

ՀՈՎՀԱՆՆԵՍ 7.37,38

ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻՑ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ

> *Այն, ինչ առաջարկում է Հոգին, անկարելի է ստանալ բազում բարի գործերի և կրոնի միջոցով: Աստծո Հոգին հագեցնում է յուրաքանչյուրի խորը քաղցը և ծարավը: Նա թարմություն և նորոգում է բերում ձեզ այնպես, ինչպես ոչինչ և ոչ ոք չի կարող: Եթե դուք հոգնած եք և լեցունության կարիք ունեք, Հիսուսն առաջարկում է ձեզ գալ Իր մոտ, ընդմիջում վերցնել և խմել Սուրբ Հոգու խորը ջրերից (տե՛ս Հովհ. 7.37,38):*

ԱՄԵՆԱՀՐԱՇԱԼԻ ՁԱՅՆԸ, ՈՐԸ ԵՐԲԵՎԵ ԼՍՎԵԼ ԷՐ, ՀԱՍՆԵԼՈՒ էր հազարավոր մարդկանց ականջներին, որոնք հավաքվել էին Երուսաղեմի տաճարի սրահներում: Տեղի էին ունենում ազգային տոնակատարության վերջին ծեսերը: Բոլորի աչքերը հետևում էին այն ոսկե անոթին, որը լցված էր ջրով և գինով: Թափելու ընծան պատրաստ էր Տիրոջը մատուցվելու համար: Քահանաներից մեկը վեր բարձրացրեց արևի ճառագայթներից փայլող անոթը և կանգ առավ: Տիրեց քար լռություն. մարդիկ փորձում էին լսել սուրբ ջրի թափման ձայնը զոհասեղանի մոտ դրված բրոնզե անոթի մեջ: Հանկարծ այդ ամենը ընդհատվեց. մի ձայն, որը 1.000 տարի չէր հնչել, հանկարծակիի բերեց բոլորին: Դա Հիսուս Քրիստոսի՝ Աստծո Որդու ձայնն էր: Նա այն Խոսքն էր, որը խոսվել էր սկզբից և գոյության էր կոչել երկինքն ու երկիրը: Այժմ, կանգնած Երուսաղեմում, Նա հրատարակում էր թագավորական և աստվածային հրովարտակը, որով Աստծո գործելակերպը մարդկանց հետ նոր փուլ էր թևակոխում. «Եթե մեկը ծարավ է, թող Ինձ մոտ գա և խմի: Ինձ հավատացողը, ինչպես Գիրքն ասում է, նրա փորից կենդանի ջրերի գետեր կբխեն» (Հովհաննես 7.37,38): Մոտենում էր Սուրբ Հոգու ժամանակաշրջանի սկիզբը:

ՈՒՐԱԽԱԼԻ ԳՈՉՅՈՒՆ

Սուրբ Հոգու ազատություն բերող ազդեցության պատճառով դուք դժվարանում եք, իսկ հաճախ՝ չեք կարողանում հանդարտ մնալ, և դրա կարիքն էլ չկա: Կա զորություն ձեր գոչյունի մեջ: Թո՛ւյլ տվեք ձեզ տոնել Նրա ներկայությունը հիացական ուրախությամբ: Գոչե՛ք, և ձեր ներսից ուրախության գետեր կհոսեն (տե՛ս Հովհ. 7.38, Ա Պետր. 1.8):

ՎԵՐԱԴԱՌՆԱԼՈՎ ԱՅՆ ԲԱՆԻՆ, ԻՆՉ ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉՆ ԱՍՈՒՄ Է Սուրբ Հոգու մասին, «գետեր» բառը շարունակաբար օգտագործվում է՝ նկարագրելով հավատացյալի կատարյալ վիճակը: Գետերը Սուրբ Հոգու խորհրդապատկերն են: Եսայի 58.11-ում կա հետևյալ ակնկալիքը. «...կլինես... ջրի ակնի (կամ՝ գետի) պես, որի ջուրը չի պակասի»: «Գետերը» վերապրելու համար անհրաժեշտ է Սուրբ Հոգու հրաշագործ ներկայությունը: Շատերի համար լեցունությունն անծանոթ է, անբնական և շփոթեցնող: Այնուամենայնիվ, նրանց համար, ովքեր Աստծո թագավորության մեջ են, այս աշխարհի մշակույթը մեծ նշանակություն չունի: Մեր Թագավորության մեջ մարդիկ ուրախալի գոչյուններ են արձակում: Մենք միայն պետք է մեկ հարց տանք՝ եթե Քրիստոսն աներ ճիշտ այն, ինչ խոստացավ, և մկրտեր մարդկանց Սուրբ Հոգով ու կրակով, ինչպիսի՞ն նրանք կլինեին: Արդյո՞ք կլինեին սառը, զուսպ և ինքնամփոփ: Աստծո զինանշանի վրա պատկերված է կրակ, ոչ թե սառույց:

ԳԻՆԸ ՎՃԱՐՎԱԾ Է

«Միայն կամենում եմ սովորել ձեզնից. օրենքի գործերի՞ց ընդունեցիք Հոգին, թե՞ հավատքը լսելուց: Այդքան անմի՞տ եք. Հոգով սկսեցիք և հիմա մարմնո՞վ եք վերջացնում»:

ԳԱՂԱՏԱՑԻՆԵՐԻ 3.2,3

ՎԱՆԵԼ ԿԱՄ ԳՐԱՎԵԼ

Ուշադրություն դարձրեք. մեր տկարությունները չեն վանում Աստծուն, այլ գրավում են Նրան: Միգուցե մենք անհույս ենք, բայց Հոգին Աստծո պարգևն է հատկապես տկարների համար, քանի որ Նա լրացնում է մեր տկարությունները: «Նա է հոգնածին (կամ՝ տկարին) ուժ տվողը, և Նա կարողություն չունեցողին զորություն է շատացնում» (Եսայի 40.29):

«ԶԱՐՄԱՆԱԼԻ ՇՆՈՐՀՔ. ՈՐՔԱ՛Ն ՔԱՂՑՐ Է ԱՅՆ, ՈՐ ՓՐԿԵՑ ԻՆՁ պես անզգամին»: Գողգոթայում հնչեց մի ձայն, որը փրկություն բերեց մարդկությանը, իսկ Պենտեկոստեի օրը հնչեց մեկ այլ ձայն՝ սաստիկ փչող քամու ձայնը: Դա նախանձավորության, սիրո, Աստծո Հոգու ձայնն էր, որը փափագում էր իր գիրկն առնել մարդկությանը: Լիովին գիտակցելով անկում ապրած մարդկության տկարությունները՝ Սուրբ Հոգին եկավ, և Նա դեռ այստեղ է՝ ձեզ համար: Մեր մեղքն էր, որ Հիսուսին խաչը հանեց, ոչ թե մեր արդարությունը. մեր տկարությունն էր, որ բերեց Սուրբ Հոգուն մեզ մոտ, ոչ թե մեր կատարելությունը:

ԱՐԴՅՈ՞Ք ՄԵՆՔ ԱՐԺԱՆԻ ԵՆՔ

Շատ քրիստոնյաներ կարծում են, որ իրենք արժանի չեն կամ բավականաչափ լավը չեն, որ ընդունեն Սուրբ Հոգուն: Այո՛, ճիշտ է, որ մենք երբեք այնքան լավը չենք դառնա, որ արժանի լինենք Սուրբ Հոգուն, սակայն դրա կարիքը չկա: Իրականում, մենք նույնիսկ չենք կարող նման հույս ունենալ: Նա լիովին սուրբ է: Բայց հենց դա է պատճառը, որ մենք ունենք Նրա կարիքը, և հենց այդ պատճառով Նա եկավ:

ՀԻՍՈՒՍԻ ԱՐՅՈՒՆԸ ԵՎ ՄԻԱՅՆ ՆՐԱ ԱՐՅՈՒՆՆ Է ԱՐԺԱՆԻ դարձնում մեզ ստանալու Սուրբ Հոգու զորությունը և լեցունությունը (տե՛ս Գործք 1.8): Քրիստոսն ուղարկում է Հոգուն ոչ թե այն պատճառով, որ մենք հրաշալի քրիստոնյաներ ենք, այլ հենց այն պատճառով, որ մենք այդպիսին չենք: Աստծո սիրտը փափագում է, որ Իր

ստեղծած մարդիկ փրկվեն: Նա չի ստեղծել այս երկրի միլիարդավոր մարդկանց՝ որպես վառելիք դժոխքի կրակների համար, և ո՛չ էլ Քրիստոսից զուրկ հավիտենության համար: Նա ստեղծել է նրանց Երկինքը բնակեցնելու համար: Նա ուղարկում է Սուրբ Հոգուն՝ Պարակլետոսին կամ Օգնականին, իսկ մենք միայն Նրա ծառաները կամ գործակալներն ենք: Նա կարող է կատարել այդ առաջադրանքը, և Նա միայն ցանկանում է, որ մենք համագործակցենք Իր հետ:

ԻՍԿ ՄԵ՞Ր ՍՐԲՈՒԹՅՈՒՆԸ

> *Այն զորությունը, որով հրաշքներ և նշաններ են գործվում, չի բխում մեր սրբությունից. այն բխում է Սուրբ Հոգուց: Մենք կարող ենք տկար լինել և նույնիսկ ծախողվել, բայց դա առավել ևս ցույց է տալիս, որ պետք է ընդունենք Սուրբ Հոգուն: Նա չի տրվում մեզ, քանի որ մենք կատարյալ ենք. Նա տրվում է մեզ, քանի որ մենք կատարյալ չենք: ՄԵԾԱԳՈՒՅՆ ԳՈՐԾՈՆՆ ԱՅՆ է, ՈՐ ՄԵՆՔ ՈՒՆԵՆՔ ՆՐԱ ԿԱՐԻՔԸ: ԻՍԿ ԴՈՒՔ ՈՒՆԵ՞Ք ՆՐԱ ԿԱՐԻՔԸ:*

ԵԹԵ ԿՈՐՍՎԱԾՆԵՐԸ ՉԵՆ ԿԱՐՈՂ ՓՐԿՎԵԼ, ՔԱՆԻ ԴԵՌ ԵԿԵՂԵՑԻՆ բաղկացած չէ կատարյալ սրբերից, ուրեմն, ե՞րբ կփրկվեն նրանք: Կորսվածների փրկությունը չի կարող սպասել: Մենք պետք է առաջնորդենք նրանց դեպի Հիսուսը՝ լցնելով Երկինքը և դատարկելով դժոխքը: Աստված կատարել է Իր մեծագույն աշխատանքը և տվել է Իր մեծագույն զոհը, որպեսզի մարդիկ փրկվեն, և դա պայմանավորված չէ մեր կատարելության չափով: Նա չի սպասում, մինչև որ մենք քայլող կանոնների գիրք դառնանք: Մենք պետք է ձգտենք սրբության, և Աստվածաշունչը խրախուսում է, որ անենք դա, սակայն մարդկանց փրկությունը չի կարող սպասել, մինչև մենք կատարելության հասնենք: Աստծո ծրագրերը մշտապես ենթադրել են, որ Հոգու պարգևն է լինելու Մեծ հանձնարարականը կատարելու դրդապատճառը և զորությունը: Առանց դրա ոչինչ չի ստացվի:

ՀԻՆ ՄԱՐՏԿՈՑԸ

Կարևոր չէ, թե հոգևորապես որքան սառն եք դարձել և որքան եք հեռացել հավատքից: Նման հին մարտկոցի՝ ձեզանում մշտապես կա մնացորդային լիցք. մեկ անգամ Սուրբ Հոգով զորացված մարդը մշտապես զորացված է: Դուք միայն պետք է մաքրվեք Հիսուսի արյամբ և նորի պես կդառնաք:

ԻՄ ԸՆԿԵՐՆԵՐԻՑ ՄԵԿԸ ՄԱՔՐՈՒՄ ԷՐ ԻՐ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ՄԻ մետաղի կտոր գցեց կուտակված աղբի վրա: Այն տեսանելի և լսելի առկայծում առաջացրեց: Պարզվեց, որ այնտեղ մեքենայի հին մարտկոց էր դրված: Այդ մետաղի կտորը կարճ միացում էր առաջացրել մարտկոցի հաղորդալարերի միջև: Այդ մարտկոցի մեջ դեռևս մի փոքր լիցք էր մնացել, և նա դուրս հանեց այն աղբից՝ մտածելով, որ դեռ կարող էր օգտագործել: Ոմանց համար սա կարող է առակ լինել: Դուք հանձնվել եք և մտածում եք, որ զորությունը հեռացել է ձեզնից: Այն երբեք չի հեռանում: Մաքրե՛ք ձեր շուրջը գտնվող աղբը և կհայտնաբերեք, որ Սուրբ Հոգուն այդքան հեշտ չէ անջատել: Տարիներ շարունակ քարոզելով հզոր մարգարեական օծության ներքո՝ Եղիսեն մահացավ, բայց օծությունը մնաց նրա ոսկորների վրա: Երբ մի մահացած երիտասարդի պատահաբար գցեցին Եղիսեի գերեզմանը, նա հարություն առավ (տե՛ս Բ Թագ. 13.21): Ձեզ համար դեռ հույս կա:

ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ԵՎ ԳՈՂԳՈԹԱՆ

Սուրբ Հոգու նպատակն է իրական դարձնել Քրիստոսի խաչի հաղթանակները հավատացյալի կյանքում, Եկեղեցում և աշխարհում: Որպեսզի ունենաք Սուրբ Հոգու զորությունը, դարձրե՛ք Քրիստոսի խաչը ձեր գործը, իսկ փրկությունը՝ ձեր ուղերձը:

ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ԿԼԱՆՎԱԾ Է ԻՐ ԱՇԽԱՏԱՆՔՈՎ: ՆԱ ԻՐԱԳՈՐԾՈՒՄ է մարդկանց սրտերում այն, ինչ Հիսուսը կատարեց մեզ համար խաչի վրա: Դուք չեք կարող հեռացնել Նրան այդ առաջադրանքից՝ դրդելով զբաղվել որևէ այլ գործով, որը չի առնչվում Գողգոթայի հետ: Միայն փրկության հիմքի վրա կա ճշմարիտ հոգևոր զորություն: Հրաշքները՝ առանց խաչի, Սուրբ Հոգու հրաշքները չեն:

ԿՐԱԿԵ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

ԲԱԺԻՆ 3

ՍԱՍՏԻԿ ՓՉՈՂ ՔԱՄԻ. ՊԵՆՏԵԿՈՍՏԵ

ԿԱՏԱՐՎԱԾ ԽՈՍՏՈՒՄ

«Եվ երբ որ Պենտեկոստեի օրերը լրացան, ամենքը միաբան մեկտեղ էին: Եվ հանկարծակի երկնքից մի հնչյուն եղավ՝ սաստիկ փչող քամու պես, և լցրեց ամբողջ տունը, ուր նստած էին: Եվ երևացին նրանց բաժանված լեզուներ՝ ինչպես կրակից, և նստեց նրանցից ամեն մեկի վրա: Եվ ամենքը Սուրբ Հոգով լցվեցին և սկսեցին ուրիշ լեզուներով խոսել, ինչպես որ Հոգին նրանց խոսել էր տալիս»:

ԳՈՐԾՔ 2.1-4

ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԸ ՍԿՍՎԵԼ Է

Սուրբ Հոգու գալուստը փոխեց այս աշխարհի կարգը և թեքեց կշեռքի նժարները հօգուտ Եկեղեցու: Այնուամենայնիվ, կա մի կարևոր հանգամանք, որը պետք է իմանալ. միայն Աստծո ժողովուրդը կարող է օգտագործել այս ամենակարող զորությունը: Ոչ մի չար ու ապստամբ ժողովուրդ... միայն՝ մենք:

ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԸ ՍԿՍՎԵԼ Է: ԱՅՆ, ՈՐ ՀԻՍՈՒՍՆ ուղարկեց Սուրբ Հոգուն այս աշխարհ, տիեզերական նշանակություն ունեցող և անշրջելի իրադարձություն է: Այն ստեղծեց նոր հնարավորություններ, որոնք գերազանցում էին այն ամենը, ինչ հայտնի էր Ադամի օրերից: Այժմ մարդիկ կարող են ստանալ նոր կյանք՝ հարության կյանքը: Հարության կյանքը նման է ճառագայթման, ոչ թե միջուկային կործանարար ճառագայթման, այլ՝ հարության ճառագայթման: Նույն Հոգին, Որը հարություն տվեց Հիսուսին մեռելներից, հարություն կտա նաև մեզ՝ վեհ և զորավոր հոգևոր կյանքի համար (տե՛ս Հռոմ. 8.11):

ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ԳԱԼՈՒՍՏԸ

Փրկությունն այս աշխարհ բերելու համար Սուրբ Հոգին բնակվեց Տեր Քրիստոսում, բայց փրկության մասին քարոզելու համար Սուրբ Հոգին բնակվում է Եկեղեցում՝ տղամարդկանց և կանանց մեջ, երիտասարդների և տարեցների մեջ՝ բոլոր ազգերից և ցեղերից, որոնք մաքրված են Գառան թանկ արյամբ:

ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ԱԶԴԱՐԱՐԵՑ ԻՐ ԳԱԼՈՒՍՏԸ ԵՐՈՒՍԱՂԵՄ 120 մարդկանց կոկորդալիր գոչյուններով և հագավ աշակերտների մարմինը: Մենք Նրա տաճարներն ենք, Նրա բնակության հասցեն այս երկրի վրա: Այդ պահից աշակերտների կյանքն այլևս առաջվանը չէր: Նրանք սկսեցին տարածել Աստծո փառքը՝ խիզախությամբ, բժշկություններով, հրաշքներով, մարգարեական նշաններով և զորություններով, և մարդիկ հասկացան, որ նրանք Հիսուսի հետ էին (տե՛ս Գործք 2), քանի որ նրանց վրա էր նույն Սուրբ Հոգին, որով գործում էր Հիսուսը: Սուրբ

Հոգին բնակություն հաստատեց Եկեղեցում և այլևս չհեռացավ Եկեղեցուց: Այսօր նույն Սուրբ Հոգին մեզ հետ է, մեզանում է և գործում է մեր միջոցով:

ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆԸ ԲՈԼՈՐԻ ՀԱՄԱՐ Է

> *Սուրբ Հոգին չի տրվում ըստ վիճակահանության, որում ընտրվում են ընդամենը մի քանիսը: Սա բախտախաղ չէ, որում կան հաղթողներ և պարտվողներ: Աստված սպառազինում է նրանց, ում կանչում է, և Նրա զորությունն ավելի քան բավական է: Ոչ ոք դուրս չի մնում, և ոչ ոք մնացորդներ չի ստանում: Մի՛ որակազրկեք ձեզ այն դեպքում, երբ դուք արդեն ընդունված եք:*

ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉԸ ՊԱՐԶ Է, ԵՎ ԴՐԱՆՈՒՄ ՉԿԱ ՈՐԵՎԷ անորոշություն: Սուրբ Հոգու մկրտությունը նախատեսված չէ միայն մի քանի «Աստծո ընտրյալների» համար: Իրականում, բոլորս ենք Նրա սիրելիները: Պենտեկոստեի օրը 120 տղամարդ և կին Վերնատանն էին՝ Երուսաղեմում, և Գործք 2.3,4-ում գրված է. «Եվ երևացին նրանց բաժանված լեզուներ՝ ինչպես կրակից, և նստեց նրանցից ամեն մեկի վրա: Եվ ամենքը Սուրբ Հոգով լցվեցին...»: Սա ո՛չ պատահականություն էր, Ո՛Չ ԷԼ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ: Այդ 120-ից «ամեն մեկը» ստացավ, և «ամենը», այսինքն՝ բոլորը, լցվեցին: Հաշվի չառնվեց ո՛չ նրանց սեռը, ո՛չ տարիքը, ո՛չ ռասան, և ո՛չ էլ հասարակական դիրքը: Դուք որակավորված եք Սուրբ Հոգու մկրտության համար: ԱՅՆ Աստծո ԲՈԼՈՐ զավակների ՀԱՄԱՐ է, որոնք մաքրված են Նրա արյամբ, և այն վերաբերում է նաև ձեզ և ինձ: Աստծո զորությունն անսահմանափակ է. Նրա վառելիքը չի ավարտվում, և Նրա զորությունն ավելի քան բավական է Իր ամբողջ ժողովրդի համար՝ նրանց, ովքեր քաղց ու ծարավ ունեն:

ԿՐԱԿԵ ԼԵԶՈՒ՝ ՁԵՐ ԳԼԽԻՆ

> *Վերնատանը կար 120 մարդ: Ինչ-որ մեկը Երկնքում պետք է որ հաշված լիներ նրանց գլուխները, քանի որ նրանցից «ամեն մեկի» գլխին մեկական կրակե լեզու իջավ: Եթե դուք գլուխ ունեք, Աստված ունի կրակե լեզու ձեզ համար: Հենց հիմա դուք Նրա հաշվարկի մեջ եք: «Դուք զորություն կառնեք...» (Գործք 1.8): Միայն պատկերացրեք. ձեր գլուխը վայրէջքի գոտի է դառնում Սուրբ Հոգու կրակի համար: Նա իջնում է և բնակվում ձեզանում, որպեսզի այլևս չթողնի ձեզ:*

ՊԵՆՏԵԿՈՍՏԵԻ ՕՐԸ ՎԵՐՆԱՏԱՆԸ ԳՏՆՎՈՂ 120 ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻՑ յուրաքանչյուրը ընդունեց Սուրբ Հոգու մկրտությունը: Ոչ ոք չանտեսվեց: Այն միայն 12 առաքյալների համար չէր, որոնց մասին մենք գիտենք, և որոնք Հիսուսի հետ էին: Կային անհայտ մարդիկ, որոնք նույնպես ընդունեցին այս կրակը: Միգուցե նրանք հայտնի չէին, բայց հավատարիմ էին: Նրանք ներկա էին Վերնատանը և սպասում էին խոստմանը: Սուրբ Հոգին եկավ բոլորի վրա, և բոլորի գլուխների վրա մեկական կրակե լեզու իջավ. 120 կրակե լեզու՝ 120 մարդու համար: Եթե դուք ներկա լինեք, դուք կրակե լեզու կստանաք՝ ձեզ տրված հանձնարարության համար:

ԶԱՐԿԱՏՈՒ ՍԱՐՔ

> *Սուրբ Հոգին աստվածային ներդաշնակության մեջ է բերում մեզ և կարողություն է տալիս, որ քայլենք Աստծո ծրագրերին համընթաց՝ իրագործելով Նրա Թագավորության նպատակները: Հռոմեացիների 8.14-ում գրված է. «Որովհետև, որոնք որ Աստծո Հոգով են վարվում, նրանք Աստծո որդիներ են»:*

ԶԱՐԿԱՏՈՒ ՍԱՐՔԸ ՓՈՔՐԻԿ ՍԱՐՔ է, ՈՐԸ ԴՐՎՈՒՄ է ՄԱՐԴՈՒ կրծքավանդակի կամ որովայնի վրա՝ սրտի ռիթմի խանգարումները վերահսկելու համար: Ես հավատում եմ, որ Սուրբ Հոգու կրակն ամեն հավատացյալի կյանքում գործում է զարկատու սարքի պես: Այն

շտկում է անկանոն ռիթմերը և դարձնում է մեզ ներդաշնակ Աստծո սրտի հետ: Նրա՞ նպատակները, թե՞ մերը: Նրա՞ կամքը, թե՞ մերը: Իմ գլխավերևում գտնվող կրակե լեզուն, որի վրա գրված է իմ անունը, առաջնորդում է ինձ՝ համաձայն Աստծո սրտի զարկերի:

ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ՄԱՐՄՆԱՎՈՐՈՒՄԸ

> *Հայրն ուղարկեց Որդուն՝ մեզ փրկելու համար, և Նա տալիս է Իր Հոգուն՝ մեզ լցնելու և զորացնելու համար: Սուրբ Հոգին չի գալիս, քանի որ մենք արժանի ենք. Նա գալիս է Հոր սիրո և Որդու զոհի պատճառով, և քանի որ մենք Օգնականի և Մխիթարիչի կարիք ունենք: Կարիք չկա, որ ինչ-որ բան անենք. մենք պետք է պարզապես ընդունենք:*

ՊԵՆՏԵԿՈՍՏԵԻ ՕՐԸ ՆՐԱՆՔ ՍԿՍԵՑԻՆ ՔԱՐՈԶԵԼ ԱՎԵՏԱՐԱՆԸ

«Սուրբ Հոգով, որ Երկնքից ուղարկվեց» (Ա Պետրոս 1.12): Նա իջավ և մուտք գործեց այս երկիր, ինչպես որ Հիսուսը եկավ Երկնքից: «Խոսքը մարմին դարձավ» (Հովհաննես 1.14). Հիսուսը մուտք գործեց այս աշխարհ և մարդկային կերպարանք հագավ: Նմանապես, Սուրբ Հոգին զգեստավորվեց աշակերտներով՝ բնակվելով նրանց մեջ: Այս աշխարհը չէր կարող ընդունել Նրան, բայց հարյուրավոր մարդիկ սիրում էին Հիսուսին, և նրանցից 120-ը դարձան առաջին Հոգով լցված մարդիկ այս աշխարհում՝ տղամարդիկ, կանայք, առաքյալներ և աշակերտներ: Նրանք պարզապես միասին նստած էին. նրանք կանգնած չէին, ծնկի եկած չէին և չէին աղոթում: Նրանք պարզապես սպասում էին, ինչպես որ Հիսուսը պատվիրել էր իրենց. «Մի՛ հեռացեք Երուսաղեմից, այլ սպասե՛ք այն պարգևին, որն Իմ Հայրը խոստացավ» (Գործք 1.4, NIV): Քրիստոսը համբարձվեց Երկինք և խնդրեց Հորն ուղարկել Իր պարգևը՝ Սուրբ Հոգուն: Տասն օր անց Նա եկավ:

ՄԻԱՍԻՆ՝ ՈՐՊԵՍ ՄԵԿ

> *Պենտեկոստեի ժամանակ Աստված և մարդը միաբան ուրախացան խարիզմատիկ լեզվով: «Լեզուներով խոսելը» (Գործք 2) նշանակում է, որ Աստվածային Փեսան Իր գիրկն է առել Իր Հարսին (տե՛ս Կողոս. 2.9,10):*

ՄԵԾ ԲԱԺԱՆՈՒՄՆ ԱՍՏԾՈ ԵՎ ՄԱՐԴԿՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՀԱՍԱՎ գագաթնակետին Բաբելոնում, երբ Աստված իջավ ու խառնեց մարդկության լեզուները (տե՛ս Ծննդ. 11.1-9): Պենտեկոստեի օրը Աստված չեղյալ դարձրեց այն, ինչ արել էր Բաբելոնում՝ միավորելով մարդկանց այլևայլ լեզուներով: Աստված գնեց մեզ Իր արյամբ տարբեր ռասաներից, մշակույթներից և հասարակական խավերից (տե՛ս Հայտն. 5.9,10) և միավորեց մեզ, ոչ թե որ մենք կառուցենք աշտարակ՝ մարդկային փառքի և հանճարի համար, այլ՝ որ կառուցենք Աստծո թագավորությունը՝ Նրա փառքի համար: Սուրբ Հոգով մարդկությունը և Աստված ցնծացին՝ տոնելով այս մեծ վերամիավորումը միասնական օրհնյալ լեզվով:

ՄԱՐԳԱՐԵԱԿԱՆ ԱՎԵՏԱՐԱՆՉՈՒԹՅՈՒՆ

«Եվ Երուսաղեմում բնակված էին հրեաներ՝
Աստվածավախ մարդիկ՝ երկնքի տակի
բոլոր ազգերից: Եվ երբ որ այս ձայնը եղավ,
բազմությունը եկավ մեկտեղ և կիտվեց,
որովհետև ամեն մեկը լսում էր նրանց, որ իրենց
լեզվով խոսում էին: Եվ ամենքը հիանում էին
և զարմանում և իրար ասում էին. «Չէ՞ որ ահա
սրանք ամենքը, որ խոսում են, գալիլեացի են: Եվ
ինչպե՞ս մենք ամեն մեկս մեր լեզվով լսում ենք,
որ նրանում ծնված ենք... լսում ենք, որ նրանք
մեր լեզուներով Աստծո մեծամեծ բաները խոսում
են»: Եվ հիանում էին ամենքը և զարմանում, և
մեկը մյուսին ասում էին. «Սա
ի՞նչ պիտի լինի»»:

ԳՈՐԾՔ 2.5-12

ԿՐԱԿ ԵՎ ՄԱՐՄԻՆ

> *Հոգին կամենում է կապ հաստատել մեզ հետ: Պենտեկոստեի օրը Վերնատանը ներկա մարդկանց գլխավերևում գտնվող կրակե լեզուները կապ հաստատեցին նրանց մարմնեղեն լեզուների հետ, և արդյունքում տեղի ունեցավ հզոր մարգարեական, միջմշակութային և ավետարանչական պոռթկում, որը վերափոխեց հավատացյալներին և փոխեց ամբողջ աշխարհը:*

ՀԱԿՈԲՈՍ ԱՌԱՔՅԱԼԸ ՇԱՏ ԱԶԴԵՑԻԿ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ Է ԱՆՈՒՄ մարդկային լեզվի մասին: Նա ասում է, որ մենք անիծում ենք մարդկանց և օրհնում ենք Աստծուն նույն բերանով (տե՛ս Հակոբ. 3): Սակայն Պենտեկոստեի օրը, երբ հասարակ տղամարդիկ և կանայք անձնատուր եղան Աստծուն, նրանց լեզուները դարձան զորության և փրկության գործիքներ: Նրանց գլխավերևում գտնվող կրակե լեզուները կապ հաստատեցին նրանց մարմնեղեն լեզուների հետ: Երկնայինը միացավ երկրայինին, գերբնականը՝ բնականին: «...և սկսեցին ուրիշ լեզուներով խոսել, ինչպես որ Հոգին նրանց խոսել էր տալիս» (Գործք 2.4):

ՓՐԿԱՐԱՐ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ

> *Պենտեկոստեից հետո Աստված խոսում է մարդկանց միջոցով, ինչպես որ Սուրբ Հոգին նրանց ԽՈՍԵԼ է տալիս: Սա ավելին էր, քան ոգեշնչումը: Պենտեկոստեի օրը բոլոր հավատացյալները լցվեցին Սուրբ Հոգով: ԱՍՏԾՈ ՄԱՍԻՆ քարոզողները խոսում են ԱՍՏԾՈ ԶՈՐՈՒԹՅԱՄԲ: Սա «ԽՈՍՔԻ» դուռն է (տե՛ս Կոդոս. 4.3): Ճշմարիտ քարոզումը ՓՐԿՈՒԹՅՈՒՆ է ԲԵՐՈՒՄ: Սուրբ Հոգին օժտում է քարոզվող Խոսքն Իր զորությամբ՝ մարդկանց սատանայից փրկելու համար: «Նրա Խոսքն իմ սրտում նման էր վառվող կրակի...» (Երեմիա 20.9, KJV):*

ԳՐՎԱԾ Է, ՈՐ ՊԵՆՏԵԿՈՍՏԵԻ ՕՐԸ «ԵՐԵՎԱՑԻՆ ՆՐԱՆՑ բաժանված լեզուներ՝ ինչպես կրակից, և նստեց նրանցից ամեն մեկի վրա... և սկսեցին ուրիշ լեզուներով խոսել, ինչպես որ Հոգին նրանց

խոսել էր տալիս» (Գործք 2.3,4): Սուրբ Հոգին վերափոխեց աշակերտների աղոթքները, փառաբանությունը և քարոզը՝ ազդեցիկ դարձնելով: Աշակերտների փառաբանությունը՝ լցված զարմանքով, ավյունով և զորությամբ, հատեց ազգային և ռասայական սահմանները (տե՛ս Գործք 2.5-12): Կրոնական մարդիկ, որոնց երկրպագությունը սառը և ծիսական էր, առաջին անգամ վերապրեցին Հոգով զորացված երկրպագության և փառաբանության նոր ալիք: Պետրոսը քարոզեց անանախադեպ խիզախությամբ և վստահությամբ, և այդ օրը 3.000 մարդ փրկվեց ու ավելացավ եկեղեցուն:

ԱՍՏԾՈ ԷԹՆԻԿԱԿԱՆ ՇԱՀԱԳՐԳՌՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

> *Աստծո սրտում մշտապես եղել են և կլինեն ազգերը՝ բոլոր ժողովուրդները: Նա չի կամենում, որ որևէ մեկը կորչի, այլ՝ որ բոլորը ճանաչեն ճշմարտությունը (տե՛ս Բ Պետր. 3.9): Սուրբ Հոգին ցանկանում է զորացնել ձեզ, որ փոխեք ազգերը՝ ամեն ցեղին, ռասային և մշակույթին պատկանող մարդկանց: Գործե՛ք Աստծո համար, որտեղ էլ լինեք, բայց աղոթե՛ք համաշխարհային հունձքի համար: Մի՛ վախեցեք հատել մշակութային և աշխարհագրական սահմանները:*

ՊԵՆՏԵԿՈՍՏԵԻ ՕՐԸ, ԵՐԲ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ԹԱՓՎԵՑ, ՀՐԵԱ աշակերտները չխոսեցին եբրայերենով, այլ՝ բազմաթիվ հեռավոր երկրներից եկած մարդկանց լեզուներով (տե՛ս Գործք 2.8-12)՝ ցույց տալով Աստծո Հոգու էթնիկական շահագրգռվածությունը և ջնջելով ցանկացած կասկած, որ Նա սեր և հույս է տածում բոլոր ժողովուրդների հանդեպ: Պենտեկոստեի օրը կատարվեց Աստծո խոստումը՝ տրված Հովելի միջոցով, որ վերջին օրերում Նա թափելու էր Իր Հոգին բոլորի վրա (տե՛ս Հովել 2.28-32): Աստված կամենում է թափել Իր Հոգին բոլոր մարդկանց վրա: Սա համապատասխանում է Ավետարանին. «Որովհետև Աստված այնպես սիրեց աշխարհը, որ Իր միածին Որդուն տվեց, որ ամեն Նրան հավատացողը չկորչի, այլ՝ հավիտենական կյանք ունենա» (Հովհաննես 3.16): Տրամաբանական է, որ Աստված, Ով տվեց Իր Որդուն բոլորի համար, նույնպես տալու էր Իր Հոգուն բոլորի համար: Նա տվեց Իր Որդուն՝ մեր փրկության համար, և Իր Հոգուն՝ մեզ զորացնելու համար:

ՊԵՆՏԵԿՈՍՏԵԻ ԱՎԵՏԱՐԱՆԸ

«Եվ Պետրոսը վեր կացավ այն տասնմեկի հետ, իր ձայնը բարձրացրեց և նրանց հետ խոսեց... «Ո՛վ Իսրայելցի մարդիկ, այս խոսքերը լսե՛ք: Հիսուս Նազովրեցին՝ այն մարդը, որ Աստծուց ցույց տրվեց ձեզանում՝ զորություններով և հրաշքներով և նշաններով, որ Աստված Նրա ձեռքով արեց ձեր միջև, ինչպես դուք էլ գիտեք, Նրան, որ Աստծո սահմանված խորհրդով և կանխագիտությամբ մատնված էր, առաք անօրենների ձեռքով փայտի վրա բևեռած սպանեցիք, որին Աստված հարություն տվեց՝ մահվան ցավերը լուծելով, որովհետև կարելի չէր, որ Նա բռնվի նրանից... Ապաշխարե՛ք, և ձեզնից ամեն մեկը թող մկրտվի Հիսուս Քրիստոսի անունով՝ մեղքերի թողության համար, և Սուրբ Հոգու պարգևը կընդունեք»»:

ԳՈՐԾՔ 2.14,22-24,38

ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ՀԱՄԱՐՁԱԿՈՒԹՅՈՒՆԸ

> *Երբ Սուրբ Հոգին գալիս է ձեզ վրա, դուք ոչ միայն ստանում եք զորություն՝ հրաշքներ գործելու համար, այլև զորանում եք ֆիզիկապես, հոգեբանորեն և զգացմունքորեն: Հոգու մկրտությունը համարձակություն է տալիս. ամենաթույլ վախկոտը կարող է վերափոխվել՝ դառնալով ամենախիզախ և հերոսական անձը:*

ՀԻՍՈՒՍԻՆ ՏԵՍՆԵԼԸ ԵՎ ՆՐԱ ՁԱՅՆԸ ԼՍԵԼԸ ՉԷՐ, ՈՐ ԴԱՐՁՐԵՑ աշակերտներին համարձակ՝ այնպիսին, ինչպիսին նրանք հետագայում էին, քանի որ նրանցից ոմանք նույնիսկ կասկածեցին (տե՛ս Մատթ. 28.17, Մարկ. 16.13,14, Ղուկ. 24.41): Նրանք կողպում էին դուռը, երբ հավաքվում էին, քանի որ վախենում էին հրեաներից (տե՛ս Հովհ. 20.19): Նրանք գաղտնի էին հավաքվում և այնքա՜ն վախեցած էին, որ չէին կարողանում դուրս գալ փողոց և գոչել. «Հիսուսը կենդանի՜ է»: Սկզբում, երբ աշակերտները դեռ Գալիլեայում էին, նրանք նույնիսկ վերադարձան իրենց հին գործին՝ ձկնորսությանը (տե՛ս Հովհ. 21.3): Այնուամենայնիվ, այդ ամենը փոխվեց Պենտեկոստեի օրը, երբ նրանք ընդունեցին Սուրբ Հոգու մկրտությունը և համարձակությունը: Նրանք այլևս չէին վախենում հրեաների բազմությունից. փոխարենը՝ բազմությունները էին դողում նրանց առջև՝ աղաղակելով. «Ի՞նչ անենք, մարդիկ եղբայրնե՛ր» (Գործք 2.37): Իրականացավ այն, ինչի մասին ասում էր Հիսուսը. «Բայց դուք զորություն կառնեք, երբ որ Հոգին ձեզ վրա գա, և Իմ վկաները կլինեք... մինչև երկրի ծայրերը» (Գործք 1.8):

ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ՆՊԱՏԱԿԸ

> *Ի՞նչ նպատակով Հայրն ուղարկեց Սուրբ Հոգուն: Անկասկած, որպեսզի հնարավոր լիներ քարոզել Ավետարանը ամեն արարածի այս երկրի վրա:*

ՊՈՂՈՍՆ ԱՆՎԱՆՈՒՄ Է ԴԱ ԱՌԱՁՆՈՐԴԵԼ ԱՁԳԵՐԻՆ ԴԵՊԻ Ավետարանի հնազանդությունը (տե՛ս Հռոմ. 1.5): Քրիստոսին համակող փափագը և Նրա գործն էր «որոնել և ապրեցնել կորածին» (Ղու-

կաս 19.10): Հիսուսն ընդամենը հրաշագործ չէր: Նախևառաջ, Նա Փրկիչ էր, և Նա Փրկիչ է նաև այսօր: Փրկության աշխատանքն էր, որ Խաչը բարձրացրեց Նրան: Դա Նրա երկրային կյանքի վերջնական նպատակն էր. ոչ թե սոցիալական բարօրությունը՝ պարզապես բազմություններին կերակրելը, այլ՝ մարդկության փրկությունը: Սա Նրա առաջնահերթությունն էր: Ցանկացած խոսակցություն «ավելի մեծ գործերի» մասին պետք է համապատասխանի Նրա «մեծագույն գործին», որը կորսվածներին փրկելն է: Փրկությունը մեծագույն աշխատանքն է և մեծագույն հրաշքը, որն Աստված երբևէ նախաձեռնել է:

ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ՈՐՊԵՍ ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ՄԵԿՆԻՉ

> *Սուրբ Հոգին լուսավորում է Սուրբ գիրքը՝ հասկացնելով Աստծո Խոսքը և հայտնելով թաքնված խորհուրդները: Առանց Աստվածաշնչի Հեղինակի լույս սփռելու՝ մենք կարող ենք միայն ենթադրություններ անել:*

ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ՄԵԿՆՈՒԹՅԱՆ ՈՍԿԵ ԿԱՆՈՆՆ ԱՅՆ Է, ԻՆՉ

Պողոսը գրեց Ա Կորնթացիների 2.12,13-ում. «...որ ճանաչենք այն բաները, որ Աստծուց տրվեցին մեզ, որն էլ խոսում ենք՝ ոչ թե մարդկային իմաստության սովորած խոսքերով, այլ Սուրբ Հոգու սովորեցրածներով՝ հոգևորները հոգևորների հետ համեմատելով»: «Հոգևորները» բառն այս խոսքում նույն բառն է, որը թարգմանվել է որպես «հոգևոր պարգևներ» Ա Կորնթացիների 12.1-ում՝ «պնևմատիկա» բառը: Աստվածաշունչն անկարելի է հասկանալ ենթադրություններ անելով: Պարզապես օգտվե՛ք Աստվածաշնչի Մեկնիչի՝ Սուրբ Հոգու օգնությունից:

ՈՉ ՄԻ ԿՈՄԻՏԵ

> *Սուրբ Հոգով լցված մեկ մարդը շատ ավելի լավ է, քան 100 կոմիտեներ, որոնք, ինչպես ինչ-որ մեկն ասաց, «ժամեր են վատնում՝ րոպեական որոշումների համար»: Երբ Աստված սիրեց այս աշխարհը, Նա կոմիտե չկազմեց, այլ ուղարկեց Իր Որդուն, իսկ Նրա Որդին ուղարկեց Սուրբ Հոգուն (տե՛ս Հովհ. 3.16, Ղուկ.*

> *24.49): Քրիստոսն ասաց, որ հավատացյալներն այս աշխարհի լույսն են, բայց անհրաժեշտ է, որ Սուրբ Հոգին միացնի մեր լույսը: Արդյո՞ք դուք լույս եք տալիս:*

ՊԵՆՏԵԿՈՍՏԵԻ ՕՐԸ ՊԵՏՐՈՍԸ ՈՏՔԻ ԿԱՆԳՆԵՑ, ԹԱՓ ՏՎԵՑ իր ամոթն ու վախերը և ներկայացրեց միակ աստվածաբանությունը, որը գիտեր՝ Հիսուսին, և այն էլ՝ խաչվածին: Այսպիսով, փրկվեց 3.000 մարդ տարբեր երկրներից՝ առանց որևէ կոմիտեի, բյուջեի և ֆինանսական խորհրդի նիստի: Ահա և Սուրբ Հոգու զորությունը. Նա հրապարակավ կենդանացնում է Ավետարանը և հանդիմանություն է բերում: Եթե ավելի շատ ուշադրություն դարձնենք Սուրբ Հոգուն, մենք ավելի քիչ ժամանակ կտրամադրենք կոմիտեներ կազմելուն և ավելի շատ արդյունքներ կտեսնենք:

ԿՐԱԿԵ ՀԱՄԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«Հիսուսն էլ պատասխանեց... նրանց... «Ոչ ոք չի կարող Ինձ մոտ գալ, եթե Հայրը, Ով Ինձ ուղարկեց, չքաշի նրան... Հոգին է կենդանացնողը, մարմինը ոչինչ օգուտ չի տալիս. այն բանը (կամ՝ խոսքերը), որ Ես ձեզ հետ խոսեցի, հոգի է և կյանք է»»:

ՀՈՎՀԱՆՆԵՍ 6.44,64

ԱՎԵՏԱՐԱՆԸ ԵՎ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ. ԿՐԱԿԵ ՀԱՄԱԴՐՈՒԹՅՈՒՆ

> *Ամեն ձևով քարոզե՛ք Ավետարանի ճշմարտությունը: Չկա ավելի պատվելի առաջադրանք և ավելի լավ հանձնարարական, քան սա, բայց առանց Սուրբ Հոգու զորության՝ այն վերածվում է հասարակ խոսքերի, փաստերի, պատմության և մեկնության: Նման Ավետարանը նույնքան անօգուտ է՝ մարդանց փրկելու համար, որքան թերթը՝ ռելսերից դուրս գտնվող մարդատար գնացքի մեջ:*

ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ՀՐԱՇԱԼԻ Է, ԲԱՅՑ ԱՅՆ ԻՆՔՆԻՆ ՄԱՀԱՑԱԾ Է՝ նման ցախատանը դրված ածխի: Մեզ պետք է ավելին, քան ուղղադավան աստվածաշնչյան ուսուցումը: Ածուխն օգտագործում է իր ներուժը միայն կրակի հետ: Անհրաժեշտ է Սուրբ Հոգու կրակը՝ ճշմարտությունը բոցավառելու համար (տե՛ս Ղուկ. 24.32): Հիսուսն ասաց. «Այն բանը (կամ՝ խոսքերը), որ Ես ձեզ հետ խոսեցի, հոգի է և կյանք է» (Հովհաննես 6.64): Այն ուղերձը, որը քարոզում էր Հիսուսը՝ մկրտված Սուրբ Հոգով, ավելին էր, քան հասարակ խոսքերը. այն կրում էր կյանք և համոզվածություն, և 2.000 տարի անց այն դեռ փոխում է միլիարդավոր մարդկանց կյանքերը աշխարհով մեկ:

ԱՎԵՏԱՐԱՆԻ ԳԱՂՏՆԻՔԸ

> *Սուրբ Հոգին զորացնում է Ավետարանը՝ նման այն բանին, թե ինչպես է էլեկտրականությունը ուժ տալիս ջրամատակարարման կայանին: Այնուամենայնիվ, մենք չենք առաջացնում Սուրբ Հոգու զորությունը աղոթքով, քրտինքով, տառապանքով, ժամանակով, ջանքերով, բարի գործերով կամ ցանկացած այլ բանով: Հայրը տալիս է մեզ Սուրբ Հոգուն՝ որպես պարգև, ոչ թե վարձատրություն կամ աշխատավարձ՝ այն, ինչ մենք վաստակում ենք:*

ՎԱՂՈՒՑ ԱՐԴԵՆ ԺԱՄԱՆԱԿՆ Է, ՈՐ ՀԱՍԿԱՆԱՆՔ, ԹԵ ՈՎ Է ՍՈՒՐԲ Հոգին. Նա Ավետարանի զորության գաղտնիքն է: Մենք չենք ստանում Հոգուն՝ ճիգ գործադրելով և աշխատելով, այլ պարզապես թույլ տալով Նրան մուտք գործել մեր կյանք: Նրա զորությունը չի գալիս մեր աջակցությամբ. այն պարգև է Աստծուց (տե՛ս Ղուկ. 11.13): Ոչ մի բարի գործ անհրաժեշտ չէ դրա համար: Եթե մենք կարողանայինք այնքան լավը դառնալ, որ արժանի լինեինք Սուրբ Հոգուն, մենք չէինք ունենա Նրա կարիքը:

ՁԵՌՔ՝ ՁԵՌՆՈՑԻ ՄԵՋ

> *Առանց Սուրբ Հոգու զորության՝ Ավետարանը դատարկ և անարդյունավետ է: Այն ունի աստվածապաշտության ձև, բայց զուրկ է փրկելու և վերափոխելու զորությունից:*

ԱՎԵՏԱՐԱՆԸ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԳՅՈՒՏ ԿԱՄ ԱՌԱՁԱՌԱՆՔ ՉԷ: Աստված է Ավետարանի Հեղինակը, և Նա է հանձնարարել մարդկանց՝ պատմել այն ամբողջ աշխարհին: Սուրբ Հոգին նման է ձեռքի՝ քարոզվող Ավետարանի ձեռնոցի մեջ: Ավետարանը պետք է քարոզվի աստվածային օծության ներքո, և այդ ժամանակ մենք կիրագործենք ցանկացած նպատակ: Զորությունն է, որ ապահովում է Մեծ հանձնարարականի կատարումը:

ԿՐԱԿԻ ՓՈԽԱՆՑՈՒՄ

> *Ավետարանը ոչ պակաս, քան Աստծո ձայնն է: Երբ Ավետարանը քարոզվի Հոգով լցված մարդու կողմից կամ կրակով լեցուն եկեղեցում, մարդիկ կլսեն: Նման Ավետարանը փոխանցում է Աստծուց եկող կրակը: Առանց Ավետարանի և առանց կրակի՝ որքան էլ հարմարավետ կամ տրամադրող լինի միջավայրը, ունկնդիրները սառը և մահացած կմնան: Արտաքին շուքը զորություն չէ: Հոգին է կենդանացնում խոսքը (տե՛ս Հովհ. 6.63):*

ՍԱ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ՁԱՀԸ ՉԷ, ԱՅԼ՝ ՀՈԳՈՒ ՎԱՌՎՈՂ ՁԱՀԸ, ՈՐԸ փոխանցվել է հավիտենությունից ժամանակի մեջ, և փոխանցվում է սերնդեսերունդ: Այն կրակը, որը տեսավ Մովսեսը, հանգչեց աշակերտների վրա. սկսած վառվող մորենուց (տե՛ս Ելից 3.1,2), այն վառեց Սողոմոնի զոհասեղանը (տե՛ս Բ Մնաց. 7.1) և իջավ աշակերտների գլխին (տե՛ս Գործք 2.3): Աստծո կրակը՝ բոցեղեն լեզուներով, ցատկում էր ամեն մեկի գլխին. դա հասարակ տեսարան կամ դրսևորում չէր, այլ՝ այնպիսի վերապրում, որում Աստված և մարդը միասին են: Նա կրակի և այրման Աստված է: Մենք ապրում ենք հոգևորապես խավար և ցուրտ աշխարհում: Չսառչելու լավագույն միջոցը Սուրբ Հոգով վառվելն է: Աստված կվառի ձեր սրտի զոհասեղանի կրակը, որպեսզի դուք Նրա կրակը տարածող դառնաք:

ԼՈՒՅՍ՝ ՀԵԹԱՆՈՍՆԵՐԻՆ

«Եվ ասում է. «Դա դեռ քիչ է, որ Դու Իմ ծառան լինես՝ Հակոբի ցեղերը վերականգնելու համար և Իսրայելի ազատվածներին ետ դարձնելու համար. Ես Քեզ ազգերի լույս էլ եմ շինել, որ Դու Իմ փրկությունը լինես մինչև երկրի ծայրը»»:

ԵՍԱՅԻ 49.6

ԱԶԳԵՐԻ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆԸ

> *Ազգերի բժշկության համար անհրաժեշտ է քարոզել Աստծո Խոսքը՝ կենդանի Աստծո Հոգու զորությամբ: Բայց դա սկսվում է մեզնից: Մենք պետք է գնանք, սակայն պետք է հավատանք Խոսքին, ունենանք Հոգու զորության հպումը և ինքներս ազատ լինենք: Երբ կրակոտ լինենք, մենք կդառնանք Աստծո բժշկարար գործիքները և, ինչպես Բարի Սամարացին, այս աշխարհի փոշոտ ճանապարհներին կբժշկենք սատանայի զոհերին:*

«ՈՒՐԵՄՆ ՀԱՎԱՏՔԸ ԼՍԵԼՈՒՑ Է, ԵՎ ԼՍԵԼԸ՝ ԱՍՏԾՈ ԽՈՍՔԻՑ» (Հռոմեացիների 10.17): Երբ Սուրբ Հոգին լուսավորում է Սուրբ գիրքը ձեզ համար, այն հավատքի կայծ է առաջացնում և դրդում է վարվել Խոսքի հիման վրա: Իմ հավատքը գործեց, երբ Սուրբ Հոգին սկսեց օգտագործել աստվածաշնչյան հատվածներ՝ նման վառվող նետերի, որոնք բոցավառեցին իմ միտքը: Օրինակ՝ Հայտնություն 22.2-ում գրված է, որ կյանքի ծառն ունի տերևներ՝ ազգերի բժշկության համար: Աստծո Խոսքը դարձավ իմ կյանքի ծառը, իսկ այդ գրքի տերևները՝ երկնային դեղամիջոց: Փա՛ռք Աստծուն:

ՀԱՂԹԵԼ ՀԱՂԹՈՂՆԵՐԻՆ

> *Հիսուսն ասաց. «Ես եկա, որ կրակ գցեմ երկրի վրա» (Ղուկաս 12.49): Նրա հետևորդները որսացին այդ կրակոտ հավատքը. «Նրանք էլ դուրս գնացին, ամեն տեղ քարոզում էին, և Տերը գործակցում էր նրանց հետ» (Մարկոս 16.20): Նրանք կրակով լցրին խավար և սառը հեթանոսական աշխարհը և հալեցրին Հռոմեական կայսրության երկաթե արծվի խորհրդանիշը՝ հաղթելով հաղթողներին:*

ԿԱՅՍՐԵՐԸ ԾԱԼԵՑԻՆ ԻՐԵՆՑ ԾՆԿՆԵՐԸ ՀԻՍՈՒՍԻ ԱՌՋԵՎ, ՈՒՄ նրանք խաչել էին՝ որպես հանցագործի: Ոչինչ չէր կարող հանգեցնել նման արդյունքի՝ բացի Աստծո զորությունից: Գաղտնիքն այն էր, որ խոնարհ մարդիկ, ովքեր մկրտված էին կրակով, վառվում էին Աստծո

համար: Այդ ժամանակ նրանք կրակ ունեին, բայց մի՞թե այսօր այդ կրակը միայն երևում է մոմերի միջոցով: Մի՞թե դա է առաքելական ժառանգությունը: Եթե մենք պնդում ենք, որ առաքյալների ժառանգորդներն ենք, այդ պնդումը վավերացնելու համար մեր և նրանց միջև պետք է նմանություններ լինեն՝ գեղազարդ հանդերձներից բացի: Մեզ անհրաժեշտ է ճշմարիտ առաքելական թիկնոցը: Այսօր շատերը եկեղեցի են գնում միայն ծնվելու, ամուսնանալու և թաղվելու համար: Սակայն մահացած և չոր առարկաները հեշտորեն են բռնկվում: Պետրոսն ասաց. «Որովհետև ձեզ և ձեր որդիների համար է այս խոստումը, և այն բոլոր հեռավորների համար...» (Գործք 2.39): Մենք համապատասխանում ենք այս որակավորմանը. մենք հեռավորներն ենք:

ԱԶԳԵՐԻ ԱՍՏՎԱԾ

> *Ձեր կոչումը մեծապես գերազանցում է ձեր կյանքը և ձեզ շրջապատող մարդկանց: Այն վերաբերում է այս աշխարհին: Հունձքի դաշտերն ազգերն են: Թույլ մի՛ տվեք, որ ձեր միջավայրը հանգցնի ձեր տեսիլքը և կրակը: Բացե՛ք ձեր աչքերը, որպեսզի տեսնեք ավելին, քան ձեզ շրջապատող աշխարհը և ձեր անձնական խնդիրները: Աշխարհը հասել է և պատրաստ է հունձքի (տե՛ս Ղուկ. 10.2):*

ՀԻՍՈՒՍԻ ՄԵՌԵԼՆԵՐԻՑ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԱՌՆԵԼՈՒՑ ՇԱՏ ԺԱՄԱՆԱԿ անց աշակերտները պահպանել էին հրեական աշխարհայացքը: Նրանք համարում էին, որ իրենց նոր հավատքը պատկանում էր միայն Իսրայելին: Նրանք նույնիսկ հարցրին Տիրոջը Նրա համբարձումից կարճ ժամանակ առաջ. ««Տե՛ր, այս ժամանակո՞ւմ ես կանգնեցնում Իսրայելի թագավորությունը»: Եվ Նա ասաց նրանց. «Ձեր բանը չէ գիտենալ ժամերը և ժամանակները, որ Հայրն Իր իշխանությունում դրեց: Բայց դուք զորություն կառնեք, երբ որ Հոգին ձեզ վրա գա, և Իմ վկաները կլինեք Երուսաղեմում և ամբողջ Հրեաստանի և Սամարիայի մեջ, մինչև երկրի ծայրերը»» (Գործք 1.6-8): Հիսուսը կամենում էր, որ Իր աշակերտները հասնեին ամբողջ աշխարհին, ոչ թե միայն Հրեաստանին: Նրանց սկզբնակետը Երուսաղեմն էր, բայց նրանց նշանակման վայրն ազգերն էին:

ԿՐԱԿԵ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

ԲԱԺԻՆ 4

ԸՆԿՂՄՎԱԾ՝ ԿՐԱԿԻ ՄԵՋ. ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆԸ

ՎԵՐՋԻՆ ԱՆՁՐԵՎԸ

«Այն օրը դուք կճանաչեք, որ Ես Իմ Հոր մեջ եմ, և դուք՝ Ինձանում, և Ես՝ ձեզանում»:

ՀՈՎՀԱՆՆԵՍ 14.20

ԼԻՈՎԻՆ ԱՆԶՈՒԳԱԿԱՆ

> *Սուրբ Հոգու մկրտությունն անկարևոր, հասարակ կամ պատահական չէ: Այն պարզապես կրոնական ժեստ չէ, որի նպատակն օրհնություն հռչակելն է: Այն անզուգական է: Այն Հիսուս Քրիստոսի բացառիկ խոստումն է, և միայն Նա է նման խոստում տվել: Այն հրաշալի է և մեր կյանքում կատարած Նրա աշխատանքի անժխտելի ապացույցն է: Հիսուսը «Հոգով Մկրտողն է» (Մատթեոս 3.11): Սա Նրա ամենաերանելի գործերից մեկն է:*

ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐՀՐԴԱՆՇԱԿԱՆ ԿԱՄ ԾԻՍԱԿԱՆ չէ. այն պարզապես եկեղեցական բառապաշարի մի մաս չէ, որն օգտագործվում է ժամերգության կամ պաշտամունքի ժամանակ: Այն Սուրբ Հոգու զորությունն է, որն ուղարկվել է, որպեսզի զորացնի եկեղեցին՝ իր երկրային առաջադրանքը կատարելու համար: Առանց դրա՝ մարդիկ չեն կարող փրկվել՝ անկախ մեր ջանքերից: Առանց Սուրբ Հոգու՝ ոչ մի տևական փոփոխություն չի կարող տեղի ունենալ եկեղեցում և եկեղեցու միջոցով: Առանց Սուրբ Հոգու մկրտության՝ եկեղեցին կպարտվի այս աշխարհի խավարից և թշնամու հնարներից (տե՛ս Հովհ. 16.13):

ՔՇԵԼ-ՏԱՆԵԼ ՄԵՐ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԸ

> *Միգուցե մենք երգենք. «Բարի գալո՛ւստ, Սո՛ւրբ Հոգի», բայց Նա չի գալիս մեր հրավերի պատճառով: Նա հյուր կամ օտարական չէ, որին կարելի է հրավիրել մեկ-երկու ժամով: Նա Երկնքի Տերն է, և Նա է հրավիրում մեզ Իր ներկայության մեջ: Նա գտնում է Իր բնական միջավայրն այնտեղ, որտեղ կա հավատք և Աստծո Խոսք:*

ԱՌԱՔՅԱԼՆԵՐԸ ՉԷԻՆ ԱՂՈԹՈՒՄ ՀՈԳՈՒ ՀԱՄԱՐ, ԲԱՅՑ ՆԱ ԵԿԱՎ և գրավեց այդ վայրը: Ցանկացած մթնոլորտ, որտեղ այդ պահին նրանք գտնվում էին, քշվեց-տարվեց «սաստիկ փչող քամու» կողմից, որը ներխուժեց այդ վայրը (տե՛ս Գործք 2.2): Հոգին երկնքի մթնո-

լորտն է, և Նրա հետ երկինքը գալիս է մեզ մոտ: Նա *պնևման* է՝ երկնքի քամին, որը քշում-տանում է մեր ավանդույթները և լճացած վիճակները, և թարմություն է բերում բոլորի վրա:

ԿԱՄՈՒՐՁ՝ ԵՐԿՆՔԻՑ ԴԵՊԻ ԵՐԿԻՐ

> *Սուրբ Հոգով մկրտվել՝ նշանակում է լինել վերջին անձրևի շարունակական ընթացքի մեջ (տե՛ս Հովել 2.23,28,29): Այն նշանակում է կապակցել երկինքը երկրի հետ՝ օրհնությունների կենարար գետերով, պտուղ բերել և վերջ տալ երաշտին:*

ՀՈԳՈՎ ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄՈՒՐՁ է ԵՐԿՆՔԻ և ԵՐԿՐԻ ՄԻՁԵՎ՝ յուրաքանչյուրի համար: Միքիա 5.7-ում գրված է, որ Տերն իջնում է՝ «այն շաղի (կամ՝ անձրևի) պես, որը գալիս է խոտի վրա»: Միգուցե պատահել է, որ քաղաքից դուրս լինեք և հեռվից անձրևախառն փոթորիկ տեսնեք: Երկինքը մանուշակագույն է՝ լի անձրևային ամպերով: Ամպերից ներքև անձրևի պարիսպ է, որը երկնքից երկիր է հասնում: Անձրևը կապակցում է ամպերը գետնի հետ, կամ երկինքը՝ երկրի հետ: Այդ ամպերը (երկինքը), թափվող անձրևը և երկրի վրայի հոսող ջրերը բաղկացած են միևնույն նյութից: Երկինքը և երկիրը միացած են: Երբ մենք լցվում ենք Հոգով, դա «վերջին անձրևն» է:

ԳԵՐԲՆԱԿԱՆ ԿԱՊ

> *Երբ մկրտվում ենք Հոգով, մենք վերապրում ենք նույն մթնոլորտը, որը ճաշակելու ենք Երկնքում: Սուրբ Հոգին Սուրբ Տերն է, և Նա հայտնում է Աստծուն և՛ գերբնական, և՛ նյութական իրականությունների մեջ: Սուրբ Հոգու մկրտությունը կապակցում է մեզ երկնքի հետ այնպես, որը մենք երբևէ չենք վերապրել:*

ԱՍՏԾՈ ԳՈՐԾԵՐԸ ՄՇՏԱՊԵՍ ՀԱՅՏՆՎԵԼ ԵՆ ԱՅՍ ԵՐԿՐՈՒՄ ՍՈՒՐԲ Հոգու միջոցով: Նա է կապը երկնքի և երկրի միջև: Երբ մենք մկրտվում ենք Հոգով, Ավետարանը հասնում է այս երկրի զավակներին: Մենք հայտնվում ենք Աստծո վերջին անձրևի փոթորկալի ամպերի մեջ:

Մենք թրջվում ենք Հոգու ջրերով: Ուր էլ, որ գնանք Վերնատանը լինելուց հետո, մենք կտանենք դրա նշանները և ապացույցները: Աստված նորովի մեզ հետ կլինի, և մեզ համար դժվար կլինի թաքցնել Նրա ներկայության նշանները: Մեր լույսը կլուսավորի նրանց, ում կհանդիպենք մեր ճանապարհին: Եվ մենք միայնակ չենք լինի, քանի որ մեր ետևից եկող մարդիկ կունենան երկնքի հետ գերբնական կապի նույն նշանները:

ԵՐԿԻՆՔԸ ԲԱՑ Է ՄՆՈՒՄ

> *Երկնքի դուռը բաց է և բաց է մնալու: Ձեր աղոթքները և պատասխանները չեն կարող խոչընդոտվել: Դուք ունեք ազատ մուտք շնորհքի աթոռի մոտ. «Ուրեմն, համարձակությամբ մոտենանք... որ ողորմություն ընդունենք և շնորհք գտնենք՝ պատշաճ ժամանակին օգնելու» (Եբրայեցիների 4.16): Այլևս չկա ոչ մի խոչընդոտ:*

Ե՛Վ ԴԱՎԻԹԸ, Ե՛Վ ԵՍԱՅԻՆ ԱՂՈԹՈՒՄ ԷԻՆ. «ՏԵ՛Ր, ՃԵՂՔԻ՛Ր (կամ՝ պատռիր) երկինքը և վա՛յր իջիր (տե՛ս Սաղմ. 144.5, Եսայի 64.1): Դա տեղի ունեցավ, երբ եկավ Հիսուսը: Քրիստոսը պատռեց ու բացեց երկինքը՝ գալով մեզ մոտ: Դրանից հետո Նա վերադարձավ նույն ճանապարհով՝ երաշխավորելով, որ երկինքը մշտապես բաց կմնա: Երկինքը հավիտյան պատռվել է, և այն չի կարվել ո՛չ սատանայի, ո՛չ մեկ այլ արարածի ասեղով: Սուրբ Հոգին իջավ այդ բաց երկնքով՝ որպես վերջին անձրև: Երկինքն այլևս պղնձի նման չէ: Դժոխքը չի կարող արգելքներ դնել Աստծո թագավորության վրա և շրջափակել այն: Դժոխքն ի զորու չէ սահմանափակել Աստծո քաղաքացիներին: Բացվել է նոր և կենդանի ճանապարհ, որն անվերահսկելի է թշնամու համար:

ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

«Քամին որտեղ ուզում է՝ փչում է, և նրա ձայնը լսում ես, բայց չգիտես, թե որտեղից է գալիս, և որտեղ է գնում: Այսպես է ամեն Հոգուց ծնվածը»:

ՀՈՎՀԱՆՆԵՍ 3.8

ՍԱՓՈՐԻ ՄԻՋԻ ՕԴԸ ՔԱՄԻ ՉԷ

Սաստիկ փչող քամին ներխուժեց Վերնատուն Պենտեկոստեի օրը և կանգ չառավ: Պենտեկոստեից հետո Սուրբ Հոգին մշտապես շարժվում և գործում է՝ բերելով թարմություն և զորություն Եկեղեցուն: Աստծո Հոգին սկսեց Իր պայքարը շատ դարեր առաջ և երբեք չնահանջեց: Նա չի «այցելում» ժամանակ առ ժամանակ. Նա եկել է՝ մշտապես բնակվելու համար:

ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՊԵՆՏԵԿՈՍՏԵ: Ի՞ՆՉ է ԱՅՆ: ԱՅՆ ՍԿՍՎԵՑ, ԵՐԲ ՀԻՍՈՒՍԸ ՀԱՄԲԱՐՁՎԵՑ՝ մտնելով փառքի դարպասներով: Նա բաց թողեց դրանք, և ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ԻՋԱՎ՝ անցնելով նույն դարպասներով (տե՛ս Գործք 7.55): Փչեց ուժգին քամի՝ սաստիկ փչող քամին: Այն քշեց-տարավ լճացած կրոնական ավանդույթների խեղդուկ օդը: Վերնատանը օդորակիչի կարիք չկար. այն լցված էր հարության զարթոնքի թարմությամբ:

Սուրբ Հոգին մշտապես շարժվում և գործում է: «Հոգի» բառը Նոր կտակարանում *«պնևման»* է, որը նշանակում է քամի կամ շունչ՝ օդ, որը շարժվում է: *«Պնևմա»* ՉԻ նշանակում կանգնած օդ: Դուք երբևէ լսե՞լ եք այնպիսի քամու մասին, որը չի փչում: Քամին մշտապես շարժման մեջ է: Ես երբեք չեմ լսել «հանդարտ փոթորկի» կամ «հանգիստ մրրիկի» մասին: Սափորի մեջ գտնվող օդը քամի չէ: Եթե Սուրբ Հոգին քամի է, Նա մշտապես շարժման մեջ է, կամ էլ՝ Սուրբ Հոգին չէ: Երբ մարդիկ խնդրում են Սուրբ Հոգուն շարժվել, նույնն է, թե՝ խնդրեք կրակին տաք լինել: Աստվածաշնչին հայտնի չէ գաղափարը չշարժվող Սուրբ Հոգու մասին: Սուրբ Հոգին մշտապես նշանակում է աստվածային գործողություն: Նա Աստվածային Գործիչն է այս երկրի վրա:

ԳԵՐԻՇԽՈՂ ՔԱՄԻՆԵՐ ԵՐԿՆՔԻՑ

Եղանակի տեսության մեկնաբանները խոսում են գերիշխող քամիների մասին: Քամիները փոխվում են, բայց մշտապես գոյություն ունի քամու սովորական կամ հիմնական ուղղություն, օրինակ՝ արևմտյան քամիները: Օդային հոսանքները բնականորեն փչում են այդ ուղղությամբ: Նույն կերպով, գոյություն ունի գերիշխող քամի երկնքից: Սուրբ Հոգին մշտապես փչում է փառավոր թարմությամբ, ցերեկ ու գիշեր՝ ուղղելով Իր հոսանքները դեպի մեզ:

ԲՈԼՈՐՍ ԵՆՔ ԱՍՈՒՄ, ՈՐ ԱՍՏՎԱԾ ՇԱՐԺՎՈՒՄ Է ՄԵԶ ՀԱՄԱՐ՝ Ի պատասխան մեր աղոթքների: Դա ճիշտ է, սակայն գոյություն ունի ևս մեկ բան: Նա մշտապես է շարժվում: Աստված շարժվում է ԴԵՊԻ մեզ ամեն ժամանակ՝ օրհնության և զորության գերիշխող հոսանքներով: Աստված չի գալիս մեզ մոտ պոռթկումներով՝ հանկարծակի պայթյունների պես (կիրակի առավոտյան կամ ուրբաթ երեկոյան աղոթքի հավաքույթի ժամանակ): Նրա գերիշխան կամքը բոլորովին այդպիսին չէ: Նրա կամքն այն է, ինչ սովորեցնում է Աստվածաշունչը. Աստված մի օր թույլ չէ, մի օր՝ ուժեղ: Մեզ պետք չէ ճնշաչափ կամ ջերմաչափ՝ Աստծո ուժը գնահատելու համար: Այնպես չէ, որ Նա միայն երբեմն է մեզ հետ՝ արթնության կամ բժշկության համար. Նա մշտապես մեզ հետ է, սակայն Նրա մասնակցությունը կախված է մեզնից, ոչ թե Նրանից: Նա երբեք չի փոխվում: Նա չունի տրամադրություններ: Աստծո մեջ չկա անորոշություն. մեր հավատքն է, որ պետք է հաղթահարի անորոշությունը:

ՈՉ ՄԻ ԶՈՐՈՒԹՅԱՆ ՊՈՌԹԿՈՒՄ

Նոր կտակարանը որևէ կերպով չի դասակարգում Աստծո գործերը: Աստվածաշունչը չի խոսում Աստծո հատուկ «շարժումների», զորության պոռթկումների կամ արթնության բռնկումների մասին: Քրիստոնեությունը Սուրբ Հոգու շարժումն է՝ սկզբից մինչև վերջ: Աստծո Հոգին մշտապես շարժվում է և մշտապես թարմություն է բերում Իր գործում:

ԱՍՏՎԱԾԱՇՆՉՈՒՄ ԳՐՎԱԾ Է ԲԵԹՀԵԶԴԱՅԻ ԱՎԱԶԱՆԻ ՄԱՍԻՆ, որում հրեշտակը ժամանակ առ ժամանակ շարժում էր ջրերը (տե՛ս Հովհ. 5.1-9): Ով առաջինը մտներ ավազանի մեջ, բժշկվում էր: Այդ ավազանը լուծում էր առաջարկում, բայց դա մշտական հոսք չէր, և կար մեծ մրցակցություն՝ դրանից օգտվելու համար: Մի մարդ պառկած էր դրա մոտ 38 տարի շարունակ, բայց նա չբժշկվեց, մինչև չհանդիպեց Հիսուսին, որովհետև երբ ջրերը շարժվում էին, Նա չէր հասցնում առաջինը մտնել ավազանի մեջ: Հիսուսի սերը, ողորմությունը և զորությունը նման չեն Բեթհեզդայի ավազանին: Դրանք մշտական են և երբեք չեն դադարում: Դրանք կախված չեն մեր անձնական ջանքերից. Նա միայն հարցնում է՝ արդյո՞ք մենք ցանկանում ենք ընդունել:

ԳՈՐԾՈՒՆ՝ ԱՍՏԾՈ ՀԱՄԱՐ

> *Մշտապես գործուն Սուրբ Հոգուն անհրաժեշտ են գործուն մարդիկ: Պենտեկոստեն՝ իր իսկ սահմանմամբ, շարժիչ ուժ է: Հոգին անդադար շարժվում է: Մատթեոս 28.10-ում հստակ գրված է Սուրբ Հոգու քամու նպատակը. «ԳՆԱՅԵ՛Ք, ԻՄ ԵՂԲԱՅՐՆԵՐԻՆ ԱՍԵ՛Ք»:*

ՄՇՏԱԿԱՆ ՊԵՆՏԵԿՈՍՏԵՆ ՊԵՏՔ Է ՇԱՐԺՈՒՆ ԼԻՆԻ, ԵՎ ՄԵՆՔ մշտապես պետք է ԳՆԱՆՔ և ՊԱՏՄԵՆՔ: Երբ մենք հավաքվում ենք, Նա ներկա է՝ օրհնելու, բժշկելու և փրկելու համար: Ավետարանչությունը՝ Սուրբ Հոգու միջոցով, թարմության զեփյուռ է, որը փչում է մեր փողոցների կեղտոտ մթնոլորտում: Մենք միայն պետք է համագործակցենք Սուրբ Հոգու հետ և թույլ տանք, որ Նրա քամին փչի:

ԽԻՍՏ ԼԻՔԸ

«Դու իմ գլուխն օծում ես յուղով.
իմ բաժակը խիստ լիքն է»:

ՍԱՂՄՈՍ 23.5

ՈՉ ԹԵ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ, ԱՅԼ՝ ՄՇՏԱԿԱՆ

> *Քրիստոսում մենք մշտապես վերականգնվող էներգիա ունենք: Նրանում գոյություն չունի սնուցման խափանում: Դուք երբեք չեք կարող սպառել Աստծո զորությունը: Սուրբ Հոգին շարունակում է զորացնել մեզ այնպես, ինչպես որթը սնուցում է ճյուղերը՝ ամեն ակնթարթ:*

ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՑ 2-ՐԴ ԳԼԽՈՒՄ ԳՐՎԱԾ Է, ՈՐ ՊԵՆՏԵԿՈՍՏԵԻ օրը աշակերտները լցվեցին Սուրբ Հոգով, և մինչև այդ գրքի ավարտը մենք տեսնում ենք, թե ինչպես նրանք գնացին: Նրանք շարունակ լցվում էին, ամեն ակնթարթ՝ նման հին օրհներգերից մեկի բառերին. «Ամեն ակնթարթ ես պահվում եմ Երկնքից: Ամեն ակնթարթ ես կյանք ունեմ վերևից: Նայելով Հիսուսին...»: Սա նշանակում է, որ Նա որթն է, իսկ մենք՝ ճյուղերը: Մենք ամեն օր ստանում ենք թարմ պաշարներ Նրանից: Հիսուսի խոսքերով՝ այս մատակարարումը գետի պես շարունակական է (տե՛ս Հովհ. 7.37,38): Մենք նորոգվում ենք հոգևոր զորությամբ՝ ըստ մեր անհրաժեշտության և այն գործածելու չափով:

ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՀՈՍՔ

> *«Աստված Հոգին չափով չի տալիս» (Հովհաննես 3.34), երբ Նա տալիս է Նրան: Չափով չտալը նշանակում է, որ այն չի չափվում, որ այն չի տրվում ա՛յ այսքան, և ոչ՝ ավելի, այլ՝ «լավ չափով, շարժված, թափ տրված, լիփ-լիքը» (Ղուկաս 6.38): Աստված երբեք չի տալիս որևէ բան՝ հաշված չափով: Օրինակ՝ Նա տալիս է կյանք, բայց այդ կյանքը չափով չէ, ՔԱՆԻ ՈՐ ԱՅՆ ԻՐ ԿՅԱՆՔՆ է, և այն ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ է (տե՛ս Հովհ. 3.36):*

ԵՂԻՍԵԻ ԿՐԿՆԱԿԻ ՉԱՓԸ ՊԱՐԶԱՊԵՍ ԵՂԻԱՅԻ ՈՒՆԵՑԱԾԻՑ ՈՐՈՇ չափով ավելին չէր: Աստված երբեք չի որոշում, որ ոմանք ստանան ինչ-որ մեկի ունեցածի կեսը, իսկ մյուսները՝ դրա կրկնակին: Սուրբ Հոգին տալիս է Իրենից՝ Իր լիությունից, ոչ թե հաշվարկված

չափով: Աստվածաշունչը խոստանում է անձրևներ և գետեր, ոչ թե կաթիլներ: Զորավոր գետերը չեն հոսում պոռթկումներով և դադարներով. Հոգին նույնպես չի գալիս պատահական պոռթկումներով: Քրիստոսն ընտրեց «գետեր» բառը՝ Հոգու շարունակական հոսքը նկարագրելու համար (տե՛ս Հովհ. 7.37,38):

ԱՆԺԽՏԵԼԻ ԱՊԱՑՈՒՅՑ

«Նրանց էլ, որ հավատացին, այս նշանները կհետևեն. Իմ անունով դևեր կհանեն, նոր լեզուներով կխոսեն, օձեր վեր կառնեն, և եթե մի մահադեղ խմեն, նրանց վնաս չի տա, հիվանդների վրա ձեռք կդնեն, և նրանք կառողջանան»:

ՄԱՐԿՈՍ 16.17,18

ԿՐԱԿԵ ՍՅՈՒՆ

Պենտեկոստեի օրը Սուրբ Հոգին հայտնվեց 120 աշակերտներից յուրաքանչյուրի գլխավերևում հանգչող կրակե լեզուների տեսքով: Դա աստվածային ներկայության և զորացման նշան էր: Նրա կրակը տրվեց աստվածային հանձնարարականի և պաշտպանության համար:

ԿՐԱԿՆ ԱՍՏԾՈ ՆՇԱՆՆ Է: ԱՍՏՎԱԾԱՇՆՉՈՒՄ ԿԱ ԱՎԵԼԻ ՔԱՆ 100 հղում Աստծո կրակի մասին: «Մեր Աստված փչացնող կրակ է» (Եբրայեցիների 12.29): Երեք մեծագույն հոգևոր իրադարձություններից երկուսը կնքվեցին աստվածային կրակով. Իսրայել ժողովրդի հիմնադրումը Ելից գրքում և Եկեղեցու հիմնադրումը՝ կրակե լեզուներով: Ելից գրքում Իսրայելի և եգիպտացիների միջև կրակե վարագույր կար, որը, ռազմական դրոշի պես, վստահեցնում էր Իսրայելին, որ զորքերի Տերն իրենց հետ էր: Այսօր մենք ունենք նույն վստահությունը, որ Աստված մեզ հետ է: Պենտեկոստեի լեզուները հիշեցնում են մեզ այդ մասին: Հիսուսն ասաց. «Ես եկա, որ կրակ գցեմ երկրի վրա» (Ղուկաս 12.49): Նման կրակոտ նետի՝ Աստված արձակում է ձեզ դեպի թշնամու ճամբարը՝ կապյալներին փրկություն տալու համար:

ՆՇԱՆ-ՊԱՐԳԵՎԸ՝ ՈՐՊԵՍ ՑՈՒՑԱՆԻՇ

Մկրտությունը Սուրբ Հոգով՝ մշտական և լիակատար հեղափոխություն է Եկեղեցու կյանքում: Այն, որ Հոգին թափվեց բոլորի վրա, մեծագույն փոփոխությունն էր, որը կարող էր տեղի ունենալ: Դրա ցուցանիշն այն նշան-պարգևն էր, որը նրանք ստացան: Դա հայտնություն էր նրանց համար: Նրանք հասկացան, որ զորությունը եկել է, որ Սուրբ Հոգին իրենց հետ է, և այլևս չխնդրեցին, որ Նա գա: Առաքյալներն ընդունեցին նույն նշանը Սուրբ Հոգուց. «Եվ ամենը Սուրբ Հոգով լցվեցին և սկսեցին ուրիշ լեզուներով խոսել, ինչպես որ Հոգին նրանց խոսել էր տալիս» (Գործք 2.4): Գոյություն չունի այլ զորություն՝ բացի Սուրբ Հոգուց: Եվ այն հրաշալի նշանը, որը նրանք ստացան, ապացուցում էր, որ ցանկացած հրաշք հնարավոր է:

մշտապես պահանջել և ստացել են նշաններ՝ իրենց հավատքն ամրապնդելու համար: Նոյի ջրհեղեղից հետո Աստված տվեց ծիածանը՝ որպես նշան, որ համաշխարհային ջրհեղեղ այլևս չէր լինելու (տե՛ս Ծննդ. 9.12-17): Աստված նշան տվեց Աբրահամին, երբ նա դեռ անզավակ էր՝ որպես երաշխիք, որ նա շատ ազգերի հայր էր լինելու (տե՛ս Ծննդ. 15): Լեզուներով աղոթելը նշան է, բայց այն դատարկ նշան չէ: Այն գործուն գերբնական ապացույց է, որը վկայում է Սուրբ Հոգու ներկայության մասին հավատացյալի ներսում: Այն խրախուսում է մեր հավատքը, բայց նույնպես հաղորդակցման միջոց է, որն օգնում է մեզ աղոթքի, երգելու, մարգարեության և ծառայության մեջ: Լեզուները նույնպես ցուցանիշ է, որը մատնանշում է մարդկանց հետ Աստծո հարաբերությունների նոր փուլ. «Հետին օրերում... Իմ Հոգուց կթափեմ ամեն մարմնի վրա» (Գործք 2.17):

ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ

Լեզուներով խոսելը Սուրբ Հոգու ներկայության և զորության նշանն է մեր կյանքում: Այն օգնում է մեզ վստահել Սուրբ Հոգուն և դառնում է բնական և անձնական վերապրում մեզ համար: Պենտեկոստեն խարիզմատական լեզվով նշանակում է, որ Աստված և մարդը միասին ցնծում են:

«ԽՈՍԵԼԸ» ՀԱՎԱՆՈՒԹՅԱՆ ՆՇԱՆ Է, ՈՐԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ, ՈՐ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ մեր ներսում է և մեզ հետ է: Առանց դրա՝ մենք երբեք չենք կարող վստահ լինել (արդյո՞ք ես բավականաչափ աղոթել եմ, արդյո՞ք ես բավականաչափ սուրբ եմ, արդյո՞ք ես բավականաչափ վկայել եմ): Բայց Աստված ստեղծել է մեզ Իր Հոգու համար: Հոգով մկրտվելը և՛ ֆիզիկական, և՛ հոգևոր իրադարձություն է (տե՛ս Ա Կորնթ. 6.19), և դրա նշանը ֆիզիկական է և հոգևոր:

ՆՇԱՆ, ՈՐ ԱՄԵՆ ԻՆՉ ՀՆԱՐԱՎՈՐ Է

Անձի փրկությունից հետո լեզուներով աղոթելն ամենազարմանալի երևույթն է: Ի՞նչը կարող է ավելի ազդեցիկ լինել, քան մահկանացուի վերածնված հոգին, որը կենդանացված և արդարացված է և խոսում է երկնային լեզվով իր Հոր հետ: Լեզուներով աղոթելն ապացուցում է, որ անհնարին ոչինչ չկա:

ՊԵՆՏԵԿՈՍՏԵԻ ՕՐԸ 120-Ը ԽՈՍԵՑԻՆ ԼԵԶՈՒՆԵՐՈՎ,

և այն բազմությունը, որը լսում էր նրանց, ցնցվեց: Իմ կյանքում տեսել եմ, թե ինչպես մեկ միլիոն մարդ՝ մեկ հավաքույթի ժամանակ, ընդունեց նույն կրակե մկրտությունը և աղոթեց Տիրոջը Հոգուց ստացած նոր լեզուներով: Դա նման էր շատ ջրերի ձայնին. «Եվ կլինի հետին օրերում,- ասում է Աստված,- որ Իմ Հոգուց կթափեմ ամեն մարմնի վրա...» (Գործք 2.17): Այդ օրերը հիմա՛ են:

ԿՐԱԿԵ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

ԲԱԺԻՆ 5

ԿՐԱԿԵ ԳՈՐԾԻՔՆԵՐ. ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ՊԱՐԳԵՎՆԵՐԸ ԵՎ ԶՈՐՈՒԹՅՈՒՆԸ

ԹԱՆԿԱՐԺԵՔ ԵՎ ԱՆԳԻՆ

«Եվ երբ որ Հիսուսը Բեթանիա էր՝ Սիմոն բորոտի տանը, Նրա մոտ մի կին եկավ, որ մի շիշ ծանրագին յուղ ուներ, և Նրա գլխի վրա թափեց, երբ որ Նա սեղան նստած էր: Նրա աշակերտներն էլ, տեսնելով, նեղացան և ասացին. «Ինչո՞ւ եղավ այդ կորուստը, որովհետև կարող էր այդ յուղը շատ թանկ ծախվել և աղքատներին տրվել»: Հիսուսն էլ, իմանալով, ասաց նրանց. «Ինչո՞ւ եք այդ կնոջը նեղություն տալիս, որ դա մի բարի բան գործեց Ինձ համար»»:

ՄԱՏԹԵՈՍ 26.6-10

ԸՆԴԱՄԵՆԸ ԴԱՏԱՐԿ ԿԱՂԱՊԱ՞Ր

> *ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ լրացուցիչ պարագա չէ. Նա մեր հավատքի էությունն է: Նա Աստված է երկրի վրա, որը գործուն կերպով ներբնակվում է մեր ներսում և հագեցնում է մեր էության ամեն մի մասնիկը: Սա նշանակում է, որ քրիստոնեությունը գերբնական հավատք է: Ոչ գերբնական Ավետարանը դատարկ կաղապար է:*

ՇԱՏ ՀԱՎԱՏԱՑՅԱԼՆԵՐ ԸՆՏՐՈՎԻ ԵՆ ՀԱՄԱՐՈՒՄ ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒՆ ընդունելը, ասես նրանք կարող են մերժել այս առաջարկը և քրիստոնյա մնալ: Նա հավելված չէ քրիստոնեական հավատքի մեջ. Նա հավատքի հեղինակն է, և Նա է պահպանում հավատքը հազարամյակներ շարունակ՝ Քրիստոսից առաջ և հետո: Նա Տանուտերն է. առանց Նրա չկա խնջույք: Մենք անտեսում ենք Նրան՝ ի վնաս մեզ: Սուրբ Հոգին կար ամենասկզբում և կլինի ամեն ինչի ավարտից հետո: Նա Ալֆան և Օմեգան է, և մենք պետք է ուշադրություն դարձնենք Նրան, եթե կամենում ենք անցնել և ավարտել մեր ընթացքը:

ՍԻՐՈ ՎԱՏՆՈՂ ՇՌԱՅԼՈՒԹՅՈՒՆԸ

> *Հոգու օծությունը երկրորդական վերապրում չէ, որն ուղարկված է, որպեսզի խաղաղեցնի ձեր խիղճը և համոզի, որ ձեզանում աստվածային բարության ինչ-որ չափ կա: Ո՛չ, այն իրական է: Այն Աստծո լավագույնն է: Այն Ինքը Աստված է: Մենք ստացել ենք այն խաչված Քրիստոսի միջոցով, որը կոտրել է ծանրագին յուղի անոթը՝ Իր Մարմինը, և թափել է դրա թանկ անուշահոտությունը մարդկության վրա:*

ՄԱՐԻԱՄԻ ՅՈՒՂԻ ԲՈՒՐՄՈՒՆՔՆ ԱՅՆՔԱ՛Ն ՀԱԳԵՑԱԾ ԷՐ, ՈՐ տարածվեց տնով մեկ: Այն ահռելի զոհ էր և սիրո վատնող շռայլություն: Այն նկարագրում է Աստծո սերը՝ Հիսուս Քրիստոսի միջոցով, որը տվեց մեզ Սուրբ Հոգու օծության անգին պարգևը: Այն էժանագին վերապրում չէ, այլ՝ Աստծո լավագույնը: Երբ Քրիստոսը բարձրացավ

Գողգոթայի խաչը, Նա զոհեց Իր մարմինը, որն ամենաթանկ զոհն է՝ տարածելով Սուրբ Հոգու անգին բուրմունքը և Աստծո ամբողջ բարությունը մարդկության վրա:

ՏԱՐԱԾԵԼ ՆՐԱ ԲՈՒՐՄՈՒՆՔԸ

> *Աստված փչել է Իր շունչն Իր Խոսքի մեջ: Սա նման է այն բանին, որ ծաղիկն ընդունում է քամին և արևի ճառագայթները և վերադարձնում է դրանք՝ գեղեցկության և անուշահոտության տեսքով: Մենք անվանում ենք դա ֆոտոսինթեզ: Յուրաքանչյուր քրիստոնյայի կյանքում պետք է հոգևոր ֆոտոսինթեզի պես մի բան տեղի ունենա: «Լցվե՛ք Հոգով» (Եփեսացիների 5.18), և դա կարտահայտվի ոչ միայն կրոնական նվիրվածությամբ, այլև հաճելի բնավորությամբ, քանի որ դուք կտարածեք Նրա բուրմունքը:*

ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ԳԼԽԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔԸ՝ ՄԵԶ ԻՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ դարձնելն է: Մեկ անգամ մի փոքրիկ աղջիկ աղոթում էր. «Սիրելի՛ Տեր, դարձրո՛ւ բոլոր չար մարդկանց բարի, և բոլոր բարի մարդկանց՝ հաճելի»: Ինչ-որ կերպով նա հասկացել էր, որ «բարին» պարտադիր չէ, որ «հաճելի» լինի: Տա՛ Աստված, որ մենք լինենք երկուսն էլ: Ահա թե ինչպես այս աշխարհը կիմանա Նրա մասին:

ԵՐԲ ԱՎԵՏԱՐԱՆԸ ՔԱՐՈԶՎՈՒՄ Է, ԱՅՆ ԿԱՏԱՐՎՈՒՄ Է:

ԱՅՆ ՎԵՐԱԾՎՈՒՄ Է ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅԱՆ:

ԻԼԵ-ԻՖԵ, ՆԻԳԵՐԻԱ, 2002



1.6 ՄԻԼԻՈՆ ՄԱՐԴ՝ ՆԵՐԿԱ ՄԵԿ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆԸ ԼԱԳՈՍՈՒՄ՝ ՆԻԳԵՐԻԱՅՈՒՄ, 2000

ԱՎԵՏԱՐԱՆԸ Ի ՁՈՐՈՒ Է

ՓՐԿԵԼ ԱԶԳԵՐԸ:

ԱՅՆ ԲԱՐՁՐԱՑՆՈՒՄ Է ԱԶԳԵՐԸ

ԵՎ ԼՑՆՈՒՄ Է ՈՒԺՈՎ ԱՅՆ ԱՄԵՆԸ, ԻՆՉՈՒՄ

ԿՅԱՆՔ ԿԱ: **ՀԻՍՈՒՄԸ ՓՐԿՈՒՄ Է:**

ԱՎԵՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ ՄԵԾ ՔԱՂՑ ՈՒՆԵՑՈՂ ՄԱՐԴԻԿ, ՄԲՈՒՋԻ-ՄԱՅԻ, 1991

ԱՅՆ, ԻՆՉ ԱՆՀՆԱՐ Է, ԻՐԱԿԱՆ Է ԴԱՌՆՈՒՄ, ԵՐԲ ԱՍՏՎԱԾ ՆԵՐԿԱ Է:

ՋՈՍ, ՆԻԳԵՐԻԱ, 2005

ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐԸ, ՈՎ ԿԱՆՉԻ ՏԻՐՈՋԸ, ԿՓՐԿՎԻ:



ԽԱՐԹՈՒՄ, ՍՈՒԴԱՆ, 2000

ԱՍՏԾՈ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԵԿԵԼ Է, ԵՎ

ԲԱՆԱԼԻՆԵՐԸ ՄԵՐ ՁԵՌՔՈՒՄ ԵՆ:

ԻԲԱԴԱՆ, ՆԻԳԵՐԻԱ, 2001

ՊԱՐԳԵՎՆԵՐ, ՈՉ ԹԵ ԳՆՎԱԾ ԻՐԵՐ

«Սիմոնը, երբ որ տեսավ, թե առաքյալների ձեռք դնելով Սուրբ Հոգին տրվում է, փող բերեց նրանց և ասաց. «Ինձ էլ տվեք այս իշխանությունը, որ ում վրա ձեռք դնեմ, Սուրբ Հոգին առնի»: Պետրոսն էլ ասաց նրան. «Քո արծաթը քեզ հետ կորչի, որովհետև դու կարծեցիր, թե Աստծո պարգևը փողով կառնվի»»:

ԳՈՐԾՔ 8.18-20

ՀԱՍԿԱՆԱԼ ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ԱՆՁԸ

> *Անհրաժեշտ է հասկանալ, որ Սուրբ Հոգին Նա է, ոչ թե «այն»: Հոգին անանձնական ուժ չէ՝ նման հոգևոր էլեկտրականության: Աստծո օծությունը պարզապես զորությունը կամ պարգևները չեն, այլ հենց Ինքը Սուրբ Հոգին:*

ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉՆ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ Է ԶԱՆԱԶԱՆ ՏԱՐՐԵՐ՝ ՍՈՒՐԲ Հոգուն նկարագրելու համար՝ կրակը, քամին և ջուրը: Սակայն կարևոր է հասկանալ, որ Սուրբ Հոգին անկենդան տարր չէ, այլ՝ Անձ է: Նա ուժ չէ, ինչպես տիեզերքի ձգողությունը կամ էլեկտրական հոսանքը: Նա Սուրբ Երրորդության երրորդ Անձն է: Ո՛չ Նրա պարգևները, ո՛չ Հոգու պտուղը չպետք է դիտարկվեն Նրանից առանձին: Ձեր ներսում բնակվում է լիարժեք Աստված, ոչ թե միայն Նրա պարգևները:

ՊԵ՞ՏՔ Է ԳԻՆ ՎՃԱՐԵԼ ՊԱՐԳԵՎՆԵՐԻ ՀԱՄԱՐ

> *Պե՞տք է գին վճարել պարգևների համար: Եթե այո, դրանք կլինեին ոչ թե պարգևներ, այլ՝ գնումներ (տե՛ս Գործք 8.18-20): Այնուամենայնիվ, միգուցե անհրաժեշտ լինի գին վճարել՝ դրանք գործածելու համար: Այն մարդիկ, ովքեր պատրաստ չեն զոհել իրենց ազատ ժամանակը, հարմարավետությունը, համբավը, միգուցե նաև շատ ավելին, քիչ կգործածվեն Աստծո կողմից, թեև Նա, անկասկած, շնորհել է Իր զորության պարգևները:*

ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՀԱՎԱՔԱԾՈՒՆ ԿԱՐՈՂ Է ՀՐԱՇԱԼԻ նվեր լինել հյուսնի համար, բայց այն անօգուտ կլինի՝ առանց նրա քրտինքի: Պարգևները դրդում են մեզ նվիրման, ինչպես գրված է Հռոմեացիների 12.7-ում. «Եկեք օգտագործենք դա մեր ծառայության մեջ» (NKJV): Նրա կյանքը թափվում է մեր կյանքի հետ: Պարգևները պարգևներ տվողների համար են: Տվե՛ք, որ ստանաք: Երբ Հիսուսն ուղարկեց Իր 12 աշակերտներին, Նա տվեց նրանց իշխանություն՝ բազմաթիվ հրաշքներ գործելու համար, և պատվիրեց. «Եվ երբ որ գնաք, քարոզե՛ք և ասե՛ք, որ Երկնքի արքայությունը մոտեցել է: Հիվանդ-

ներին բժշկե՛ք, բորոտներին սրբե՛ք, մեռելներին հարություն տվե՛ք, դևերը հանե՛ք. ձրի առել եք, ձրի տվեք» (Մատթեոս 10.7,8): Հիսուսը հստակ նշեց, որ Նա ձրիաբար էր տվել պարգևները, և դրանք պետք է նույն կերպով բաժանվեին մարդկանց: Այնուամենայնիվ, աշակերտները պետք է ծախսեին իրենց ուժերը՝ գնալով, անցնելով վտանգավոր տարածքներով, զոհաբերելով իրենց հարմարավետությունը և միգուցե հալածվելով: Պարգևը ձրի է, բայց ձեզնից ինչ-որ բան կպահանջվի, որպեսզի անցնեք այն ընթացքը, որի համար այդ պարգևը զորացնում է ձեզ:

ԽՆԴՐԵ՛Ք ԵՎ ՍՏԱՑԵ՛Ք

> *Սուրբ Հոգու օծությունը չի վաճառվում, և եթե այն վաճառվեր, ոչ ոք չէր կարողանա գնել այն: Միակ պահանջն այն է, որ դուք գաք և ձրիաբար խմեք. «Ո՛վ բոլոր ծարավներ, եկե՛ք ջրերի մոտ, և դուք, որ փող չունեք, եկե՛ք, ծախո՛ւ առեք և կերե՛ք, եկե՛ք առեք՝ առանց փողի, առանց վճարի՝ գինի և կաթ» (Եսայի 55.1):*

ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ԶՈՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՆԿԱՐԵԼԻ Է ԱՌԱՁԱՑՆԵԼ, ԶՍՊԵԼ, կեղծել կամ ստանալ ծանր աշխատանքով և բազում աղոթքներով: Սուրբ Հոգին չի սպասում, մինչև որ դուք քրտնեք: Հիսուսն ասաց. «Խնդրե՛ք և կտրվի ձեզ... ամեն խնդրող առնում է» (Մատթեոս 7.7,8): Աստված միայն պարգևներ ունի. Նա չունի որևէ բան՝ վաճառքի համար: Նա չի առաջարկում շահավետ գնումներ և զեղչեր. Նա բանակցություններ չի վարում, գործարքներ չի կնքում և չի սակարկում: Նա միակողմանի է. Նա պարզապես տալիս է: Եվ մենք կարող ենք անել միայն մեկ բան. ընդունել: Նա ոչինչ չի ցանկանում մեզնից՝ ի հատուցում: Եթե դուք մահացած ածուխ եք, ընդունե՛ք Սուրբ Հոգու կրակը և դարձե՛ք կենդանի ածուխ: Նա անմիջապես կվառի ձեզ:

ԱՍՏԾՈ ՔԱՂՑՐԱՎԵՆԻՔԸ ՁԵԶ ՀԱՄԱՐ

> *Աստված Իր բոլոր զավակների համար ունի ավելին, քան բավական է, և անկասկած՝ նաև Իր ամբողջ արարչագործության համար: Կարիք չկա, որ նախանձեք մեկ այլ մարդու: Եվ կարիք չկա, որ սադրեք, չարախոսեք կամ զրպարտեք մարդկանց՝ առաջխաղացում ստանալու համար: Եթե Նա չխնայեց Իր Որդուն մեզ համար (տե՛ս Հռոմ. 8.32) և ծրիաբար տվեց մեզ Իր Հոգուն (տե՛ս Ա Կորնթ. 2.12), ուրիշ ի՞նչ կպահի մեզնից:*

ԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ ՄԵՆՔ՝ ԵՐԵԽԱՆԵՐՍ, քաղցրավենիք էինք ստանում գուցե տարին մեկ անգամ: Երբ ես սառնաշաքար էի տեսնում իմ եղբայր Պիտերի բերանում, ՁԷԻ փորձում խլել այն. փոխարենը՝ սկսում էի արագ մտածել: Ումի՞ց էր եղբայրս վերցրել այն: Կար միայն մեկ հնարավոր աղբյուր՝ մայրս: Ես գիտեի, որ մայրս շատ ազնիվ էր: Նա քաղցրավենիք չէր տա իր երեխաներից մեկին, եթե չունենար ամեն մեկիս համար: Ես վազում էի մայրիկիս մոտ և գոչում. «Մայրի՛կ որտե՞ղ է Ի՛Մ սառնաշաքարը»: Եվ նա դնում էր այն ձեռքիս ափի մեջ: Նույն կերպով, եթե դուք տեսնում եք, որ Աստված օրհնում է որևէ քրիստոնյայի, որևէ եկեղեցու կամ որևէ ծառայության, մի՛ նախանձեք: Գնացե՛ք Հիսուսի մոտ: Նա ունի «քաղցրավենիք» նաև ձեզ համար: Ղուկաս 15.31-ում Հայրն ասաց Իր որդուն. «Այն, ինչ որ Իմն է, քոնն է»: Այս խոստումը վերաբերում է նաև մեզ:

ՄԵԾԱԳՈՒՅՆ ՊԱՐԳԵՎԸ

«Բայց երբ որ դեպի Տերը դառնան, այն քողը վեր կառնվի: Որովհետև Տերն է Հոգին. որտեղ Տիրոջ Հոգին է, այնտեղ է ազատություն: Բայց մենք ամենքս, բաց երեսով Տիրոջ փառքն ինչպես հայելու մեջ տեսնելով, նույն պատկերի նման կերպարանափոխվում ենք փառքից դեպի փառք, ինչպես թե Տիրոջ Հոգուց»:

Բ ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻ 3.16-18

ՆԱ Է ՄԵԾԱԳՈՒՅՆ ՊԱՐԳԵՎԸ

Սուրբ Հոգուն պետք չէ շփոթել Նրա պարգևների և գործերի հետ: Սուրբ Հոգին ավելին է, քան Իր ազդեցությունը մեր կյանքում, և նույնիսկ՝ այս աշխարհում: Նրա ներկայությունը մեր կյանքում ավելին է, քան Նրա պարգևները: Սուրբ Հոգին չի գալիս միայն, որպեսզի մենք կարողանանք խոսել լեզուներով, բայց երբ Նա ներկա է, լեզուները վկայում են այդ մասին: Նրա բոլոր պարգևների նպատակն է՝ խթանել Իր շփումը մեզ հետ և այս աշխարհի հետ:

ՀԱՐՍԸ ՉԻ ԱՄՈՒՍՆԱՆՈՒՄ ՓԵՍԱՅԻ ՀԵՏ ՀԱՆՈՒՆ ՆՐԱ ՄԱՏԱՆՈՒ, այլ՝ հանուն նրա: Աստված ցուցադրական ոչինչ չի անում: Նրա նպատակը մշտապես եղել է սերը՝ սիրել մեզ, ստանալ մեր սերը և մշտապես հաղորդակցվել մեզ հետ: Նա մեր բազկի ուժն է, և Նա անշեջ կրակ է մեր անձում: Նա տալիս է մեզ հոգևոր պարգևներ, հոգևոր պտուղ և միաբանություն (տե՛ս Ա Կորնթ. 12): Սկզբում Նա գործածում է Քրիստոսի արյունը՝ մեր մեղքի հետքը մաքրելու համար, իսկ հետո վերածնում է մեզ՝ տալով կյանք և ավելին: Այնուամենայնիվ, Իր բոլոր գործերից բացի՝ Հոգին Անձամբ գալիս է, քանի որ հենց Ինքն է մեր մեծագույն պարգևը: Աստծո հանդեպ փափագն է, որ ճշմարիտ քրիստոնյա է դարձնում մեզ, ոչ թե միայն նշանները և հրաշքները:

ՄԵՆՔ ԻՆՔՆԱԲԱՎ ՉԵՆՔ

Մենք այնպես ենք ստեղծված, որ կախված լինենք Աստծո շնորհքից և զորությունից: Առանց Նրա՝ մենք ոչինչ չենք կարող անել (տե՛ս Հովհ. 15.5): Մեր բավականությունը Նրանից է (տե՛ս Բ Կորնթ. 3.5): Աստված դնում է մեր մեջ Իր Հոգին, քանի որ մենք կարիք ունենք, որ Նա մխիթարի, առաջնորդի և նույնիսկ շտկի մեզ: Նա տալիս է Իր պարգևները և զորությունը, քանի որ դրանք անհրաժեշտ են՝ Իր առաքելությունը կատարելու համար: Դա մեր հոգևոր սպառազինությունն է՝ հոգևոր հանձնարարությունների համար:

ԱՍՏՎԱԾ ՉԻ ՆԱԽԱՏԵՍԵԼ, ՈՐ ՄԵՆՔ ՍԿՍԵՆՔ ՍԵՓԱԿԱՆ գործունեությունը՝ ստանալով միանվագ հոգևոր միջոցներ, որոնք անկախ են դարձնում մեզ: Մենք ինքնաբավ փոքրիկ «քրիստոսներ» չենք: Մենք ամեն վայրկյան ընդունում ենք Քրիստոսի լիությունը և լցվում ենք դրանով, ինչպես որ ճյուղերն ընդունում են որթի բուսահյութը: Մենք որթեր չենք, որոնք առանձին են պաշտպանում իրենց գոյությունը. մենք ամբողջական ենք միայն Նրանում (տե՛ս Կողոս. 2.10):

Մենք կանչված չենք գնալու այս աշխարհ մեր փոքրիկ էլեկտրակայանով, որպեսզի մարդիկ մտածեն, թե որքան հրաշալի ենք մենք: Մենք կարող ենք ցուցադրել մեր տաղանդները և տպավորել մարդկանց մեկ ժամվա ընթացքում, բայց շուտով մեր փոքրիկ էլեկտրակայանի էներգիան կսպառվի: Մենք զորություն չենք արտադրում. մենք ընդամենը Նրա զորության հաղորդիչներն ենք: Եփեսացիների 1.22 և 23 խոսքերը նկարագրում են «...եկեղեցուն... որ է Նրա մարմինը՝ այն լրումը, որ ամենն ամենի մեջ լրացնում է»: Նա պետք է լցնի մեզ և գործի մեր միջոցով: Մենք աղբյուրը չենք. մենք միայն ջրատար խողովակներ ենք: Հիսուսը հայտարարեց. «Կացե՛ք Ինձանում, և Ես՝ ձեզանում: Ինչպես որ ճյուղն իր անձից չի կարող պտուղ բերել, եթե որթում չմնա, այսպես ո՛չ էլ դուք, եթե Ինձանում չմնաք» (Հովհաննես 15.4):

ՆՈՐ ՕՐԵՆՔ Է ԳՈՐԾՈՒՄ

> *Եղե՛ք կենսունակ Հոգու մեջ: Դուք ստեղծված եք, որ լողաք Սուրբ Հոգու ջրերի մեջ: Մի՛ հակառակվեք և մի՛ պայքարեք. պարզապես հանդարտվե՛ք: Հանձնվե՛ք Սուրբ Հոգու մեծ և փառավոր հոսանքներին, և թույլ տվեք, որ դրանք տանեն ձեզ դեպի ձեր կոչումը:*

ՄԵԿ ԱՆԳԱՄ ԱՍՏՎԱԾ ՀԱՐՑՐԵՑ ԻՆՁ. «ԴՈՒ ԳԻՏԵ՞Ս, ԹԵ ԻՆՉ է նշանակում լողալ»: Ես լավ լողորդ եմ և մտածեցի, որ գիտեի: Բայց մի՞թե ես գիտեի: Սուրբ Հոգին օգնեց ինձ հասկանալ մի բան, ինչը նախկինում չէի հասկանում և չէի գնահատում: Նա ասաց. «Երբ դու լողում ես, գտնվում ես մեկ այլ տարերքի մեջ, որում նոր օրենք է գործում: Դու պետք է հանձնվես գետի ջրերին և լիովին հենվես դրանց վրա: Այդ ջրերն են տանում քեզ»: Ես հասկացա, թե ինչ էր Նա ասում:

Երբ ես լողում եմ Սուրբ Հոգու մեջ, Նրա ջրերը տանում են ինձ: Հոգին բարձրացնում է ինձ, ինչպես որ լողալն ազատում է իմ քաշի ծանրությունն իմ ոտքերից, արձակուրդ է տալիս իմ մեջքին և հանգիստ՝ իմ հոդերին: Հոգին է կատարում ամբողջ աշխատանքը: Այդ դեպքում, ո՞րն է իրական խոչընդոտը: Իրական խոչընդոտը սեփական ուժերի վրա հենվելն է: Հենվե՛ք ձեր ուժերի և կարողությունների վրա, և դուք կթափառեք այն գետի երկայնքով, որը կարող էր տանել ձեզ՝ ձեր կողմից նվազագույն ջանքերով:

ԱՐԾԱՐԾԵԼ ՊԱՐԳԵՎԸ

«Միտքս բերելով այն անկեղծ հավատքը, որ քեզանում է... Այդ պատճառով միտքդ եմ բերում, որ արծարծես Աստծո այն շնորհքը, որ քեզանում է՝ իմ ձեռքերը քեզ վրա դնելով»:

Բ ՏԻՄՈԹԵՈՍ 1.5,6

ՀՈԳԵՎՈՐԱՊԵՍ ԳՈՐԾԱԴՐՎԱԾ

Հոգու պարգևները բնական տաղանդներ չեն: Մարդու բնական տաղանդները չեն կարող կոչվել «հոգևոր պարգևներ»: Հոգևոր պարգևները գործադրվում են Աստծո կողմից: Աստված կարող է գործել ցանկացած մարդու միջոցով: Նա չի տալիս լեզուները միայն լեզվաբաններին, իմաստությունը՝ միայն փորձառու խորհրդատուներին, և բժշկության պարգևները՝ միայն բժիշկներին: Կարիք չկա, որ մենք փայլուն լինենք, որպեսզի Նա գործածի մեզ:

ՄԱՐԴԸ ՍՏԵՂԾՎԱԾ Է ԱՍՏԾՈ ՊԱՏԿԵՐՈՎ ԵՎ ՕԺՏՎԱԾ Է ԲՆԱԿԱՆ տաղանդներով, որոնք թույլ են տալիս նրան կենտրոնանալ Աստծո փրկարար նպատակի վրա և մասնակցություն ունենալ դրանում: Այնուամենայնիվ, դրա հետ մեկտեղ, Աստված հավելյալ պարգևներ է տալիս վերածնված մարդուն՝ Սուրբ Հոգու միջոցով (տե՛ս Ա Կորնթ. 12.1-11): Դրանք բնական տաղանդներ չեն, այլ՝ հոգևոր պարգևներ, որոնք ավելացնում են Աստծո փրկարար աշխատանքի մեջ մասնակցելու մեր կարողությունը: Հոգու պարգևների միջոցով մենք կարող ենք գերազանցել բնական արդարացումները, թերությունները և անհամապատասխանությունները (տե՛ս Բ Կորնթ. 12.9) և անել ամեն ինչ Նրանով, Ով զորացնում է մեզ (տե՛ս Փիլիպ. 4.13):

ՈՉ ՄԻ ՀՐԱՇՔ՝ ՀԱՆՈՒՆ ՀՐԱՇՔԻ

Հոգու պարգևները գործում են, երբ մենք հավատում ենք Աստծուն, ոչ թե՝ ինչ-որ տեսության: Դրանք չեն բխում որևէ ուսմունքից՝ փրկության ուսմունքից բացի: Սուրբ Հոգին միայն փառավորում է խաչյալ Քրիստոսին:

ԱՍՏՎԱԾ ՉԻ ԳՈՐԾՈՒՄ ՈՉ ՄԻ ՀՐԱՇՔ՝ ՀԱՆՈՒՆ ՀՐԱՇՔԻ: ՆԱ շոումեն չէ. Նա չի զբաղվում սենսացիաներ ապահովելով՝ նույնիսկ ամենափքուն եսասերի հավանությանն արժանանալու համար: Սուրբ Հոգին միավորված է խաչված Քրիստոսի հետ, և նույնիսկ կապված

է Նրա հետ Իր անվամբ՝ որպես Քրիստոսի Հոգի: Նրանք ունեն մեկ նպատակ՝ պարտության մատնել սատանային Ավետարանի միջոցով: Հոգին բավականություն է գտնում միայն Ավետարանի մեջ: Ավետարանը խիստ մեծ և համապարփակ է. այն չի անտեսում ոչինչ՝ տեսանելի և անտեսանելի, երկրի վրա, երկնքում և դժոխքում:

ՈՉ ՊԱՏՎՈ ՇՔԱՆՇԱՆ

> *Հոգու պարգևները (տե՛ս Ա Կորնթ. 12.7-11) պատվո շքանշաններ չեն՝ կիրակի առավոտյան եկեղեցում կրելու համար: «Ես ունեմ հինգ հատ, իսկ դո՞ւ»: ԴՐԱՆՔ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ ԵՆ և տրվում են այն պահին, երբ դուք ներկայանում եք՝ Աստծո գործը կատարելու համար: Նա մուրճ չի տա ձեզ, եթե ձեզ հատիչ է պետք: Տերը ամեն օր կտա ձեզ այն գործիքը, որը համապատասխանում է ձեզ հանձնարարված աշխատանքին: Եթե օգտագործեք ձեզ տրված գործիքները, դուք հրաշքներ կտեսնեք:*

«ԶՈՐՈՒԹՅՈՒՆ» ԲԱՌԸ ԳՈՐԾՔ 1.8-ՈՒՄ (ԴՈՒՆԱՄԻՍ) ՆՇԱՆԱԿՈՒՄ է ներուժ, պահված զորություն՝ նման դինամիտի: Այն քարի նման դրված կմնա, քանի դեռ չի գործադրվել: Մարդիկ աղոթում են «զորության» համար և, անկասկած, ստանում են: «Դունամիսը»՝ ներուժը, ուղղորդվում է դեպի մարդկային կարիքը: Մենք կարող ենք լինել հոգևոր մարմնամարզիկներ, որոնք մարզվում են՝ ուժեղ լինելու համար: Ի՞նչ օգուտ, որ տղամարդը մարզական միջոցառման ժամանակ կարող է 200 կիլոգրամ ծանրություն բարձրացնել գլխից վեր, եթե նա մատն էլ չի շարժում, որ օգնի իր կնոջը խոհանոցում: Ի՞նչ օգուտ, որ մենք պարծենում ենք մեր զորության համար, եթե չենք կատարում այն գործը, որը պետք է արված լինի: Հոգու զորությունը չի կարող արձակվել, եթե մենք չգործենք:

ՍՆՎԵԼ ԽՈՍՔՈՎ

> *Հիսուսը հորդորում է մեզ գանձեր չհավաքել այս երկրի վրա, որտեղ դրանք ենթակա են քայքայման և կարող են գողացվել, այլ հավաքել դրանք Երկնքում, որտեղ ապահով պահվում են (տե՛ս Մատթ. 6.19-21): Մենք պետք է զգույշ լինենք, որ չհարստացնենք մեր միտքը և զգացմունքները՝ անտեսելով մեր հոգին:*

ՀԵԹԱՆՈՍՆԵՐԸ «ՏԱՐՎՈՒՄ ԷԻՆ» ԸՍՏ ՆԱԽԿԻՆՈՒՄ ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ իրենց գիտելիքի, որը նման էր իմաստությանը, սակայն պատկանում էր «համր կուռքերին» (Ա Կորնթացիների 12.2): Հույները հայտնի էին աշխարհիկ գիտելիքով, բայց Սուրբ Հոգու իրողություններն այլ են: Դոկտորական աստիճանը հասարակագիտության բնագավառում մեզ չի դարձնում իմաստուն աստվածային իրողությունների մեջ: Աստվածային իրողությունների մեջ իմաստուն մարդիկ ընդունել են կրակ իրենց հոգում, ոչ թե միայն սառը փաստեր՝ իրենց մտքում: Եթե ուզում ենք հոգևորապես աճել, մենք պետք է սնուցենք մեր հոգին Աստծո Խոսքով և աղոթենք Հոգով:

ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒՑ

> *Ինչո՞ւ մշտապես կասկածել Աստծո Խոսքին: Ինչո՞ւ չկասկածել սատանայի ստերին: Այսօր որոշում կայացրեք կասկածել ձեր կասկածներին և հավատալ Աստծո Խոսքին: Եթե այդպես վարվեք, շուտով դուք երկնային օգնություն կստանաք Սուրբ Հոգուց:*

ԻՆՉՈ՞Ւ Է ԱՅԴՔԱՆ ՀԵՇՏ ՀԱՎԱՏԱԼ ՍԱՏԱՆԱՅԻ ՍՏԵՐԻՆ: Ի՞ՆՉ կլիներ, եթե փոխարենը Եվան որոշեր կասկածել օձի խոսքերին: Ակնհայտ է՝ արդյունքն այլ կլիներ բոլորիս համար (տե՛ս Ծնն. 3): Երբ որոշում կայացնեք վստահել Աստծուն ավելի շատ, քան վստահում եք ձեր կասկածներին, դուք կստանաք օգնություն Աստծուց: Սուրբ Հոգին կօգնի կառուցել ձեր հավատքը, իսկ հավատքն այն է, ինչը շարժում է կասկածի կողմից ստեղծված սարերը:

ԶՈՐՈՒԹՅՈՒՆ՝ Ի ՎԵՐՈՒՍՏ

«Ամեն բան կարող եմ ինձ զորացնող Քրիստոսով»:

ՓԻԼԻՊԵՑԻՆԵՐԻ 4.13

ԱՆՍՊԱՌ ԶՈՐՈՒԹՅՈՒՆ

Դուք կարող եք իմանալ ամեն ինչ էլեկտրական կայանի մասին, բայց, միևնույն է, մնալ ցրտի և խավարի մեջ: Դուք կարող եք հպվել միջուկային գործարանի պատերին, բայց, միևնույն է, սառչել: Ջերմություն ստանալու համար, դուք պետք է վերցնեք էներգիայի աղբյուրից: Ձեր ներսում կա Սուրբ Հոգու անսահմանափակ զորություն, որի շնորհիվ դուք կարող եք հաղթահարել գայթակղությունները և սուրբ լինել, իմաստությամբ վարվել և գերազանցության հասնել ձեր կարիերայում, հաղթահարել տկարությունները և հիվանդությունները, միայն եթե սովորեք վերցնել դրանից (տե՛ս Բ Պետր. 1.3):

ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ԱՊՐՈՒՄ Է ՄԵՐ ՆԵՐՍՈՒՄ ԵՎ ԶՈՐԱՑՆՈՒՄ Է ՄԵԶ, որ հակառակվենք սատանային և հաղթենք չարին: Մենք միայն պետք է խնդրենք Նրան օգնել մեզ: Մտածե՛ք այսպես. ձեր տանը էլեկտրականություն կա: Այն միացած է էլեկտրական կայանին՝ լարերի միջոցով: Եթե դուք ուշ գիշերով տուն գաք, ձեր տանը միգուցե չլինի ո՛չ լույս, ո՛չ ջերմություն, սակայն կիմանաք, թե ինչ անեք: Դուք կմիացնեք անջատիչը, և էլեկտրականությունը ներս կմտնի. դուք կստանաք լույս և ջերմություն: Հոգու զորությամբ ապրելը նման է անջատիչը միացնելուն: Մնացած ամեն ինչ պատրաստ է և սպասում է միայն մեզ:

ԱՍՏԾՈ ԶՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԳԱԼԻՍ Է ՉԶՏՎԱԾ ՏԵՍՔՈՎ

Սուրբ Հոգու զորությունն իրական է. այն իրական աստվածային զորություն է, ոչ թե կեղծիք կամ կրկնօրինակ: Աստծո ձայնը խլացված չէ Սուրբ գրքում: Այն խոսում է իշխանությամբ և ստուգությամբ. «Ինձ մոտ եկե՛ք, բոլոր վաստակածներ և բեռնավորվածներ, և Ես հանգիստ կտամ ձեզ» (Մատթեոս 11.28): Այս առաջարկը պարզ և հստակ է. եթե ընդունեք Քրիստոսին, դուք աստվածային կյանք կունենաք:

ՄԵՐ ՏՆԵՐՈՒՄ ԷԼԵԿՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՉԻ ԳԱԼԻՍ ԱՆՄԻՋԱՊԵՍ գեներատորներից: Այն զտվում է ենթակայանների և հոսանքափոխարկիչների միջոցով՝ լարումը կրճատելու համար: Սակայն Աստծո զորությունը չի գալիս մեզ մոտ զտված տեսքով: Երբ Հիսուսը հայտնվում է, Նա Իր ճշմարիտ ինքնության գունատ ստվերը չէ՝ ոգեղեն տեսքով: Գոյություն չունի ուրվական Քրիստոս. Նա կենդանի Հիսուսն է, ոչ թե հեռավոր հույսի արտացոլք: Սուրբ Հոգին պարտավորվել է պատվել Ավետարանը, և Նրա միջոցով Հիսուսը կարող է հայտնվել մեզ: Դուք չեք կարող տանել Ավետարանը՝ առանց զորության, ինչպես որ չեք կարող կրակ վառել՝ առանց ջերմության: Ես տեսականորեն չեմ մոտենում այս հարցին, այլ խոսում եմ Նրա հետ ունեցած իմ ընթացքի մասին: Նրա զորությունն իրական է, և այն գործում է:

ԱՆՄԱՐ

> *Աստծո զորությունն անանձնական զորություն չէ, որը կարող է մարել կամ սպառվել: Աստծո զորությունն ԱՍՏՎԱԾ է: Սուրբ Հոգու զորությունը ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ է: Աստված չի գոլորշիանում, հանգչում, ցամաքում կամ թուլանում: Ժամանակը չի ազդում Աստծո վրա, նույնիսկ՝ 1.000 տարին: Եթե պահպանեք կապն Աստծո հետ, դուք զորություն կունենաք:*

ԱՍՏԾՈ ԶՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՄՇՏԱՊԵՍ ՀԱՍՏԱՏՈՒՆ ԵՎ ՀԱՍԱՆԵԼԻ է: Պողոսը կարող էր խոստանալ հռոմեացիներին մեկ-երկու տարի առաջ, որ գալու էր «Քրիստոսի Ավետարանի առատ օրհնությամբ», և «հոգևոր շնորհք» (օգուտ) էր հաղորդելու եկեղեցուն (տե՛ս Հռոմ. 15.29, 1.11) ոչ թե որևէ անհատի: Նա ճանաչում էր Աստծո Հոգու մշտական և շարունակական հոսքը: Միակ դեպքը, երբ քրիստոնյաները վերալիցքավորման կարիք ունեն այն է, երբ նրանք դադարում են հնազանդվել, և իրենց կապն Աստծո հետ խաթարվում է (նման՝ ժանգոտած մեքենայի մարտկոցի): Այդ ժամանակ նրանք պետք է մաքրվեն իրենց գործերից և կրկին առաջ գնան: Աստծո զորությունը գալիս է, երբ դուք գնում եք, ոչ թե երբ դուք նստած եք:

ՉԿԱ ՆՈՐ ՕԾՈՒԹՅՈՒՆ

Մեկ անգամ օծվելուց հետո դուք մշտապես օծված եք: Գարնանը, ամռանը, աշնանը, թե ձմռանը, անապատում, թե ջունգլիներում, միայնակ, թե այլ մարդկանց հետ՝ օծությունը մշտապես ձեզ հետ է: Դուք կարող եք հարձակվել ձեր մեծագույն թշնամու վրա, հաղթահարել ձեր մեծագույն խոչընդոտը և կատարել այն կոչումը, որը ստացել եք Աստծուց. դուք միայն պետք է հավատաք:

ԴԱՎԻԹԸ ԶԱՐՄԱՑՆՈՒՄ Է ԻՆՉ: ՆԱ ԱՅՆ ՄԱՐԴԿԱՆՑԻՑ ԷՐ ՀԻՆ

Կտակարանում, ով գիտեր, թե ինչ է նշանակում օծված լինել: Նա կլանված էր այն գիտակցմամբ, որ Աստված իր հետ է: Օրինակ՝ նա մարտակոչ նետեց Գողիաթին՝ վստահելով միայն իր օծությանը: Նա չխնդրեց Սամուելին կրկին օծել իրեն, այս անգամ, միգուցե, «Գողիաթի օծությամբ»: Նա չխնդրեց բարեխոսներին աղոթել իր համար: Նա նույնիսկ ինքը չաղոթեց իր համար: Նա օծվել էր և օծված էր մնացել, և ժամանակը ոչինչ չէր փոխել: Նա վազեց դեպի փղշտացին և գոչեց. «Դու սրով, նիզակով և գեղարդով ես գալիս ինձ վրա, բայց ես գալիս եմ քեզ վրա Զորաց Տիրոջ՝ Իսրայելի զորքերի Աստծո անունով» (Ա Թագավորաց 17.45): Եվ ի՞նչ տեղի ունեցավ: Դեռահաս Դավիթը տապալեց այդ հսկային:

ԿՐԱԿԵ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

ԲԱԺԻՆ 6

ԿՐԱԿՈՏ ՄԱՐԴԻԿ. ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ԵՎ ՀԱՎԱՏԱՑՅԱԼԸ

ՈՉ ՄԻ ԿՐԿՆՕՐԻՆԱԿ

«Միայն թե զանազան պարգևներ ունենք՝ այն շնորհքի պես, որ մեզ տրված է. թե մարգարեություն՝ հավատքի չափով մարգարեանանք, թե պաշտոն՝ պաշտոնում լինենք, թե մեկը սովորեցնող է՝ վարդապետության մեջ լինի, թե մխիթարող է՝ մխիթարության մեջ. բաշխողը՝ զվարթությամբ, վերակացու դրվածը՝ ջանքով, ողորմողը՝ հոժարությամբ»:

ՀՌՈՄԵԱՑԻՆԵՐԻ 12.6-8

ՆՈՐՈԳՄԱՆ ՀՈԳԻ

> *«Ահա Ես նոր բան եմ անում. հիմա կհայտնվի. մի՞թե չեք իմանա (կամ՝ մի՞թե չեք հասկանում)» (Եսայի 43.19): Աստծո Հոգին գործում է մեզանում՝ նորոգելով և թարմացնելով մեզ, որպեսզի մենք չվերադառնանք մեր հին ճանապարհներին և նույնիսկ՝ բարի ավանդույթներին: Ձեր կյանքի ամբողջ ընթացքում Աստված ցանկանում է նոր բաներ անել, նոր ռեկորդներ սահմանել, նոր գաղափարների ծնունդ տալ և գործել ձեր միջոցով՝ այս աշխարհը փոխելու համար: Մի՛ կաղչեք հնից. ձեզանում բնակվում է Նորոգման Հոգին:*

ԵԹԵ ԵՍ ԹԵԿՈՒԶ ԻՆՉ-ՈՐ ՉԱՓՈՎ ՀԱՍԿԱՆՈՒՄ ԵՄ ԱՍՏԾՈՒՆ, ՆԱ Արարիչ է. Նա ստեղծող է: Նա ամեն անգամ գլուխգործոցներ է ստեղծում: Նա չի ստեղծում նույնիսկ երկու ձյան փաթիլ, երկու արևամուտ և երկու մարդու, որոնք իրար նման են: Նրա միտքը չափազանց արգասավոր և ստեղծարար է՝ կրկնողական աշխատանքի համար: «ՆՈՐ» բառը պատկանում է Աստծուն: Սուրբ Հոգին նորոգման Հոգի է, և Նա մշտապես նորոգում և ծաղկունք է բերում: Նոր ծնունդ, նոր լեզուներ, նոր գինի, նոր երգեր և նոր սիրտ: Նա բերում է նոր հոգի, նոր ուխտ, նոր անուն՝ դարձնելով մեզ նոր արարած: Նա տվել է մեզ նոր պատվիրան և ստեղծել է նոր երկինք և նոր երկիր: Այնուամենայնիվ, այս ամենը անում է նույն Հոգին, որի նպատակը նույնն է՝ աշխարհի փրկությունը: Եվ մեր դերը դրանում Քրիստոսի գործակիցները լինելն է (տե՛ս Ա Կորնթ. 3.9):

ՄԵԾ ԿԱՄ ՓՈՔՐ ԿՐԱԿԵ ԼԵԶՈՒՆԵՐ

> *Դուք աստվածային ԴՆԹ ունեք: Այն զորությունը, որը կրում եք, բխում է անձամբ Աստծուց: Այն ավելի ցածր չէ Աստծո զորությունից, և ո՛չ էլ դրա կեղծիքն է. այն իրական է: Նա, Ով ձեզանում է, շատ ավելի մեծ և գերազանց է, քան նա, ով այս աշխարհում է (տե՛ս Ա Հովհ. 4.4): Եղե՛ք խիզախ և համարձակ:*

ԳՐՎԱԾ Է, ՈՐ ՊԵՆՏԵԿՈՍՏԵԻ ՕՐԸ, ԵՐԲ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ԵԿԱՎ աշակերտների վրա Վերնատանը, նրանց երևացին «բաժանված լե-

զուներ՝ ինչպես կրակից» (Գործք 2.3): ԲԱԺԱՆՎԱԾ ինչի՞ց: Կրակե լեզուները բաժանված էին ՄԵԾ ԿՐԱԿԻՑ՝ ԱՍՏԾՈՒՑ: Փոքրիկ կրակե լեզուները պոկվեցին Աստծուց, և մեկական կրակե լեզու իջավ ամեն մեկի վրա: Այդ կրակե լեզուներից ամենափոքրը ներկայացնում էր Աստծուն ճիշտ նույն կերպով, ինչպես և ամենամեծը:

ԱՅԼԵՎՍ ՈՉ ՍՈՎՈՐԱԿԱՆ

Այն աստվածային կրակը, որը գալիս է, երբ դուք մկրտվում եք Սուրբ Հոգով, փոխում է ձեր կարգավիճակը՝ ձեզ սովորականից արտասովոր դարձնելով: Դուք ստանում եք աստվածային առաքելություն և հանձնարարություն, որպեսզի այլևս չապրեք ձեզ համար, և հանձնում եք ձեր վախերն ու ձգտումներն աստվածային նպատակին: Դուք ընտրյալ անոթ եք դառնում:

ՄՈՎՍԵՍԸ ԹՓԵՐ ՈՒ ՄԱՑԱՌՆԵՐ ԷՐ ՏԵՍՆՈՒՄ ԱՄԵՆ ՕՐ՝ 40 ՏԱՐԻ

շարունակ: Նա չէր շրջում՝ նայելով և ուսումնասիրելով թփերը: Անապատային թփերը գեղեցիկ, մշակված, գունագեղ և ծաղկուն չեն: Դրանք բավականին անհրապույր են: Բայց Աստված վերցրեց դրանցից մեկը, որն ինքնին շատ սովորական էր, և արտասովոր դարձրեց: Այն բոցավառվեց, սակայն չսպառվեց (տե՛ս Ելից 3.2): Եվ Նա խոսեց դրա միջից. Նրա ձայնը եկավ վառվող մորենուց: Ինչ-որ առումով, Մովսեսը նման էր այդ մորենուն՝ սովորական, և նույնիսկ՝ ցածրակարգ: Նա նման էր հոսանքով տարվող լողարկափայտի. նա փախուստի դիմած մարդասպան էր, որը թաքնվում էր արդարադատությունից և չուներ ապագա: Նա ընդամենը հովիվ էր, և «ամեն հովիվ եգիպտացիների առջև գարշելի է» (Ծննդոց 46.34): Մովսեսը տեսավ, որ մորենին վառվում էր և չէր մոխրանում: Նա նույնիսկ գաղափար չուներ, որ այդ պահը փոխելու էր իր կյանքը: Հետաքրքրասիրությունից ելնելով՝ նա մոտեցավ և հիացմունքով նայում էր այդ տեսարանին: Եվ հանկարծ աստվածային կրակը դուրս ցատկեց այդ մորենուց և փոխանցվեց նրան: Մահկանացու Մովսեսը դարձավ Կրակե Մարդ: «Նա... արեց... Իր պաշտոնյաներին կրակի բոց» (Եբրայեցիների 1.7): Այն օրը, երբ դուք թեքվեք ձեր ճանապարհից՝ վառվող մորենին տեսնելու համար, այլևս սովորական չեք լինի:

ՁԵՐ ՅՈՒՐՕՐԻՆԱԿ ՕԾՈՒԹՅՈՒՆԸ

> *Դուք եզակի եք ստեղծված, օծված եք և նշանակված եք Աստծո կողմից Իր նպատակների համար՝ ձեր ժամանակի և ընթացքի մեջ: «Քո ուժը քո օրերի չափ կլինի» (Երկրորդ Օրինաց 33.25): Փոխարենը անհանգստանաք այն ամենի համար, ինչ չունեք, կենտրոնացե՛ք այն բաների վրա, ինչ ունեք, քա՛յլ արեք հավատքով և տեսե՛ք, թե ինչպես է Աստված գործում ձեր միջոցով:*

ՊԵՆՏԵԿՈՍՏԵԻ ՕՐԸ 120 ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ ՉԷԻՆ ԱՂԱՂԱԿՈՒՄ կրկնակի օծության համար: Ուշադրություն դարձրեք, որ ՈՉ ՈՔ ՉՀԵՌԱՑԱՎ ՎԵՐՆԱՏՆԻՑ՝ ԿՐԵԼՈՎ ԻՐ ԳԼԽԱՎԵՐԵՎՈՒՄ ԵՐԿՈՒ ԿՐԱԿԵ ԼԵԶՈՒ: Միայն մեկ կրակե լեզու «նստեց նրանցից ամեն մեկի վրա» (Գործք 2.3): Բայց այդ կրակե լեզուն խորհրդանշում էր Աստծո ամբողջական կրակը՝ Նրա իշխանությունը, զորությունը և փառքը: Երբ ես ճանապարհորդում եմ աշխարհով մեկ, ինձ հաճախ են խնդրում. «Աղոթե՛ք ինձ համար: Ես ուզում եմ ստանալ ձեր օծությունը»: Ես այսպես եմ պատասխանում նրանց: «Մի՞թե դուք կարծում եք, որ ես կտամ ձեզ իմ օծությունը և տուն կգնամ առանց դրա: Իհարկե՝ ո՛չ»: Բայց կա մի զարմանալի գաղտնիք: Եթե դուք ստանայիք Ռեյնհարդ Բոնկեի օծությունը, դուք կդառնայիք Բոնկեի պատճենը: Եվ թույլ տվեք ասել՝ անձամբ ես չէի ցանկանա լինել պատճենի պատճենը, և Աստված էլ չի ուզում դա ձեզ համար:

Եթե ուզում եք ինչ-որ բան հասկանալ Աստծո բնավորության մասին, պարզապես նայեք բնությանը: Ամբողջ աշխարհում ապրող ավելի քան 7.5 միլիարդ մարդկանցից ոչ ոքի մատնահետքերը չեն կրկնվում, և ամբողջ աշխարհում չկա երկու տերև, որոնք ունեն միևնույն կառուցվածքը: Ինչո՞ւ: Քանի որ Աստված պատճեններ պատրաստող չէ. Նա Արարիչ է: Նա ստեղծում է միայն ՅՈՒՐՕՐԻՆԱԿ բաներ և չի աշխատում պատճենահանող սարքով: Ձեր ստացած կրակե լեզուն այնքան անձնական է, որ այն կրում է ձեր անունը: Այն ստեղծված է հատուկ ձեզ համար: Այն այլևս չի համապատասխանի ոչ ոքի: Ոչ ոք այս երկրում չի կարող ծառայել Աստծուն այնպես, ինչպես դուք: Դուք յուրօրինակ եք, և ձեր օծությունը՝ նույնպես:

ԱՎԵԼԻ, ՔԱՆ ԿՐԿՆԱԿԻ ՉԱՓԸ

«Ճշմարի՛տ, ճշմարի՛տ ասում եմ ձեզ, թե Ինձ հավատացողը, այն գործերը, որ Ես գործում եմ, նա էլ կգործի, և նրանցից է՛լ ավելի մեծ բաներ կգործի, որովհետև Ես Իմ Հոր մոտ եմ գնում: Եվ ինչ էլ, որ խնդրեք Իմ անունով, այն կանեմ, որ Հայրը փառավորվի Որդում: Եթե Իմ անունով մի բան խնդրեք, Ես կանեմ»:

ՀՈՎՀԱՆՆԵՍ 14.12-14

ԱՍՏԾՈ ՄԱՏԸ

> *Կա մի մատ, որն ուղղված է ձեզ վրա, բայց այն կործանման մատ չէ: Այն Աստծո Մատն է, որի նպատակն է՝ օրհնել, առանձնացնել և զորացնել ձեզ՝ Իրեն ծառայելու համար, որպեսզի դուք բժշկեք հիվանդներին, հարություն տաք մեռելներին և դևեր հանեք: Աստծո մատը Սուրբ Հոգին է (տե՛ս Գործք 10.38): Նա ազատում է ձեզ խավարի ամեն ուժից և արձակում է Աստծո բարությունը ձեր կյանքում:*

ԻՍՐԱՅԵԼԻ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏՐՎԱԾ ԷԻՆ «ԻՍՐԱՅԵԼԻ քաղաքակցությանը»՝ ուխտի համեմատ (տե՛ս Եփես. 2.12): Քրիստոս Հիսուսը միացրեց հրաշքները նոր քրիստոնեական քաղաքակցությանը. «Եթե Ես Աստծո մատով եմ հանում դևերը, ուրեմն Աստծո արքայությունը ձեզ վրա հասել է» (Ղուկաս 11.20): Չկա ավելի մեծ զորություն, քան Սուրբ Հոգու զորությունը: Այն Աստծո թագավորության զորությունն է, և ոչ մի ուժ չի կարող հավասարվել դրան: Հոգու միջոցով Նա բաժանում է Իր ծառայությունները այն մարդկանց, որոնց ցանկանում է:

ԵՂԻԱՅԻ ՎԵՐԱՐԿՈՒՆ

> *Հիսուսն ասաց. «Ահա Սողոմոնից էլ մեծն է այստեղ» (Մատթեոս 12.42), «Աբրահամի լինելուց առաջ եմ Ես» (Հովհաննես 8.58), և Հովհաննես Մկրտչի վերաբերյալ. «Եթե կամենում եք ընդունել, նա Եղիան է, որ գալու էր» (Մատթեոս 11.14): Կարևոր է հասկանալ, որ դուք ստացել եք մի վերարկու, որը շատ ավելի գերազանցում է այն, ինչ ուներ Եղիան. դուք ստացել եք Հիսուսի վերարկուն՝ Սուրբ Հոգու մկրտությունը:*

ՀՈԳԵԳԱԼՍՏԱԿԱՆ-ԽԱՐԻԶՄԱՏԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՆՍՈՎՈՐ բան չէ լսելը, որ մարդիկ աղոթում են Եղիայի վերարկուի համար, որպեսզի Եղիայի պես կրակ իջեցնեն և հրաշքներ ու նշաններ գործեն: Այնուամենայնիվ, Հիսուսը պարզ ասում է. «Նրանց էլ, որ հավատացին,

այս նշանները կհետևեն. Իմ անունով դևեր կհանեն, նոր լեզուներով կխոսեն, օձեր վեր կառնեն, և եթե մի մահադեղ խմեն, նրանց վնաս չի տա, հիվանդների վրա ձեռք կդնեն, և նրանք կառողջանան» (Մարկոս 16.17,18): Արդյո՞ք մենք պետք է աղոթենք Եղիայի վերարկուի համար: Չեմ կարծում: Հիսուսը տալիս է մեզ Իր վերարկուն՝ Սուրբ Հոգու մկրտությունը: Մենք միայն պետք է հավատանք և վարվենք դրա համեմատ, և նշաններն ու հրաշքները կհետևեն մեզ:

ԱՆՀԱՎԱՆԱԿԱՆԸ

> *Տեր Աստված ոչ միայն «մեր միջև» է, այլև մեր ներսում է: Պնդումները Նրա բացակայության մասին անհավանական են: Կարիք չկա փնտրել Նրա ներկայությունը, ծոմ պահել դրա համար, պահանջել կամ դավանել այն: Նրա ներկայությունն անբաժան է քրիստոնեական հավատքից:*

ՄԱՐԳԱՐԵՆԵՐԸ ԿԱՆԽԱՍԵՑԻՆ ՍԱ, ԲԱՅՑ ԱՅԴՊԵՍ ԷԼ չվերապրեցին: Վերջինը մարգարեներից՝ Հովհաննես Մկրտիչը, ասաց. «Ես ջրով եմ մկրտում ձեզ... բայց... Նա ձեզ կմկրտի Սուրբ Հոգով և կրակով» (Մատթեոս 3.11): Որպես փրկության մաս՝ Նոր կտակարանի հավատացյալները վայելում են Աստծո հետ մտերմության նոր խորություն: Բացի այն, որ մենք ունենք շփում Աստծո հետ, Նա բնակվում է մեզանում՝ ամեն մարդու մեջ, ով փրկված է Նրա շնորհքով (տե՛ս Հովհ. 14.17): Կարիք չկա, որ մենք վաստակենք Նրա ներկայությունը. Նրա սերը երաշխավորում է այն: Եթե մենք վերստին ծնված ենք և մաքրված ենք մեր մեղքերից Աստծո Գառան արյամբ, կարիք չկա, որ ինչ-որ բան անենք՝ Նրա ներկայությունը ստանալու համար. Նա արդեն իսկ մշտապես մեզ հետ է: Սա մեր հավատքի փառքն է:

ՆԱ ԲՆԱԿՎՈՒՄ Է ՄԵԶ ՀԵՏ

Աստված մոտ է մեզ ցերեկ ու գիշեր: Եթե Նա սպասի եկեղեցում, մինչ մենք բախվում ենք կյանքի մարտահրավերներին, ինչպե՞ս Նա կարող է փրկել մեզ և լինել մեր զորությունը: Հեթանոսները գնում են իրենց աստվածների տաճարները, բայց Քրիստոսը միշտ մեզ հետ է: Նա ինձ հետ է հիմա, երբ ես գրում եմ՝ նստած իմ սեղանի մոտ, նույն կերպով, ինչպես այն ժամանակ, երբ քարոզում եմ ավետարանչական հավաքույթներին: Մենք փոփոխական ենք, իսկ Նա՝ ոչ (տե՛ս Հակոբ. 1.7): Հանգամանքները չեն թելադրում Նրան: Նա չունի տրամադրություններ և չի շահարկվում մեր տրամադրություններով: Նա շարունակ չի գալիս ու հեռանում՝ կախված մեր զգացմունքներից: Մենք փոփոխական ենք, բայց Նա հավիտյան նույնն է:

ԱՅՆՊԵՍ ՉԷ, ՈՐ ԱՍՏՎԱԾ ՄԵԶ ՀԵՏ Է ՄԻԱՅՆ՝ ԵՐԲ ՄԵՆՔ հոգևորապես ենք տրամադրված: Որտեղ էլ լինենք, Նա մեզ հետ է, նույնիսկ երբ քնած ենք կամ չենք մտածում այն մասին, որ Նա մոտ է: Սաղմոս 4.8-ում գրված է. «Ես խաղաղությամբ կպառկեմ և կքնեմ, որովհետև Դու ես միայն, ո՛վ Տեր, ինձ ապահովությամբ բնակեցնում»: Մենք կարող ենք ապահով բնակվել, քանի որ Նա «բնակվում է» մեզ հետ: Քրիստոսն ասաց. «Եվ ահա Ես ձեզ հետ եմ ամեն օր՝ մինչև աշխարհի վերջը» (Մատթեոս 28.20):

ԹԱԳԱՎՈՐԱԿԱՆ ՔԱՀԱՆԱՅՈՒԹՅՈՒՆ

«Բայց դուք ընտիր ազգ եք, թագավորական քահանայություն, սուրբ ազգ, սեփական ժողովուրդ, որ քարոզեք Նրա առաքինությունները, որ ձեզ խավարից կանչեց Իր զարմանալի լույսի մեջ»:

Ա ՊԵՏՐՈՍ 2.9

ԿՐԱԿՈՎ ՊՍԱԿՎԱԾ ԳԼՈՒԽՆԵՐ

Դուք թագադրված արքայազններ և արքայազնուհիներ եք: Աստված պսակել է ձեզ փառքով և կրակով: Դուք կրում եք իշխանություն և զորություն ձեր գլխի վրա՝ Սուրբ Հոգու կրակե լեզուները: «Ահա իշխանություն տվեցի ձեզ՝ կոխել օձերի և կարիճների վրա և թշնամու ամբողջ զորության վրա» (Ղուկաս 10.19): Դուք անզոր չեք: Մի՛ վախեցեք թշնամու առջև և մի՛ ապրեք հասարակ կյանքով:

ԴՈՒՔ ՍՏԵՂԾՎԱԾ ԵՔ ԿՐԱԿԵ ՊՍԱԿ ԿԱՄ ԿՐԱԿԵ ԹԱԳ ԿՐԵԼՈՒ համար: Ոչ մի կոմիտե չի որոշել դա: Աստծո կամքն է, որ յուրաքանչյուր հավատացյալ կրի այդ կրակե լեզուն՝ Սուրբ Հոգու զորության արքայական ՊՍԱԿԸ: Մեր գլխին դրված է ազնվազարմ ԿՐԱԿԵ ՊՍԱԿ, ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ՃԱՆԱՉՈՒՄ, ԿԵՆԴԱՆԻ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԹԱԳ: Մենք մկրտված ենք Հոգով, այսինքն՝ ՊՍԱԿՎԱԾ ԵՆՔ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՄԲ:

Երբ Մովսեսն օրհնում էր Իսրայելին, նրա խոսքերը Հովսեփի մասին գեղեցիկ պոեզիայից ավելին էին (տե՛ս Երկր. Օր. 33.13-17): Այն, ինչ նա ասաց, մարգարեական խոստում էր. «Թող որ վառվող մորենու մեջ Բնակվողի բարեհաճությունը հանգչի Հովսեփի գլխի վրա՝ նրա գագաթի վրա, որն իշխան է իր եղբայրների միջև»: Այն, որ մորենու մեջ Բնակվողի բարեհաճությունը թագադրում է Հովսեփին, սուրբգրային խոստում է մեզ համար: Երբ վառվող մորենու Աստված թագադրում է մեզ, այդ թագը հոգևոր վեհություն և իշխանություն է հաղորդում: Մենք սկսում ենք խոսել զորությամբ և վստահությամբ, քանի որ ՃԱՆԱՉՈՒՄ ենք Նրան, Ում իշխանությամբ խոսում ենք:

ԲԱՐՁՐ ԳԼԽՈՎ

Ավետարանը տրված չէ, որ հավասարեցնի բոլորիս նվազագույն ընդհանուր հայտարարին: Ավետարանի նպատակն է՝ ստեղծել նոր արարածների և տալ մեզ Աստծո որդիներին հատուկ արժանապատվություն: Նրանք, ովքեր մի ժամանակ չարագործներ էին, այժմ վերականգնվել են և արքայազններ են համարվում: Ալելուի՛ա: Ինչպիսի՛ պատճառ՝ Ավետարանը քարոզելու համար: Մի՞թե կա ավելի ոգևորիչ, արկածային և արժանի ճանապարհ: Մի՞թե կա այլ բան, ինչին արժե նվիրել մեր կյանքը:

ՀԱՎԱՏԱՑՅԱԼՆԵՐՆ ԱՅՍ ԱՇԽԱՐՀՈՒՄ ԿԱՐՈՂ ԵՆ ՔԱՅԼԵԼ ԲԱՐՁՐ գլխով՝ որպես Երկնքի թագավորության տիկնայք և պարոնայք՝ կրելով Աստծո ընտանիքի արժանապատվությունը: «Թող թույլն ասի՝ հզո՛ր եմ ես» (Հովել 3.10, NKJV): Մենք Փրկչի թանկ և արժեքավոր ձեռքբերումն ենք: Աստված մեզ հետ է: Մենք օժտված ենք Ամենակարողի զորությամբ, պաշտպանված ենք հրեշտակների կողմից, գոտեպնդված ենք ուժով, առաջնորդվում ենք ամենագետի կանչով, ներգրավված ենք Արարչի հավիտենական պատվերները կատարելու մեջ և օծված ենք շնորհքի բուրմունքով: Ավետարանը հավիտյան միավորում է Աստծուն և մեզ:

ԿԵՆԴԱՆԻ ԿՐԱԿ

> *Զարմանալի է, թե ինչպիսի մարդկանց է Աստված գործածում: Նա հազվադեպ է գործածում այս աշխարհի ազդեցիկ մարդկանց, փայլուն առաջնորդների կամ հայտնի կատարողների: Սովորաբար Նա ընտրում է նրանց, ովքեր չունեն մեծ ձեռքբերումներ այս աշխարհում: Աստված չի գործածում թագադրված պետական այրերին. Նա ընտրում է կրակով պսակվածներին: Նրա գործը կատարելու որակավորումը հավատքի և կրակի իշխանությունն է:*

ՀԻՍՈՒՍԸ ԿԱՐՈՂ ԷՐ ԳՈՐԾԱԾԵԼ ԲԱԶՄԱԹԻՎ ԿԵՍԱՐՆԵՐԻ ԵՎ իշխանների՝ Պիղատոսին, Կայիափա քահանայապետին և այդ ժամանակվա կրոնական և քաղաքական վերնախավին: Սակայն Նա անցավ բոլոր այդ մարդկանց կողքով և ընտրեց ցածր խավի պատկանող ձկնորսների և հարկահավաքների՝ անուսում և անբարեկիրթ առևտրականների, որոնք ապրում էին Գալիլեայի ծովի մոտ: Նրանցից մի քանիսը ստախոսներ էին, իսկ մեկը գող էր, սակայն, քանի որ նրանք ենթարկվող և զիջող էին, Նա կարող էր այս աշխարհը փոխողներ դարձնել նրանց, և այդպես էլ արեց: Մինչև օրս Հիսուսն անում է նույնը. Նա գործածում է ցանկացած կենսագրություն ունեցող տղամարդկանց և կանանց: Նա մաքրում է նրանց Իր արյամբ, զորացնում է Իր Հոգով և գործածում է՝ այս աշխարհը փոխելու համար: Դուք նույնպես կարող եք լինել նրանցից մեկը՝ լինել կենդանի կրակ:

ՆՈՐ ՉԱՓՈՒՄՆԵՐ ՓԱՌՔԻ ԵՎ ԶՈՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

«Պետրոսը և Հովհաննեսը միասին գնում էին տաճարը իններորդ ժամի աղոթքին: Եվ մի մարդ կար՝ իր մոր որովայնից կաղ, որին վերցրած ամեն օր դնում էին տաճարի այն դռան մոտ, որ Գեղեցիկ էր կոչվում՝ տաճարը մտնողներից ողորմություն խնդրելու համար: Երբ որ նա տեսավ Պետրոսին և Հովհաննեսին, որ գնում էին մտնեն տաճարը, աղաչում էր, որ ողորմություն առնի նրանցից: Պետրոսը Հովհաննեսի հետ մտիկ արեց նրան և ասաց. «Մե՛զ նայիր»: Նա էլ ուշը դարձրեց դեպի նրանց՝ սպասելով, որ մի բան առնի նրանցից: Պետրոսն էլ ասաց. «Արծաթ և ոսկի չունեմ, բայց ինչ որ ունեմ, այն քեզ կտամ: Հիսուս Քրիստոսի՝ Նազովրեցու անունով, վե՛ր կաց և մա՛ն եկ»: Եվ աջ ձեռքից բռնեց, վեր կացրեց նրան: Եվ շուտով հաստատվեցին նրա սրունքը և բարձքը: Վեր թռավ, կանգնեց և ման էր գալիս և նրանց հետ մտավ տաճարը՝ ման գալով և վազ տալով և Աստծուն օրհնելով: Եվ ամբողջ ժողովուրդը տեսավ նրան, որ ման էր գալիս և Աստծուն օրհնում էր: Եվ ճանաչում էին նրան, որ սա էր, որ ողորմության համար նստում էր տաճարի Գեղեցիկ դռանը: Եվ լցվեցին երկյուղով և զարմանքով այն եղածի համար»:

ԳՈՐԾՔ 3.1-10

ՆՈՐ ՉԱՓՈՒՄ

> *Հոգով մկրտությունը, որի նշանը լեզուներով խոսելն է, նոր Բարեփոխում, նորոգություն կամ զարդարանք չէ: Հոգով մկրտությունն ազատություն է տալիս մեզ և նոր չափում է հաղորդում քրիստոնեական վարդապետությանը: Հոգով մկրտությունը՝ այն, որ Սուրբ Հոգին զորությամբ է օժտում մեզ, ցույց է տալիս, թե ինչպիսին է Նա:*

ՀԻՆ ՈՒԽՏԻ ՄԱՐԳԱՐԵՆԵՐԸ ՀՈԳՈՎ ՄԿՐՏՎԱԾ ՉԷԻՆ, ԲԱՅՑ նրանք շարժվում էին Հոգով, երբ Նա գալիս էր իրենց վրա: Հենց դա էր ցույց տալիս, որ նրանք մարգարեներ էին: Երբեմն նրանց միջոցով նաև հրաշքներ էին տեղի ունենում: Երբ այդ գերբնական գործերը հայտնվում էին, վերագրվում էին Աստծո շնչին: «Շունչ» բառը եբրայերենում նույնն է, ինչ Հոգին *(«ռուախ»)*: Երբ Աստված հպվեց Սավուղ թագավորին, բոլորը տեսան դա: Նրանք ասացին, որ Աստծո շունչը կամ Հոգին եկավ Նրա վրա: Հին ուխտում Նա չէր բնակվում մարդկանց մեջ, այլ ժամանակ առ ժամանակ գործածում էր նրանց՝ հատուկ նպատակների համար: Նոր ուխտում Սուրբ Հոգին բնակվում է հավատացյալների մեջ և զորացնում է նրանց. այնպես որ, Նոր ուխտի վերապրումը շատ ավելի գերազանց է, քան այն, ինչ Հին ուխտում էր:

ԳԱՆՁԵՐ՝ ՀՈՂԵ ԱՆՈԹՆԵՐՈՒՄ

> *Սուրբ Հոգին գանձ է, որը մեր ներսում է, բայց մենք նման չենք զարդերով և թանկարժեք իրերով լի գանձերի սնդուկի, որը ծովի հատակին գտնվող խորտակված նավի մեջ է՝ ժանգոտած, սառը և անգործ: Մենք անոթներ ենք, որոնք կրում են մաքուր, տաք, հեղուկ ոսկի: Անհնար է հպվել կամ նայել մեզ՝ առանց ջերմություն զգալու:*

ՈՎՔԵ՞Ր ԱՎԵԼԻ ԱՆՀԵԹԵԹ ՏԵՍՔ ՈՒՆԵՆ: ԱՅՆ ՄԱՐԴԻԿ, ՈՐՈՆՔ ուրախությամբ պարո՞ւմ են՝ համակված Աստծո տեսիլքով, թե՞ նրանք, ովքեր անխռով կեցվածք ունեն՝ նման Սֆինքսին, որը չսա-

սանվեց տեղից, նույնիսկ՝ Նապոլեոնից թնդանոթի զարկ ստանալուց հետո: Մարմինը և արյունը քարից չեն և չպետք է անարձագանք թողնեն Հոգու հպումը: Մենք «գանձ» ենք կրում մեր երկրային անոթներում, որպեսզի հայտնի լինի, որ մեզանում գործող գերազանց զորությունն Աստծուց է (տե՛ս Բ Կորնթ. 4.7): Հանդիպելով մեզ՝ Աստծուց օտարացած միտք ունեցող մարդիկ պետք է բացահայտեն այն, ինչի մասին իրենք նույնիսկ պատկերացում չունեին, նման այն բանին, որ Փեստոսն ասաց Պողոսին. «Գժվում ես, Պողո՛ս, շատ կարդացողությունները մոլորեցնում են քեզ» (Գործք 26.24): Մի՞թե մարդիկ, ովքեր այսօր հանդիպում են իրական քրիստոնեությանը, կարող են այլ արձագանք ունենալ:

ԱՎԵԼԻ, ՔԱՆ ՈՒՆԱԿ

«Եթե Աստված մեր կողմն է, ո՞վ է մեզ հակառակ, որ Իր Որդուն էլ չխնայեց, այլ մեր ամենի համար մատնեց Նրան, էլ ինչպե՞ս Նրա հետ ամեն բան չի շնորհի մեզ... Ո՞վ կբաժանի մեզ Քրիստոսի սիրուց. տառապա՞նք, թե՞ նեղություն, թե՞ հալածանք, թե՞ սով, թե՞ մերկություն, թե՞ վտանգ, թե՞ սուր... Բայց այս բոլոր բաներում առավել ևս հաղթում ենք Նրա միջոցով, որ մեզ սիրեց: Որովհետև հաստատ գիտեմ, որ ո՛չ մահ, ո՛չ կյանք, ո՛չ հրեշտակներ, ո՛չ իշխանություններ, ո՛չ զորություններ, ո՛չ ներկա բաներ, ո՛չ գալու բաներ, և ո՛չ բարձրություն, ո՛չ խորություն, և ո՛չ մեկ ուրիշ ստեղծված բան կարող է մեզ բաժանել Աստծո սիրուց, որ մեր Տեր Հիսուս Քրիստոսում է»:

ՀՌՈՄԵԱՑԻՆԵՐԻ 8.31,32,35,37-39

ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՆՀԱՐԹ ՏԵՂԱՆՔԻ ՀԱՄԱՐ

> *Քրիստոնյան տկար չէ. նա անպաշտպան տեսակ չէ, որը ենթակա է բնության տարերքների քմահաճույքին և մարդկային դաժանությանը: Ինչպես Եսթերի դեպքում, նույնիսկ ամենից ազնվական, արքայական և նրբանկատ հավատացյալների հետ կատակներ անելը վտանգավոր է (տե՛ս Եսթեր 7.3-10): Սուրբ Հոգու զորությունն առյուծի պես համարձակ է դարձնում մեզ (տե՛ս Առակ. 28.1): Մենք մռնչում ենք Հուդայի ցեղի Առյուծի պես, և ինչո՞ւ ոչ: Մենք Աստծո որդիները և դուստրերն ենք:*

ԵՐԲ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ԵԿԱՎ ՀԱՎԱՏԱՑՅԱԼՆԵՐԻ ՎՐԱ, ՆՐԱՆՔ ստացան ավելին, քան հրաշքներ ու նշաններ գործելու զորությունն է: Նա դիմացկուն դարձրեց նրանց՝ սպասվող մարտահրավերների և հալածանքների համար: Սուրբ Հոգու գալուստի հետ առաքյալներն իրենց ներսում բացահայտեցին նոր եռանդ, նոր ուժ և նոր զորություն, որը գործում էր իրենց տկարության մեջ՝ դրդելով գնալ դաժան հեթանոսական աշխարհ՝ կռապաշտությունը կործանելու և պատմությունը փոխելու համար: Սա Հոգով լցված կյանքի ճշմարիտ հատկանիշ է:

ՄՇՏԱԿԱՆ ԳԱՐՈՒՆ

> *Հոգով լցված կյանքն այնպիսի վերապրում չէ, որը պետք է զարգացնել հատուկ միջավայրում՝ ջերմոցային շուշանների պես: Քրիստոնյաները ծաղիկներ չեն: Սուրբ Հոգին դարձնում է հավատացյալներին դիմացկուն՝ բոլոր պայմանների համար: Նրանց սրտում մշտական գարուն կա, բայց նրանք պատրաստ են «ձմեռային պայմանների»:*

ԴՈՒՔ ՆՄԱՆ ՉԵՔ ՁԵՐՄՈՑՈՒՄ ԱՃԵՑՐԱԾ ԲՈՒՅՍԻ, ՈՐԸ ՄԻԱՅՆ կարող է ապրել հատուկ պայմաններում և անկարող է ինքնուրույն գոյատևել: Հավատացյալը տնկված է կենդանի ջրի աղբյուրների մոտ: Ձեզանում մշտական գարուն կա. ձեր տերևները չեն թառամում՝ անկախ արտաքին պայմաններից և միջավայրից: Անկախ հանգամանքներից՝ դուք պտուղ կբերեք Աստծո համար (տե՛ս Սաղմ. 1):

ԲՈՒԽԱՐԻ

> *Առանց բուխարու՝ ամենահաճելի տունը կարող է անցանկալի թվալ ցուրտ ձմռանը: Նման վառարանի՝ դուք ստեղծված եք, որ ջերմություն և հարմարավետություն բերեք այս ցուրտ, խավար և չար աշխարհում: Թույլ տվեք, որ Աստծո Հոգու քամին փչի ձեր ածուխների վրա՝ հեռացնելով անհավատության և անհուսության փոշին: Երբ ավելացնեք Աստծո Խոսքից վերցրած հավատքի փայտեր ձեր բուխարուն, այն կվառվի Սուրբ Հոգու կրակով և մեծ ջերմություն կտա:*

ԱՍՏՎԱԾ ՍՏԵՂԾԵՑ ՄԱՐԴՈՒ ՍԻՐՏԸ՝ ՈՐՊԵՍ ԲՈՒԽԱՐԻ: Սկզբում պետք է գար «սաստիկ փչող քամին», որպեսզի ամբողջությամբ քշեր-տաներ մոխիրն ու աղբը, և հետո միայն՝ կրակը (տե՛ս Գործք 2.1-4): Իրական կրակը ջերմություն է արձակում: Ձուկն ունի միևնույն ջերմաստիճանը, որն ունի այն ջուրը, որտեղ այն լողում է, և որոշ քրիստոնյաներ ճիշտ այդպիսին են: Նրանք ունեն այս աշխարհի անաստված զվարճությունների ջերմաստիճանը, և զարմանում են, թե ինչն է իրենց կյանքում սխալ: Երբ մեր բուխարու մեջ կրակ կա, մենք տաք ենք և փոխում ենք մեր միջավայրի ջերմաստիճանը:

ԿՐԱԿԸ ԽՆԴԻՐՆԵՐ է ԼՈՒԾՈՒՄ

> *Սատանան հարմարավետ է զգում իրեն այնտեղ, որտեղ մարդիկ հոգևորապես սառն են՝ անկախ այն բանից, թե որքան կրոնական են նրանք: Լցվե՛ք Սուրբ Հոգու կրակով, և այդ ջերմությունը կհեռացնի թշնամուն:*

ՄԻ ԿԻՆ ԱՍԱՑ ԻՆՁ. «ԻՄ ԳԼԽԻՆ ԴԵՎ է ՆՍՏԱԾ»: «ԴՈՒՔ ԱՍՏԾՈ զավա՞կ եք», - հարցրի ես: Նա գլխով արեց: Ես զարմացել էի: Հանկարծ Սուրբ Հոգին խոսեց ինձ հետ, և ես հարցրի նրան. «Դուք գիտե՞ք, որ ճանճերը սիրում են նստել սառը վառարանի վրա, հաճախ՝ երկար ժամանակ: Լցվե՛ք Սուրբ Հոգու կրակով և ջերմությամբ, և ձեր

խնդիրը դևերի հետ՝ հավիտյան կլուծվի»: Եթե ձեր «վառարանը» տաք է, և ինչ-որ ճանճ մոտենա ձեզ, անմիջապես կզգա տաքությունը և արագորեն հեռու կփախչի: Փա՛ռք Աստծուն, մենք պաշտպանված ենք «կրակե պարսպով»՝ Սուրբ Հոգու կրակով:

ԴՈՒՔ ԵՐԲԵՔ ՄԻԱՅՆԱԿ ՉԵՔ

«Եվ հիմա այսպես է ասում Տերը՝ քեզ Ստեղծողը, ո՛վ Հակոբ, և քո Արարիչը, ո՛վ Իսրայել. մի՛ վախեցիր որովհետև Ես քեզ փրկել եմ, քո անունով կանչել եմ, թե դու Իմն ես: Երբ որ ջրերից անցնես, Ես քեզ հետ եմ, և եթե՝ գետերով, նրանք քեզ չեն ողողի. երբ որ գնաս կրակի միջով, չես այրվի, և բոցը քեզ չպիտի վառի, որովհետև Ես՝ Տերս, քո Աստվածն եմ, Իսրայելի Սուրբս քո Փրկիչն եմ...»:

ԵՍԱՅԻ 43.1-3

ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ԵՐԱՇԽԻՔ

> *Աստված չի տվել մեզ Իր ներկայությունը խմբային ձևով: Ո՛չ, Նրա ներկայության, այսինքն՝ Նրա Սուրբ Հոգու պարգևը տրված է մեզ անձնապես: Այն ձեզ համար է: Այն ինձ համար է: Այն յուրաքանչյուրիս համար է՝ անհատապես:*

ԱՍՏՎԱԾ ԱՍԱՑ. «ԻՆՉՊԵՍ ՈՐ ՄՈՎՍԵՍԻ ՀԵՏ ԷԻ, ՔԵԶ ՀԵՏ ԿԼԻՆԵՄ» (Հեսու 1.5): Գրված է. «Տերը Հովսեփի հետ էր» (Ծննդոց 39.2): Այս անհատական հավաստիացումը վերաբերում էր ամբողջ Իսրայելին՝ հավիտյան: Նա ասաց այդ առաջնորդներին, որ չի ձախողի իրենց, և այդ խոստումը վերաբերում էր ամբողջ ազգին: Մենք կարդում ենք Աստվածաշնչում, որ Նա շատ վաղուց խոստացել է մոտ լինել բոլոր հավատացյալներին, և Նրա խոստումն անորոշ չէ: Դա անձնական երաշխիք է ինձ համար, ձեզ համար և Աստվածաշնչի ամեն մի ընթերցողի համար:

ԱՍՏՎԱԾ ԱՎԵԼԻ ՄԵ՞Ծ ՉԱՓՈՎ

> *Ձեզանում բնակվում է ամբողջական Սուրբ Հոգին՝ Իր Անձով և զորությամբ, ոչ թե՝ մասնակի Սուրբ Հոգի: Նա ներկա չէ մի փոքր չափով: Ձեզ պետք չէ Աստված՝ ավելի մեծ չափով, քանի որ Նա ձեզանում է՝ ամբողջովին և լիարժեք: Պարզապես անձնատո՛ւր եղեք Նրան, հավատացե՛ք, որ Նա իրականում լիարժեքորեն ձեզ հետ է, և դուք կտեսնեք Սուրբ Հոգու զարմանալի դրսևորումները ձեր կյանքում:*

ԱՍՏՎԱԾ՝ ԱՎԵԼԻ ՄԵ՞Ծ ՉԱՓՈՎ: ԽՆԴՐՈՒՄ ԵՄ, ՀԱՍԿԱՑԵՔ հետևյալը. Եթե մենք օվկիանոսի մեջ ենք, մենք թրջված ենք, և չենք կարող ավելի շատ թրջվել: Մենք թրջված ենք Հոգու Խաղաղ օվկիանոսի բոլոր ջրերով, Հոգու Ատլանտյան օվկիանոսի բոլոր ջրերով, ոչ թե մի կաթիլ ջրով՝ մանկական ջրի դույլից: Այն թրջվածությունը՝ այն ջուրը, որը կպած է մեզ, գտնվում է Աստծո անափ հարստությունների մեջ: Մտածե՛ք այս մասին: Պողոս առաքյալն ասաց. «Որովհետև մենք էլ՝ ամենքս, մեկ

Հոգով մկրտվեցինք՝ մեկ մարմին լինելու... և ամենքս մեկ Հոգուց խմեցինք» (Ա Կորնթացիների 12.13): Այս իրողության հոգևոր նշանը կրակն է՝ ջերմեռանդությունը, իսկ ֆիզիկական նշանը լեզուներով խոսելն է:

ԿՐԿՆԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ

> *Հայրը միանում է Որդուն, որպեսզի պատշաճ կերպով հոգ տանի մեր մասին. «Ձեր կյանքը ծածկված է Քրիստոսի հետ՝ Աստծո մեջ» (Կողոսացիների 3.3): Ես սիրում եմ մտածել, որ սա նման է անվտանգ սենյակում ապահով կերպով փակված լինելուն: Մենք կրկնակի ապահովության մեջ ենք: Ոչինչ չի կարող բաժանել մեզ:*

ԵՍ ԱՊՐՈՒՄ ԵՄ ԱՅՆ ՎՍՏԱՀՈՒԹՅԱՄԲ, ՈՐ ԼԿԱՑՎԱԾ ԵՄ ՀԻՍՈՒՍԻ արյամբ, և ոչ ոք չի կարող խլել ինձ Նրա ձեռքից (տե՛ս Հովհ. 10.28-30): Սատանան չի կարող փախցնել իմ անձը: Այն ծածկված է Քրիստոսի հետ՝ Աստծո մեջ, և այն կրում է Քրիստոսի արյան կնիքը (տե՛ս Ա Պետր. 1.18,19): «Ուրա՛խ եղեք... դարձյալ ասում եմ՝ ուրա՛խ եղեք» (Փիլիպեցիների 4.4):

ՇՏԿՈՒՄ՝ ԱՂՈԹՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

> *Թո՛ւյլ տվեք, որ այս ճշմարտությունը խորապես թափանցի ձեր անձի մեջ: Թո՛ւյլ տվեք, որ այն արտացոլվի ձեր կյանքում, ինչ էլ անեք, և ուր էլ գնաք: Տերը ձեզ հետ է: Նա երբեք չի թողնի և չի լքի ձեզ (տե՛ս Եբր. 13.5): Սա ծեծված արտահայտություն կամ խարիզմատական ժարգոն չէ: Սա հոգևոր ճշմարտություն և իրողություն է:*

ՄԵՆՔ ՍՈՎՈՐ ԵՆՔ ԱՂՈԹԵԼ, ԻՆՉՊԵՍ ՈՐ ԵՍ ԷԻ ԱՂՈԹՈՒՄ, երբ երիտասարդ էի. «Տեր Հիսո՛ւս, խնդրո՛ւմ եմ, ե՛կ մեզ մոտ»: Մեկ օր արթնացա և հարցրի ինձ. «Ինչպե՞ս ես կարող եմ խնդրել ինչ-որ մեկին գալ ինձ մոտ, եթե նա խոստացել է, որ երբեք չի թողնի ինձ»: Հիսուսը խոստացավ երբեք չթողնել մեզ (տե՛ս Մատթ. 28.20): Մենք պետք է գիտակցենք, որ Նա մշտապես մեզ հետ է, և փոխենք մեր աղոթքի հին ոճը:

ԿՐԱԿԵ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

ԲԱԺԻՆ 7

ԿՐԱԿԵ ԱՆՏԱՌ. ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ԵՎ ԵԿԵՂԵՑԻՆ

ՆՈՐ ԾՆՆԴՈՅ

«Եվ նրանք, որ նրա (Պետրոսի) խոսքը հոժարությամբ ընդունեցին, մկրտվեցին, և այն օրը երեք հազարի չափ հոգիներ ավելացան: Եվ միշտ հետևում էին առաքյալների վարդապետությանը և հաղորդությանը և հացը կտրելուն և աղոթքներին: Եվ ամեն անձի վրա վախ եկավ. շատ հրաշքներ և նշաններ էլ էին գործվում առաքյալների ձեռքով»:

ԳՈՐԾՔ 2.41-43

ԻՆՉՊԻՍԻ՞ ՊԱՐԳԵՎ

> *«Եվ հանկարծակի երկնքից մի հնչյուն եղավ՝ սաստիկ փչող քամու պես...» (Գործք 2.2): Սուրբ Հոգին եկավ մեծ թափով և զորության դրսևորմամբ: Եկեղեցին ծաղկունք է ապրում, երբ ծառայում է այս զորությամբ, և դժոխքի դռները չեն կարող հաղթել այն:*

ԵՐԲ ԼԻՈՎԻՆ ՀԱՍԿԱՆԱՔ, ԹԵ ԻՆՉ Է ՆՇԱՆԱԿՈՒՄ ՈՒՆԵՆԱԼ Սուրբ Հոգու մկրտությունը, դուք այլ մարդ կդառնաք: Դուք կմիանաք այն բանակին, որը կանգնած է Խաչի Խոսքի պարսպակործան մեքենայով և փոշիացնում է սատանայի ամրությունները՝ Աստծո անպարտելի բանակը, որն առաջ է գնում թմբուկների որոտալից հարվածների ներքո: Երբ Աստված լցրեց ինձ Իր Հոգով և բացեց իմ շուրթերը՝ լեզուներով խոսելու համար, Նա բացեց իմ ականջները՝ լսելու փողի հաղթական ձայնը, որն ազդարարում է, որ Հիսուսին է պատկանում ամբողջ զորությունը երկնքում և երկրի վրա: Ինչպիսի՞ պարգև:

ԱՌԱՋԻՆ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ

> *Առաջին քրիստոնեական համայնքը հանդիսավոր էր, բայց այն մի անզոր խմբի անաղմուկ հավաքույթ չէր: Այնտեղ կային մարգարեություններ, քարոզներ, փրկություններ և մկրտություններ: Աստծո Հոգին սկսեց գործել զորավոր կերպով, և Նա մինչև օրս կանգ չի առել:*

ՈՐՊԵՍԶԻ ԽՈՍԵՆՔ ՆՐԱ ՄԱՍԻՆ, ՄԵՆՔ ՆԱԽ ՊԵՏՔ Է հասկանանք, թե ով է Նա: Սուրբ Հոգին Պենտեկոստեի զորությունն է: Նա դրեց քրիստոնեական եկեղեցու սկիզբը: Մենք կարող ենք ճշտորեն ասել, թե երբ և որտեղ դա տեղի ունեցավ: Դա տեղի ունեցավ մ.թ. 29 թվականին՝ Պենտեկոստե կոչվող ամենամյա հրեական տոնի ժամանակ, որն անցկացվեց Քրիստոսի խաչելությունից 50 օր անց: Այդ առավոտ Աստծո Հոգին թափվեց այս աշխարհ՝ ոչ թե որպես հաճելի մթնոլորտ, այլ բառացիորեն որպես փոթորիկ (տե՛ս Գործք 2.1-4): Նա հայտարարեց Իր գալուստը հրաշքով. 120 աշակերտներ զորություն

ստացան և խոսեցին լեզուներով: Այդ աղմկոտ պոռթկումն առաջացրեց առաջին քրիստոնեական համայնքը:

ՄՇՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

> *Դուք չեք կարող հեռացնել Սուրբ Հոգուն եկեղեցուց: Սուրբ Հոգին բնակվում է. Նա եկել է՝ մնալու համար: Սա Նրա գործն է՝ Նրա հանձնարարականը: Նա մեզ հետ է միշտ, նույնիսկ՝ երկրի ծայրերում (տե՛ս Գործք 1.8): Նա մեզ հետ է՝ զորացնելու, խրախուսելու և առաջնորդելու համար: Այնպես չէ, որ մենք մի փոքր ստանում ենք Սուրբ Հոգուց, ինչը բավական է միայն կարճ ժամանակով, և հետո կրկին վերադառնում ենք, որպեսզի նոր չափաբաժին ստանանք՝ նման պարբերաբար հանրախանութ գնալուն: Մենք մշտապես լցված ենք:*

ԱՇԱԿԵՐՏՆԵՐՆ ԱՅԼԵՎՍ ՉՎԵՐԱԴԱՐՁԱՆ ՎԵՐՆԱՏՈՒՆ՝ ԻՐԵՆՑ վերապրումը կրկնելու համար: Հիսուսն ասաց աշակերտներին, որ Ինքը գնում է, բայց ուղարկելու է Մխիթարիչին, Ով երբեք չի հեռանա: Հիսուսը պետք է հեռանար, բայց ոչինչ չի կարող ստիպել Սուրբ Հոգուն բացակայել մեր կյանքից: Մշտականությունը Հոգու էական հատկանիշներից է: Հոգին ԲՆԱԿՎՈՒՄ է: Առաջին Հովհաննեսի 2.27-ում գրված է, որ օծությունը «բնակվում է»: «Բնակվել» բառը (հունարեն՝ *«մենո»)* Հովհաննեսի ամենասիրելի բառն է: Այն օգտագործվում է 120 անգամ Նոր կտակարանում, որոնցից 63-ը պատկանում է Հովհաննեսի գրչին: Նա օգտագործում է այն 38 անգամ իր Ավետարանում և 25 անգամ՝ իր նամակներում: Սա միայն մեկն է այն միջոցներից, որոնցով Հովհաննեսն ընդգծում է Աստծո օրհնության, զորության և օծության շարունակական բնույթը: Նա օգտագործում է նաև այլ միջոցներ: Նա խուսափում է այնպիսի բառերից, որոնք կարող են ենթադրել, որ Աստծո գործերն ավարտվել են, վերջացել են կամ ընդհատվել են անցյալում ինչ-որ պահի: Նա մշտապես ներկայացնում է Աստծո գործը շարունակական ձևով:

ԱՆՏՈՒՆ

Առանց եկեղեցու՝ Սուրբ Հոգին անտուն է: Նա նման է Նոյի աղավնուն, որը չգտավ հանգստի վայր տապանից դուրս: Առանց Աստծո Հոգու՝ եկեղեցին դամբարան է: Բայց Սուրբ Հոգու հետ եկեղեցին դառնում է զորավոր ամրոց: Այդ ժամանակ մենք նվաճումներ ենք ունենում, և ինքներս չենք նվաճվում:

«ՀԻՍՈՒՍՆ ԷԼ ԱՍԱՑ ՆՐԱՆ. «ԱՂՎԵՍՆԵՐԸ ՈՐՁԵՐ ՈՒՆԵՆ, ԵՎ երկնքի թռչունները՝ բույներ, բայց մարդու Որդին տեղ չունի, որ Իր գլուխը դնի» (Մատթեոս 8.20): Երբ Հիսուսն այս երկրի վրա էր, Նա առաքելություն ունեցող մարդ էր և չէր հավակնում որևէ բնակության վայրի: Բայց Սուրբ Հոգու միջոցով Նա գալիս է, որ բնակվի մեզ հետ (տե՛ս Հովհ. 14.23): Հոժար սրտերը և մտքերը տալիս են Աստծուն ավելին, քան հարթակ՝ Իր նպատակներն իրագործելու համար. նրանք տալիս են Սուրբ Հոգուն տուն՝ այս երկրի վրա: Աստված ցանկանում է բնակվել ձեր կյանքում: Ինչպես որ երկնքում է, այնպես էլ պետք է լինի ձեր կյանքում (տե՛ս Մատթ. 6.9-13): Աստված ցանկանում է, որ ձեր կյանքը լինի մխիթարության, ուրախության, խաղաղության և երջանկության վայր:

ԱՆՓՈՓՈԽ ՎԵՐԱՓՈԽՈՂԸ

«Եվ Պետրոսի և Հովհաննեսի համարձակությունը տեսնելով և գիտենալով, որ առանց ուսմունքի և տգետ մարդիկ են՝ զարմանում էին: Միայն ճանաչում էին նրանց, որ Հիսուսի հետ էին»:

ԳՈՐԾՔ 4.13

ՄԵԶ ՊԵՍ ԿՐՔԵՐ ՈՒՆԵՑՈՂ ՄԱՐԴԻԿ

> *Աբրահամ, Մովսես, Հեսու, Դեբորա, Եղիա և Եղիսե. այս անունները երկյուղածություն են ներշնչում, բայց նրանք մեզ պես կրքեր ունեցող մարդիկ էին (տե՛ս Հակոբ. 5.17): Նույն Հոգին, որը նրանց վրա էր, մեր մեջ է: Մենք չստացանք երկրորդական Հոգի կամ վերապրում, և մենք չպետք է ակնկալենք երկրորդական արդյունքներ:*

ՀՈԳՈՎ ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆՆ ՕԺՏՈՒՄ Է ՀԱՎԱՏԱՑՅԱԼՆԵՐԻՆ

Մարգարեների Հոգով: Երբ մարգարեները գերբնականորեն վերապրեցին Աստծուն, նրանք անվանեցին Նրան Մարգարեների Հոգի: Հովել 2.28-ը խոստանում է, որ նույն Մարգարեների Հոգին կթափվի ամեն մարմնի վրա: Կմարգարեանան բոլորը, ոչ թե միայն հատուկենտ մարդիկ: Ավելին՝ այս թափումը նախատեսված չէր լինի մեկանգամյա առաջադրանքի համար, այլ որպես Քրիստոսի մշտական պարգև՝ յուրաքանչյուրի համար: Պենտեկոստեի օրը, ինչպես որ գրված է Գործք առաքելոցում, «...մի հնչյուն եղավ՝ սաստիկ փչող քամու պես, և լցրեց ամբողջ տունը, ուր նստած էին... և... բաժանված լեզուներ՝ ինչպես կրակից, և նստեց նրանցից ամեն մեկի վրա»: Բոլորը խոսեցին նոր լեզուներով՝ «Աստծո մեծամեծ բաների» մասին: Հովելի մարգարեությունն այն էր, որ մարգարեանալու են թե՛ երիտասարդները, թե՛ ծերերը: Պետրոսը հայտարարեց. «Սա Հովել մարգարեի ձեռքով ասվածն է». նա մարգարեություն անվանեց նոր լեզուները (տե՛ս Գործք 2.15-17): Մարգարեությունը նշանակում է խոսել Աստծո զորության ներքո, և մենք տեսնում ենք սա այս վերջին օրերում, քանի որ օժտված ենք նույն Հոգով, որը հին ժամանակների մարգարեների վրա էր:

ՎԵՐԱՓՈԽՈՂ ԶՈՐՈՒԹՅՈՒՆ

> *Սուրբ Հոգու վերափոխող զորությունն անվիճարկելի է: Չկնորսները և գեղջուկները դարձան մեծ առաքյալներ. թույլ և անվճռական մարդիկ դարձան ուժեղ և ազդեցիկ: Նրանք դարձան առաջնորդներ Աստծո թագավորության մեջ՝ ցրելով այս աշխարհի խավարը Ավետարանի կրակով:*

ԴՈՒՔ ԿՄՏԱԾԵՔ, ՈՐ ԴԱ ԱՆՀՆԱՐԻՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ԷՐ. ՄԻ ԽՈՒՄԲ ձկնորսների հանձնարարվեց փոխել այս աշխարհը: Այնուամենայնիվ, այդ անուսում և անհայտ մարդիկ առաջխաղացում ունեցան՝ մի նոր գաղտնիքով: Աստված անձամբ գործում էր նրանց հետ հրաշքներով և նշաններով: Ավելին՝ Նա համակում էր նրանց հասարակ խոսքերը համոզվածությամբ և ուղղորդում էր դրանք դեպի ունկնդիրների սրտերը՝ նույնքան անսխալական և հզոր ձևով, որքան Դավթի քարը՝ Գողիաթի գլխին: Թեև նրանք չունեին տպավորիչ տաղանդներ, Աստծո Հոգին օժտում էր նրանց Իր շնորհքով: Նրանց «գաղտնիքը» պարզ էր. այն Սուրբ Հոգին էր:

ՄԵԶՆԻՑ ԱՄԵՆԱԼԱՎԵՐԻ ԵՎ ԱՄԵՆԱՎԱՏԵՐԻ ՀԱՄԱՐ

> *Սուրբ Հոգին չի ընտրում ուժեղ և ընդունակ մարդկանց, թեև Նա չի էլ անտեսում նրանց: Այնուամենայնիվ, Նրա գլխավոր նպատակն է՝ զորացնել տկարներին և կարիքավորներին: Նրանց տկարությունը գրավում է Նրա զորությունը, ինքնաբավ բնությունը և կենսատու ուժը: Նա գալիս է մեզնից ամենալավերի և ամենավատերի համար՝ որպես Հոր Խոստում՝ ուղարկված Որդու կողմից: Նայե՛ք Պետրոս առաքյալի կյանքին:*

ՊԵՏՐՈՍՆ ՈՒՐԱՑԱՎ ՀԻՍՈՒՍԻՆ ԵՐԵՔ ԱՆԳԱՄ՝ ԿԱՆԳՆԱԾ ԿՐԱԿԻ մոտ, այն գիշերը, երբ Հիսուսը ձերբակալվեց (տե՛ս Մարկ. 14.66-72): Հարցերն իր ինքնության մասին հանկարծակիի բերեցին նրան, և նա անհեթեթ կերպով ուրացավ իր Տիրոջը՝ Հիսուսին: Արցունքները թափվում էին նրա խռնված մորուքի վրա, և երբ Հիսուսը լուռ նայեց նրան, ապաշխարությունը սկսեց հալեցնել նրա սիրտը: Բայց ահա, թե ինչ կատարվեց Պետրոսի հետ Պենտեկոստեի օրը: Այդ օրը նա դարձավ Գառան առաքյալների խոսնակը և 3.000 մարդու առաջնորդեց դեպի Տերը (տե՛ս Գործք 2): Աստված այդպես է զորացնում ամենաթշվառ մարդկանց:

ՕԺՏՎԱԾ ԵԿԵՂԵՑԻ

«Պարգևները զանազան են, բայց Հոգին նույնն է: Եվ պաշտոնները զանազան են, բայց Տերը նույնն է: Եվ ներգործությունները զանազան են, բայց Աստված նույնն է, որ ամենը ամենի մեջ ներգործում է: Բայց ամեն մեկին տրված է Հոգու հայտնությունը՝ օգտի համար... Ինչպես էլ մարմինը մեկ է և անդամներ շատ ունի, և մեկ մարմնի բոլոր անդամները, շատ լինելով, մարմինը մեկ է, այսպես էլ՝ Քրիստոսը... Արդ դուք Քրիստոսի մարմինն եք, և մեկ-մեկ՝ Նրա անդամներ»:

Ա ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻ 12.4-7,12,27

ՎԱՌՎՈՂ ՄՈՐԵՆԻՆ

> *Նույնիսկ ամենամեկուսի և ամենաչոր անապատում վառվող մորենին հրաշալի է. այն լի է զորությամբ և հույս է ներշնչում: Աստված որոշել է, որ մեր եկեղեցիները լինեն վառվող մորենիներ, որոնց միջից Ինքը կխոսի: Վառվող մորենի տեսնելով՝ եկեղեցու մարդիկ կլսեն և կհասկանան Աստծո ձայնը: Մեզ պետք է վառվող մորենիների մի ամբողջ անտառ:*

ՄԵՆՔ ՄՈՐԵՆԻՆԵՐ ԵՆՔ, ՈՐՈՆՔ ՎԱՌՎՈՒՄ ԵՆ ԱՍՏԾՈ ՓԱՌՔՈՎ և Սուրբ Հոգու կրակով, ոչ թե թառամած եղեգներ՝ կեղտոտ ճահճուտի մեջ, որոնք թուլացած են, թաց են և չեն կարող վառվել: Երբ Մովսեսը հանդիպեց վառվող մորենուն, նրա կյանքը վերափոխվեց: Այդ անհույս, թափառական և աննպատակ մարդը ստացավ նպատակ Աստծուց, որը փոխեց նրա կյանքը, նրա ընթացքը և նրա ժողովրդին: Մի մարդ, ով թաքնվում էր օրենքից, զորություն ստացավ՝ վերադառնալու արդարության գավազանով, որպեսզի ազատեր ստրկության մեջ գտնվող մարդկանց: Աստծո կամքն է, որ մեր եկեղեցիները լինեն վառվող մորենիներ, որոնց միջից Նա կխոսի զրկված, անհույս, մոռացված և լքված մարդկանց՝ նրանց կյանքի նպատակ և ապրելու պատճառ տալու համար:

ԱՂՈԹՔԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ

> *Ծածուկ աղոթքը զորության գաղտնիքն է: Աղոթքի սենյակը Հոգու էլեկտրականն է: Այնուամենայնիվ, Աստված կամենում է ավելին: Նա կամենում է, որ Իր տունը լինի աղոթքի տուն՝ ազգերի համար (տե՛ս Եսայի 56.7): Թո՛ւյլ տվեք, որ աղոթքը գնա դեպի ազգերը և բարձրանա ազգերի համար, և թո՛ւյլ տվեք, որ աղոթքի բժշկարար ջրերը հեղեղեն ամբողջ երկիրը:*

ՀԻՍՈՒՍՆ ԱՍԱՑ. «ԲԱՑՑ ԴՈՒ, ԵՐԲ ՈՐ ԱՂՈԹՔ ԱՆԵՍ, ՄՏԻՐ ՔՈ սենյակը և դուռդ փակած աղոթք արա դեպի քո Հայրը, որ ծածուկում է» (Մատթեոս 6.6): Փակե՛ք ձեր աղոթքի սենյակի դուռը, և Երկնքի դու-

ռը կբացվի: Երբ աշակերտները Վերնատանն էին, փառքի պատուհանները բացվեցին, և Սուրբ Հոգին անձրևի նման թափվեց նրանց վրա (տե՛ս Գործք 2): Սատանան կփորձի խանգարել ձեզ, որ չաղոթեք, քանի որ աղոթքը կանգնեցնում է նրան: Նման աղոթքասենյակ-վերնատներ կան ամբողջ աշխարհում: Դրանք գտնվում են եկեղեցիներում, համալսարաններում և նույնիսկ կառավարական գրասենյակներում: Դրանք սովորական վայրեր են՝ լցված Ավետարանով և Հոգով լի քրիստոնյաներով: Աղոթքի սենյակը նման է էլեկտրակայանի: Այսօր «անդադար աղոթե՛ք» (Ա Թեսաղոնիկեցիների 5.17):

ԵԿԵՂԵՑԻՆ Ի՞ՆՉ ՉԷ

> *Նշաններից, հրաշքներից, նոր լեզուներից և բժշկություններից շատ ավելի առաջնահերթ է Աստծո Խոսքի քարոզումը և ուսուցումը: Հրաշքները միայն օժանդակում են ճշմարտությանը:*

ԱՄԵՆ ՄԻ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՆՊԱՏԱԿԸ պետք է լինի ավետարանչությունը: Ինչո՞ւ բոլոր հավաքույթները չպետք է բաց լինեն դրսի մարդկանց համար, հատկապես՝ Սուրբ Հաղորդության հավաքույթները, որոնցում ընդունվում են հացի և գինու խորհուրդները: Ինչպիսի՜ փայլուն հնարավորություն, նախ՝ փրկության մասին քարոզելու համար: Կարմիր գինու բաժակն աշխարհի մեծագույն քարոզիչն է՝ մեղավորներին իրենց մեղքի մեջ հանդիմանելու համար: Այն Ավետարանն է՝ բաժակի մեջ. այն հնարավորություն է՝ կոչ անելու կորսված մեղավորներին ընդունել խաչի զոհը: Մի՞թե միայն մաքուրները պետք է մոտենան աղբյուրին:

ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ՊԱՐԳԵՎՆԵՐԸ ՄԻԱՅՆ ՆՐԱ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԵՆ

Հոգու պարգևները չեն տրվել մեզ, որ խաղանք զորության հետ: Աստծո զորությունը պատրաստում է մեզ ԻՐ նպատակների համար, ոչ թե՝ ՄԵՐ. «Դու ստեղծեցիր բոլոր բաները, և Քո կամենալով կան և ստեղծվեցին» (Հայտնություն 4.11): Ինչպիսի՜ պատիվ է կանչված լինել՝ կառուցելու համար Աստծո հավիտենական թագավորությունը: Մեր մահկանացու ձեռքերը կարող են կառուցել Նրա հավիտենական թագավորությունը այս երկրի վրա: Չկա ավելի մեծ բան:

ԱՍՏԾՈ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ իշխանություն ունենալու ձգտումը եղել է Եկեղեցու ամենասկզբից: Հակոբոսը և Հովհաննեսը՝ տասներկու աշակերտներից երկուսը, խնդրեցին Հիսուսին. «Տո՛ւր մեզ, որ մեկը աջ կողմդ և մյուսը ձախ կողմդ նստենք Քո փառքում» (Մարկոս 10.37): Հիսուսի արձագանքը քաղաքավարի էր, բայց՝ խիստ. «Նույնիսկ եթե դուք կարող եք խմել Իմ բաժակը, և անկասկած կխմեք այն, Ես չեմ կարող շնորհել այն, ինչ խնդրում եք» (Մարկոս 10.39,40): Ամբողջ պատմության ընթացքում մարդիկ պայքարել են իշխանության, քաղաքական ազդեցության և տարածքների համար: Իրենց հերթին, հավատացյալները պայքարել են, որպեսզի դիրք ունենան եկեղեցում՝ ցանկանալով կառուցել իրենց թագավորությունը և կատարել իրենց ծրագրերը: Սակայն գոյություն ունի միայն մեկ բան, ինչը կարևոր է. Աստծո նպատակը: Հուսով եմ՝ մենք կարող ենք նվիրել մեզ, մեր տաղանդները և հավակնություններն Աստծո թագավորության կառուցմանը: Ի վերջո, մենք «Նրա ստեղծածն ենք՝ Քրիստոս Հիսուսով հաստատված բարի գործերի համար...» (Եփեսացիների 2.10):

ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ԿՈՄՊՈԶԻՏՈՐ Է

> *Չկա նույնիսկ երկու մարդ, որոնք գործում են Սուրբ Հոգով միևնույն կերպով: Նույնպես չկա երկու միանման եկեղեցի: Միաբանությունը չի նշանակում միատեսակություն, և մեկությունը չի նշանակում նույնություն:*

ՏԱՐԲԵՐՎԵԼԸ ՄԵՂՔ ՉԷ: «ՕԳՏԻ ՀԱՄԱՐ» ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ

Ա Կորնթացիների 12.7-ում հունարեն *«սիմֆերոն»* բառն է, որից առաջացել է *«սիմֆոնիա»* բառը: Սուրբ Հոգին կոմպոզիտոր է, Ով, որպես դիրիժոր, ղեկավարում է Իր իսկ ստեղծագործությունը՝ հասնելով ձայնակարգության և ներդաշնակության՝ բազմաթիվ միակցված թեմաների և երաժշտական գործիքների միջոցով: Նա կարիք չունի, և ո՛չ էլ ցանկանում է, որ բոլորը նվագեն միևնույն մեղեդին: «Պարգևները զանազան են, բայց Հոգին նույնն է: Եվ պաշտոնները զանազան են, բայց Տերը նույնն է: Եվ ներգործությունները զանազան են, բայց Աստված նույնն է, որ ամենը ամենի մեջ ներգործում է» (Ա Կորնթացիների 12.4-6):

ՁՈՐԱՑՎԱԾ՝ ՍՈՒՐԲ ՀՈԳՈՎ

«Որովհետև միտքս չէի դրել մի ուրիշ բան գիտենալ ձեր մեջ, բայց միայն Հիսուս Քրիստոսին, և այն էլ՝ խաչվածին: Եվ ես տկարությամբ և վախով և շատ դողով եղա ձեզ մոտ: Եվ իմ խոսքը և քարոզությունը ոչ թե մարդկային իմաստության պատիր խոսքերով եղավ, այլ՝ Հոգու և զորության ապացուցմամբ, որ ձեր հավատքը մարդկանց իմաստությամբ չլինի, այլ՝ Աստծո զորությամբ»:

Ա ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻ 2.2-5

ԼՑՎԱԾ ԵՌԱՆԴՈՎ

> *Քրիստոնյաները երբեք չպետք է պայքարեին այս աշխարհի, մարմնի և սատանայի դեմ միայն իրենց բնական միջոցներով և մտքով, անկախ այն բանից՝ նրանք ապրում են առաջի՞ն, թե՞ 21-րդ դարում: Ավետարանը «Աստծո զորությունն» է (Հռոմեացիների 1.16): Սուրբ Հոգին տալիս է մեզ այն զորությունը, որի կարիքը մենք ունենք, բայց ոչ այն ժամանակ, երբ մենք անտեսում ենք Նրան:*

ՈՐՔԱ՞Ն ՔԱՐՈԶՆԵՐ ԵՆ ԱՅՍՕՐ ԱՅՆՊԵՍ ՀՆՉՈՒՄ, ԱՍԵՍ ՔԱՐՈԶԻՉԸ նոր է վերադարձել Վերնատնից, որտեղ նա առաքյալների հետ էր: Որքա՞ն քարոզներ են այսօր այնպես հնչում, ասես Ավետարանն իրականում Աստծո զորությունն է: Հաճախ ծառայողները քարոզում են իրենց համայնքներին բժիշկների պես՝ առանց եռանդի, չտալով Սուրբ Հոգուն գործելու ոչ մի հնարավորություն: Քրիստոնեական առաքելությունը չի կարող իրականանալ առանց Հոգու օծության: Մեր հրահանգն է. «Լցվե՛ք Հոգով» (Եփեսացիների 5.18): Նպատակաուղղված լինելը դրա մի մասն է, բայց Նոր կտակարանի նմուշը Հոգով ուղղորդված լինելն է: Նա է մեզ խթանողը և մեր շարժիչ ուժը:

«ՆՐԱՆՔ ՀԵՏԵՎՈՒՄ ԷԻՆ...»

> *Եթե մենք ցանկանում ենք ունենալ Նոր կտակարանի պայմանները, պետք է ուսումնասիրենք Նոր կտակարանի նմուշը, որպեսզի իմանանք, թե ինչ ակնկալենք: Եթե մենք վարվենք առաքյալների պես, կստանանք նրանց արդյունքները: Եթե մենք քարոզենք իրական Ավետարանը, կստանանք իրական արդյունքներ:*

«ԵՎ ՄԻՇՏ ՀԵՏԵՎՈՒՄ ԷԻՆ ԱՌԱՔՅԱԼՆԵՐԻ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ և հաղորդությանը և հացի կտրելուն և աղոթքներին: Եվ ամեն անձի վրա վախ եկավ. շատ հրաշքներ և նշաններ էլ էին գործվում առաքյալների ձեռքով... և Տերն ամեն օր փրկվածներին ավելացնում էր եկեղեցու հետ» (Գործք 2.42,43,47): Մարդիկ աղոթում են. «Տե՛ր, կրկի՛ն արա դա»: Բայց հենց մե՛նք պետք է *կրկին* անենք այն, ինչ անում էին Առա-

ջին եկեղեցու քրիստոնյաները. նրանք անդադար վկայում էին (տե՛ս Գործք 5.42): Նրանք քարոզում էին, վկայում էին և գործում էին այնպես, ասես ամեն ինչ կախված էր իրենցից, սակայն աղոթում էին այնպես, ասես ամեն ինչ կախված էր Աստծուց: Նրանք կախված էին Աստծուց, և Աստված կախված էր նրանցից: Երանի՜ Աստված կարողանար կախված լինել ձեզնից և ինձնից, որ մենք հարատևեինք նույն բաներում՝ որ հավատարիմ լինեինք քարոզելու, սովորեցնելու և վկայելու մեջ:

ԱՆՍԱՀՄԱՆ ՀԻՍՈՒՍ. ԱՆՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՀՐԱՇՔՆԵՐ

Հռչակումը նախորդում է հաստատմանը: Եթե քարոզեք սահմանափակ Հիսուսի, Նա չի կարողանա լիարժեք գործել: Նա չի փրկում, քանի դեռ չեք քարոզել Փրկչի մասին: Նա չի բժշկում, քանի դեռ չեք քարոզել Բժշկողի մասին: Նա կօրհնի, եթե դուք քարոզեք Օրհնողի մասին: Սուրբ Հոգին հաստատում է Աստծո Խոսքը (տե՛ս Մարկ. 16.20), ոչ թե մեր անհատականությունը կամ «ես»-ը:

ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ՄԻԱՅՆ ԿԱՐՈՂ Է ՕՐՀՆԵԼ ԱՅՆ, ԻՆՉ ԴՈՒՔ ԱՍՈՒՄ

եք Հիսուսի մասին: Հոգին չի կարող օրհնել այն, ինչ դուք չեք ասում Նրա մասին: Եթե «այս Հիսուսը»՝ «այն Հիսուսը, որին քարոզում է Պողոսը», քարոզվի հիմա, Աստծո Հոգին կհաստատի այդ խոսքերը (տե՛ս Գործք 1.11, 19.13): Քանի՞սն են մեղավոր մեր թանկ Տիրոջը զրկելու մեջ: Մի քանիսը զրկեցին Նրան հագուստից՝ խաչելու համար, իսկ անհավատությունը զրկում է Նրան Իր զորությունից: Շատ եկեղեցիներում Նա այլևս չունի փրկելու և բժշկելու զորություն: Եթե օգտագործենք Պողոսի արտահայտությունը, Նա «նեղվում է» մեր կյանքում, ինչը նշանակում է, որ Նա «սահմանափակված է՝ չունենալով գործելու հնարավորություն» (Բ Կորնթացիների 6.12)՝ սառը, քարացած անհավատության պատճառով: Կրկին, Մարկոս 16.20-ում գրված է. «Նրանք էլ դուրս գնացին, ամեն տեղ քարոզում էին, և Տերը գործակցում էր նրանց հետ, և Խոսքը հաստատում էր այն նշաններով, որ հետևում էին»: Նրանք քարոզում էին, և Տերը հաստատում էր: Հռչակումը նախորդում է հաստատմանը:

ՆՐԱ ՆԵՐԲՆԱԿՎՈՂ ՆԵՐԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

«Ուժովացե՛ք և քա՛ջ եղեք, մի՛ վախեցեք և նրանց երեսից մի՛ զարհուրեք, որովհետև քո Տեր Աստված Ինքն է քեզ հետ գնում. Նա քեզ չի թողնի և քեզ չի ձգի»:

ԵՐԿՐՈՐԴ ՕՐԻՆԱՑ 31.6

ԷՄՄԱՆՈՒԵԼ՝ ԱՍՏՎԱԾ ՄԵԶ ՀԵՏ

> *Աստծո ներկայությունը չի տատանվում. այն չի գալիս և գնում: Նոր կտակարանում ոչինչ չի ակնարկում այս մասին: Աստվածաշնչի ամբողջ շեշտադրումը Նրա մշտական ներկայության վրա է: Նույնիսկ Աստծո անուններից մեկն է «Յահվեհ Շամմա»՝ «Տերը ներկա է» (Եզեկիել 48.35): Աստված մեզ հետ է՝ այնպես, ինչպես որ միշտ եղել է և միշտ կլինի:*

ՄԱՐԳԱՐԵԱՆԱԼՈՎ ՀԻՍՈՒՍԻ ԾՆՆԴՅԱՆ ՄԱՍԻՆ՝ ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉՆ օգտագործում է «Էմմանուել՝ Աստված մեզ հետ» անունը (Մատթեոս 1.23): Աստվածաշունչը բազմաթիվ ձևերով հավաստիացնում է մեզ Աստծո ներկայության մասին: Աստված երբեք միայնակ չի թողնում մեզ. «Թեև գնամ մահվան շուքի ձորով, չար բանից չեմ վախենա, որովհետև Դու ինձ հետ ես...» (Սաղմոս 23.4): «Տերը Իր մեծ անվան համար Իր ժողովրդին չի թողնի, որովհետև Տերն ուզեց, որ ձեզ Իր համար ժողովուրդ անի» (Ա Թագավորաց 12.22): Տերն ասաց Մովսեսին. «Ես քեզ հետ կլինեմ», և Հեսուին. «Ինչպես որ Մովսեսի հետ էի, քեզ հետ կլինեմ. քեզ չեմ թողնի և անտես չեմ անի» (Ելից 3.12, Հեսու 1.5): Սաղմոս 146.6-ը հայտարարում է, որ Նա «հավատարմություն է պահում հավիտյան»: Տերը հավատարիմ է մեզ:

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԱՍՏԾՈ ՀԵՏ

> *Մենք հատուկ ենք. մենք կարող ենք մտերիմ և անձնական հաղորդակցություն ունենալ երկնքի և երկրի Արարչի և Տիրոջ հետ: Սուրբ Հոգու միջոցով մենք հաղորդակցվում ենք Հոր և Նրա Որդի Հիսուս Քրիստոսի հետ: Սա քրիստոնեական հավատքի երանությունն է: Այլևս ոչ մի աստվածություն կամ աստված չի առաջարկում նման մտերմություն: Մենք սիրվա՛ծ ենք:*

ՀԻՍՈՒՍԸ ԽՈՍՏԱՑԱՎ, ՈՐ ՄԻՇՏ ՄԵԶ ՀԵՏ ԿԼԻՆԻ: ԻՆՉՊԵ՞Ս Է ԴԱ տեղի ունենում: Նրա ներկայությունը հաղորդակցություն է: Աստվածաբաններն օգտագործում են «աստվածային ներհատկություն» տեր-

մինը, սակայն Հիսուսն այդպիսի բան չի խոստացել: «Ներհատկությունը» ենթադրում է, որ Աստված լցնում է Իրենով այս աշխարհը՝ նման մթնոլորտի, որով համակվում է ամբողջ մոլորակը, սակայն Աստված մթնոլորտ չէ: Աստվածաշունչը խոսում է Նրա հետ հաղորդակցության մասին: Մենք չենք կարող հաղորդակցվել մթնոլորտի հետ: Քրիստոնյաներն ունեն հաղորդության ծառայություն, որում մենք բաժնեկցում ենք Նրա կյանքի հետ: Սա այն հրաշալի անձնական մտերմության օրինակն է, որը գոյություն ունի Արարչի և Նրա արարածների միջև: Սա երկնքի և երկրի Տիրոջ եզակի առանձնահատկությունն է: Սա անհնար է ցանկացած անձնավորության համար՝ բացի միակ Ճշմարիտ Աստծուց, և չկան այլ աստվածներ՝ Նրանից բացի: Աստված յուրահատուկ է այն բանով, որ մոտ է յուրաքանչյուրին (տե՛ս Եբր. 13.5):

ԵՍ ԱՅՆՏԵՂ ԵՄ

> *Աստված ներկա չէ ընդհանուր իմաստով. Նրա ներկայությունը չի վերաբերում ընդհանուր առմամբ՝ բոլորին, բայց մասնավորապես՝ ոչ ոքի: Նա հավասարաչափ կերպով բաժանված չէ բոլոր մարդկանց միջև: Նրա ներկայությունը չի որոշվում մեր կարևորությամբ: Նա լիարժեք կերպով ներկա է թե՛ մեզնից ամեն մեկի կյանքում, թե՛ այն ժամանակ, երբ հավաքվում ենք: Մենք չենք առաջացնում կամ գրավում Նրա ներկայությունը: Նա արդեն իսկ Ներկա է. Նա «Ես Եմ»-ն է:*

ՔՐԻՍՏՈՍՆ ԱՍԱՑ. «ՈՐՈՎՀԵՏԵՎ ՈՒՐ ՈՐ ԵՐԿՈՒ ԿԱՄ ԵՐԵՔ հոգի Իմ անունով ժողովված լինեն, Ես այնտեղ նրանց մեջ եմ» (Մատթեոս 18.20): Նա չասաց. «Ես կգամ», այլ՝ «Ես այնտեղ եմ»: Այն, թե ինչպես է մեր Աստված միանում մեր հավաքույթներին, Նրա փառավոր առեղծվածներից մեկն է: Մենք չենք առաջացնում կամ գրավում Նրա ներկայությունը, երբ միասին հավաքվում ենք: Նա չի գալիս, քանի որ մենք հավաքվել ենք: ՄԵՆՔ ենք գալիս, քանի որ Նա այդտեղ է: «Նրանն է ժողովուրդների հնազանդությունը (կամ՝ հավաքվելը)» (Ծննդոց 49.10): «Երկուսը կամ երեքը» նշանակում է ցանկացած երկու կամ երեք հավատացյալ, որոնք հավաքված են Նրա անունով: Այդ հավաքույթը կարող է բաղկացած լինել ընտանիքից, և նույնիսկ միայն

ամուսնուց և կնոջից: Նա չի հեռանում ընտանեկան միջավայրից: Ընտանիքի մտահոգությունները Նրա մտահոգություններն են: Առաջին անգամ Քրիստոսը եկավ հենց ընտանիք՝ Մարիամի և Հովսեփի ընտանիքը:

ԼԻՈՎԻՆ ՆԵՐԿԱ

> *Աստված մեզ հետ է Իր լիությամբ, ոչ թե ինչ-որ չափով: Աստծո Հոգին չի հեռանում, ետ չի քաշվում, չի գոլորշիանում, չի պակասում և չի սպառվում: Նա բնակվում է (տե՛ս Ա Հովհ. 4.15):*

ԱՍՏԾՈ ՀՈԳԻՆ ՉԻ ԳԱԼԻՍ ԱՅՆՊԵՍ, ԻՆՉՊԵՍ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ համայնքը՝ կիրակնօրյա հավաքույթին: Նա չի սպասում, մինչև որ մենք պատրաստվենք Նրա ներկայությանը պատշաճ երգերով: Կարիք չկա, որ աղոթենք Աստծո ներկայության համար, քանի որ Նա ՄՇՏԱՊԵՍ ներկա է: Նա լիովին ներկա է: Նա երբեք կախվածության մեջ չէր դնի ԻՐ փրկարար աշխատանքը մեր զգացմունքային վիճակից, որը բարձրանում և իջնում է երկնաքերի վերելակի պես՝ մի պահ հասնելով գետնին, իսկ հաջորդ պահին՝ ամպերին: Աստծո արևը երբեք մայր չի մտնում. այն մշտապես կիզակետում է՝ կեսօրի դիրքում:

ԳՈՐԾՈՒՆ, ՈՉ ԹԵ ԱՆԳՈՐԾ ՆԵՐԿԱՅՈՒԹՅՈՒՆ

> *Տիրոջ ներկայությունը ԳՈՐԾՈՒՆ է, ոչ թե անգործ: Նա մեզ հետ չէ՝ ինչպես շողքը՝ անձայն, անզոր, անտեսված և անարդյունք: Նա նման է արևին, որից մենք չենք կարող և չենք էլ համարձակվի փախչել, որն իր զորությամբ և լույսով կյանք է պարգևում մեզ:*

ԵՐԲ ԱՍՏԾՈ ՀՈԳԻՆ ԳԱԼԻՍ Է ՁԵԶ ՎՐԱ, ՁԵՐ ԿՅԱՆՔԸ ՓՈԽՎՈՒՄ Է և շարունակում է փոխվել՝ փառքից դեպի փառք (տե՛ս Բ Կորնթ. 3.18): Ձեր կյանքը չի կարող լճանալ. դա հակառակ է Աստծո բնությանը: Քամիների Տերը կխաղաղեցնի փոթորիկները: Խաղաղության Իշխանը խաղաղություն կբերի ձեր կյանքում: Նա կբժշկի ձեր մարմինը, կօրհնի ձեր ձեռքի գործը, կօրհնի ձեր որովայնի պտուղը և կենդանի վկա

կդարձնի ձեզ: Աստծո ներկայությունը նկատելի է, և այն իր ազդեցությունն է թողնում ձեր կյանքում: Տերն ասաց. «Ես քեզ հետ կլինեմ», իսկ Հիսուսն ասաց. «Ես ձեզ հետ եմ ամեն օր՝ մինչև աշխարհի վերջը» (Ելից 3.12, Մատթեոս 28.20): Հիսուսը պահեց Իր խոստումը. «Նրանք էլ դուրս գնացին, ամեն տեղ քարոզում էին, և Տերը գործակցում էր նրանց հետ» (Մարկոս 16.20):

ԿՐԱԿԵ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

ԲԱԺԻՆ 8

ԲՈՐԲՈՔՎԱԾ ԿՐԱԿ. ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ԿՈՉԸ

ՀԻՄԱ Է ՁԵՐ ԺԱՄԱՆԱԿԸ

«Որովհետև ձեզ և ձեր որդիների համար է այս խոստումը, և այն բոլոր հեռավորների համար, որոնց մեր Տեր Աստված կկանչի»:

ԳՈՐԾՔ 2.39

ՎԵՐՋԻՆ ԺԱՄԱՆԱԿՎԱ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԸ

> *Սուրբ Հոգին կանգ չառավ Գործք առաքելոց գրքի 28 գլուխներից հետո: Արդեն 2.000 տարուց ավելի է՝ Պենտեկոստեն ընթացքի մեջ է: Այսօր մենք շարունակում ենք Գործք առաքելոց գիրքը: Առաքյալների գործերին հաջորդեցին Առաջին եկեղեցու գործերը, իսկ այժմ՝ Վերջին ժամանակվա եկեղեցու գործերը: Գործք առաքելոց գիրքը նկարագրում էր փոքր բաների սկզբի օրը և պարզապես հիմք էր դնում մեզ համար:*

ՊԵՆՏԵԿՈՍՏԵԻ ՕՐԵՐԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ ԵՆ: ՊԵՆՏԵԿՈՍՏԵԻՑ հետո Աստծո Հոգին՝ նման սաստիկ քամու, սկսել է գործել նոր և ազդեցիկ կերպով ամբողջ աշխարհով՝ մտնելով այս երկրի բոլոր խավար վայրերը: Առաջին եկեղեցին և առաքյալներն արեցին իրենց գործը, ինչի մասին գրված է Գործք առաքելոց գրքում, բայց դա այն ամենը չէր, ինչ Սուրբ Հոգին արեց, արել է և անում է: Այժմ մենք՝ այս սերնդի մարդիկս, պետք է կատարենք Սուրբ Հոգու գործերի մեր բաժինը:

Հոգու քամին շարժվում է, և մենք պետք է շարժվենք դրա հետ: Կարևոր չէ, թե որտեղ եք և ինչպիսի խավարի մեջ եք. դուք պետք է հավատաք, որ Աստծո Հոգու քամին փչում է հենց այդտեղ, և եթե դուք քարոզեք Խոսքը, կլինի լույս, փրկություններ, ազատագրումներ, բժշկություններ և հրաշքներ: Այնպես որ, համարձա՛կ եղեք և քարոզե՛ք Խոսքը, որտեղ էլ լինեք: Դուք կտեսնեք արդյունքներ, քանի որ Հոգու քամին փչում է, և այն արդեն գնացել է ձեր առջևից:

ԱՌԱՋԻՆ ՕՐԻՆԱԿ

> *Մեր օրինակն առաջին քրիստոնյաները չեն. մեր օրինակը Հիսո՛ւսն է: Գործք առաքելոց գիրքը չի նկարագրում Աստծո զորության գագաթնակետը. այն Սուրբ Հոգու հնարավորությունների առաջին օրինակն է: Վստահե՛ք Աստծուն անսահմանորեն. Նա չունի առավելագույն սահման:*

ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ԳԱԼՈՒՍՏԻ, ԱՌԱՋԻՆ ԱՌԱՔՅԱԼՆԵՐԻ ԵՎ ԾԱՂԿՈՒՆՔ ապրող եկեղեցու պատմությունը ընդամենը Սուրբ Հոգու ծառայության հնարավորությունների առաջին օրինակն է: Այս դաշտը բաց է մեզ համար: Քրիստոսն ասաց. «Ապա թե ոչ, իսկ այն գործերի համար հավատացե՛ք Ինձ: Ճշմարի՛տ, ճշմարի՛տ ասում եմ ձեզ, թե՝ Ինձ հավատացողը, այն գործերը, որ Ես գործում եմ, նա էլ կգործի, և նրանցից է՛լ ավելի մեծ բաներ կգործի...» (Հովհաննես 14.12): Հիսուսը մեր օրինակն է: Պողոսն աղոթեց. «Որ ձեր սրտերի աչքերը լուսավորվելով՝ գիտենաք, թե ինչ է Նրա կոչման հույսը, և ինչ է իր ժառանգության փառավոր մեծությունը սուրբերում, և ինչ է Նրա զորության գերազանց մեծությունը մեզանում, որ հավատացինք՝ իր կարող զորության հաջողության պես, որ Քրիստոսում գործադրեց՝ Նրան մեռելների միջից հարություն տալով, և Իր աջ կողմը նստեցրեց երկնավորներում» (Եփեսացիների 1.18-20):

ԱՅՍՕՐ

Այս ժամանակաշրջանում տեղի են ունենում զանգվածային դարձեր երկրագնդի ամենաբարդ տարածաշրջաններից մի քանիսում: Բժշկությունները, հրաշքները և նշաններն առատորեն դրսևորվում են Եկեղեցում: Այսօր մարդիկ վերապրում են Աստծո Խոսքի ճշմարտությունը՝ այնպես, ինչպես Առաջին եկեղեցում, և այս ամենը տեղի է ունենում Սուրբ Հոգու զորությամբ:

ԱՅՍՕՐ ՄԱՐԴԿԱՆՑ ՀԵՏ ԻՆՉ-ՈՐ ԴՐԱԿԱՆ ԲԱՆ Է ՏԵՂԻ ՈՒՆԵՆՈՒՄ: Մենք տեսնում ենք այն աստվածաշնչյան նշանները, որոնք Տերը խոստացավ Իր Խոսքում. «Եվ կլինի հետին օրերում, - ասում է Աստված, - որ Իմ Հոգուց կթափեմ ամեն մարմնի վրա, և ձեր որդիները, և ձեր աղջիկները կմարգարեանան, և ձեր երիտասարդները տեսիլքներ կտեսնեն, և ձեր ծերերը երազներ կտեսնեն: Եվ Իմ ծառաների վրա և Իմ աղախինների վրա էլ այն օրերում Իմ Հոգուց կթափեմ, և կմարգարեանան» (Գործք 2.17,18): Աստված պահում է Իր Խոսքը, և Հիսուսը մկրտում է Սուրբ Հոգով: Չկա ոչ մի փաստարկ դրա դեմ: Դա տեղի է ունենում, և դա տեղի կունենա ձեզ հետ:

ՏԱՐՎԵԼ ՀՈՍԱՆՔՈՎ

> *Աստծո գետը զորեղ է: Երբ մեր կյանքը կապակցված է Նրա նպատակների հետ, մենք տարվում ենք այդ գետի հոսանքով, որը գնում է հավիտենական անցյալից դեպի հավիտենական ապագան: Թո՛ւյլ տվեք ձեզ տարվել Սուրբ Հոգու հոսանքով:*

ՄԻՆՉԵՎ ՊՈՂՈՍ ԱՌԱՔՅԱԼ ԼԻՆԵԼԸ, ՆԱ ՍՈՂՈՍՆ ԷՐ: ՆԱ նամակներ էր հավաքել իր օրերի քահանայապետերից և կրոնական առաջնորդներից, որոնք լիազորում էին նրան հալածել եկեղեցին: Դամասկոսի ճանապարհին Տերը հայտնվեց նրան. «Սավո՛ւղ, Սավո՛ւղ, ինչո՞ւ ես Ինձ հալածում. դժվար է քեզ խթանի դեմ քացի տալ» (Գործք 26.14): Սողոսը գնում էր ճակատագրի հոսանքներին հակառակ: Երբ նա անձնատուր եղավ Հիսուսին, մտավ Սուրբ Հոգու հոսանքների մեջ և դարձավ զորավոր առաքյալ, որին Աստված գործածեց՝ միլիարդավոր հավատացյալների վրա ազդեցություն թողնելու համար: Եթե ներկայում ձեր կյանքն արժեքավոր չէ, փորձե՛ք նոր բան՝ կյանք, որի հեղինակը Սուրբ Հոգին է:

ԿՐԱԿ՝ ՎԱՌԱՐԱՆՈՒՄ

> *Անկախ այն բանից, թե ով եք դուք, և ինչպիսին է եղել ձեր անցյալը, դուք նույնպես կարող եք զորավոր կերպով գործածվել Աստծո կողմից: Եթե լցվեք կրակով, Նա կգործածի ձեզ: Պարզապես անձնատուր եղեք Նրան և թույլ տվեք, որ Սուրբ Հոգին զորացնի ձեզ՝ աղոթքի, ուսումնասիրության, երկրպագության և քարոզելու համար, որպեսզի գնաք դեպի ազգերը, և դուք կտեսնեք այն նշանները և հրաշքները, որոնք հետևում են (տե՛ս Բ Տիմոթ. 2.20,21):*

ԻՆՉՈ՞Ւ Է ԱՍՏՎԱԾ ԳՈՐԾԱԾՈՒՄ ՈՐՈՇ ՄԱՐԴԿԱՆՑ, ԵՎ ՈՉ՝ մյուսներին: Պատկերացրեք, որ ձեր տանը երկու վառարան կա: Դրանցից մեկը տաք է, իսկ մյուսը՝ սառը, և դուք ուզում եք մի բաժակ սուրճ պատրաստել: Այդ երկուսից ո՞րը կգործածեք: Իհա՛րկե, ՏԱՔ ՎԱՌԱՐԱՆԸ: Դուք հասկացա՞ք: Ահա թե ինչու Աստված կարող

է օգտագործել ոմանց և չի կարող օգտագործել մյուսներին: Շատերն աղոթում են. «Գործածի՛ր ինձ, Տե՛ր», բայց դա սխալ դիրքորոշում է: Փոխարենը, աղոթեն. «Տե՛ր, գործածելի՛ դարձրու ինձ»: Նրա կրակը գործածելի է դարձնում մեզ: Նա ինքնաբերաբար գործածում է նրանց, ովքեր գործածելի են: Ալելուի՛ա:

ՀԱՎԱՏՔ՝ ՄԱՆԱՆԵԽԻ ՍԵՐՄԻ ՊԵՍ

«Որովհետև ճշմարիտ ասում եմ ձեզ՝ եթե մանանեխի հատի (կամ՝ սերմի) չափ հավատք ունենաք, այս սարին կասեք՝ փոխադրվի՛ր այստեղից այնտեղ, և այն կփոխադրվի, և ոչինչ անկարելի չի լինի ձեզ համար»:

ՄԱՏԹԵՈՍ 17.19

ՀԱՎԱՏՔԻ ԹԵՎԵՐԸ

> *Հոգու պտղի՝ ուրախության, բարության, հեզության և այլնի հիմքում անսահմանափակ զորություն ունեցող սերմն է: Քրիստոնյան ո՛չ երկչոտ է, ո՛չ էլ սանձահարված: Միգուցե մենք դարձնենք մեր մյուս այտը կամ հալածանք կրենք հանուն Քրիստոսի, բայց համոզված եղեք, որ մեր էության ներսում կրում ենք Սուրբ Հոգու ամբողջական զորությունը, որը հարություն է տալիս մեռելներին, պարտության է մատնում դժոխքը և վերափոխում է մարդկանց: Մենք սարեր շարժող և ծորեր բարձրացնող հավատք ունենք: Աստծո հետ ոչինչ անհնարին չէ մեզ համար (տե՛ս Ղուկ. 1.37):*

ՈՉ ՄԻ ԱՌԱՁԱԴՐԱՆՔ ՄԵԾ ՉԷ ՄՅՈՒՍԻՑ, ԵՐԲ ԱՅՆ ՉԱՓՎՈՒՄ Է ՄԵՐ հավատքով: Ցանկապատը, տունը, բլուրը կամ սարը հավասարապես խոչընդոտ չեն դրանց վերևում սավառնող թռչնի կամ հավատքի թևերով սավառնող մարդու համար: Այն, ինչի համար Աստված կանչել է ձեզ, հնարավոր է կատարել միայն հավատքով. երբ դուք վարվեք (և սավառնեք) հավատքով, կկարողանաք ապրել և գործել Սուրբ Հոգու մեջ նոր ձևերով:

ՍԱՎԱՌՆԵԼ, ՈՉ ԹԵ ՔՆԵԼ

> *Հավատքով մենք «վեր կսլանանք (կամ՝ կսավառնենք) արծիվների պես» (Եսայի 40.31): Մենք կսավառնենք, ոչ թե կքնենք: Մի՛ քնեք, երբ բախվում եք կյանքի խոչընդոտներին: Սավառնե՛ք դրանց վրայով՝ տարածելով ձեր հավատքի թևերը, և ՎԱՐՎԵ՛Ք ՍՈՒՐԲ ՀՈԳՈՎ:*

ՄԵՆՔ ԱՊՐՈՒՄ ԵՆՔ ՀԱՎԱՏՔՈՎ, ՈՉ ԹԵ ԵՐԵՎՈՒՅԹՈՎ (Բ Կորնթացիների 5.7): Որոշ իրավիճակներ մեր կյանքում կարող են վիատեցնող թվալ այն պատճառով, թե ինչպես են մեր զգայարաններն ընկալում դրանք: Բայց սպասե՛ք: Մի՛ թուլացրեք ձեր ձեռքերը: Մեր հավատքը հիմնված է Աստծո Խոսքի վրա: «Ամեն բան կարող եմ ինձ զորացնող Քրիստոսով» (Փիլիպեցիների 4.13):

ՃԵՂՔԵԼ ԱՆՀԱՎԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՂԵՎԸ

> *Դուք պետք է Աստծո կրակի գործող հրաբուխ լինեք: Դուք չպետք է լինեք սառնաշունչ ձյունածածկ լեռան պես՝ վեհ, սակայն սառը և անզոր: Թո՛ւյլ տվեք, որ հրաբուխը ժայթքի խառնարանից. թո՛ւյլ տվեք, որ Սուրբ Հոգու կրակը բխի ձեր ներսից (տե՛ս Եբր. 12.29):*

ՀԱՎԱՏՔԸ ՆՄԱՆ Է ՀՐԱԲԽԻ, ՈՐԸ ԵՌՈՒՄ Է ԵՎ ԲԱՐՁՐԱՆՈՒՄ դեպի խառնարանը: Հենց որ այն ճեղքի անհավատության կեղևը, տեղի կունենա հզոր ժայթքում: Երբ Աստված կարողանում է ճեղքել մեր անհավատության կեղևը, տեղի է ունենում Նրա զարմանալի զորության դրսևորումը, որն արհամարհում է մեր տրամադրությունները և շփոթմունքները: Որքա՞ն հաստ է մեր անհավատության կեղևը: Որքա՞ն ենք մենք հակառակվում Աստծուն վստահելու հարցում: Եթե հրաժարվենք մեր անհավատությունից, մենք կստանանք Աստծո կրակը՝ Սուրբ Հոգու կրակը, որը կզորացնի մեզ:

ՀԱՎԱՏԱՑՅԱԼՆԵՐ, ՈՉ ԹԵ ՄՈՒՐԱՑԿԱՆՆԵՐ

> *Աստված տալիս է մեզ Իր Հոգին՝ ոչ միայն Իր սիրո և առատաձեռնության շնորհիվ, այլև՝ ելնելով անհրաժեշտությունից: Աստված ի սրտե ցանկանում է լցնել մեզ Իր Հոգով և զորացնել Իր գործի համար: Կարիք չկա, որ խնդրենք և աղաչենք Նրան այս օրհնության համար: Նա ոչ միայն կամենում է, այլև պատրաստ է: Նա կազմ ու պատրաստ է: Պարզապես հավատացե՛ք և կստանաք:*

Ի՞ՆՉ ԿԱՍԵՔ «ԵՐՈՒՍԱՂԵՄՈՒՄ ՆՍՏԵԼՈՒ» ՄԱՍԻՆ (ՂՈՒԿԱՍ 24.49): Հիսուսը պատվիրեց աշակերտներին սպասել, քանի որ այդ ժամանակ Սուրբ Հոգին դեռ չէր տրվել, և չէր տրվի, մինչև որ Հիսուսը չփառավորվեր (տե՛ս Հովհ. 7.39): Նրանք պետք է սպասեին այդ պատմական պահին՝ Պենտեկոստեի օրվան: ԲԱՅՑ ԱՅԺՄ ՆԱ

ԱՅՍՏԵՂ է: Պենտեկոստեն իրողություն է, և դուք կարող եք անձամբ վերապրել այն ամեն օր: Մեր հավաքույթների ժամանակ մենք չենք աղաչում. մենք ընդունում ենք: Հիսուսը սիրում է կատարել Իր Խոսքը մեր կյանքում: Մենք հավատացյալներ ենք, ոչ թե մուրացկաններ:

Ո՛Չ ԿԱՐՈՂՈՒԹՅԱՄԲ, ԵՎ Ո՛Չ ԶԳԱՑՄՈՒՆՔՆԵՐՈՎ

«...ոչ թե զորությամբ, և ոչ թե ուժով, այլ՝ Իմ Հոգով,- ասում է Զորաց Տերը»:

ԶԱՔԱՐԻԱ 4.6

ԶՈՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԳԱՑՄՈՒՆՔՆԵՐ

Հոգու մկրտությունն օժտում է մեզ մշտական զորությամբ, սակայն չի տալիս զորության մշտական զգացում: Բարեբախտաբար, մենք չենք չափում զորությունը մեր զգացմունքներով և այն ամենով, ինչ տեսնում ենք: Հոգևոր զորությունն աննկատ է և գտնվում է մեր հոգում: Բայց երբ հանգամանքները պահանջում են, որ այն օգտագործվի, այն ի հայտ է գալիս: Հոգևոր զորության մատակարարումն ակնթարթային է, և այն տրվում է՝ ըստ առաջացած կարիքի չափի: Թույլ մի՛ տվեք, որ ձեր կախվածությունը զգացմունքներից՝ գողանա ձեր հոգևոր հաղթանակները:

ԱՅՆ ՀԱՂՈՐԴԱԼԱՐԵՐԸ, ՈՐՈՆՔ ԿԱՐՈՂ ԵՆ 110.000 ՎՈՒՏ ՀՈՍԱՆՔ տեղափոխել, նույն տեսքն ունեն և՛ լարման տակ լինելու, և՛ չլինելու ժամանակ: Նմանապես, մենք չենք կարող դատել մեր մկանային ուժի մասին ըստ մեր զգացմունքների, այլ միայն՝ ըստ փորձարկման: Ուժեղ մարդիկ չեն զգում իրենց ուժը: Նրանք չեն կարող նստել կրակի մոտ և վայելել իրենց ուժը: Այնուամենայնիվ, երբ նրանց խնդրում են ինչ-որ ծանր առարկա բարձրացնել, նրանք, ԻՄԱՆԱԼՈՎ իրենց ուժի մասին, պարզապես անում են դա: Երբ մենք հանդարտ վիճակում ենք, չենք զգում, որ լցված ենք ուժով: Մենք կարող ենք զգալ մեզ սովորականի պես և չմտածել Նրա մեծ զորության մասին, որը մեր ներսում է (տե՛ս Բ Կորնթ. 10.1-6):

Գրեթե բոլոր դեպքերում, երբ մենք աղոթում ենք զորության համար, նկատի ունենք ԶՈՐՈՒԹՅԱՆ ԶԳԱՑՈՒՄԸ: Մենք ցանկանում ենք վերապրել զորությանը հատուկ ներքին դողը և թրթիռը: Սա թյուրըմբռնում է: Զորությունն ակնհայտ է այն ժամանակ, երբ այն օգտագործվում է: Երբ մարդը մարզաքարեր է բարձրացնում, նրա ուժը երևում է: Ոմանք երբեք ոչինչ չեն անում Աստծո համար, քանի որ չեն «զգում» իրենց ներսի զորությունը կամ ուժը: Նրանք շարունակ աղոթում են այն բանի համար, ինչն իրենք, ամենայն հավանականությամբ, արդեն ունեն: Ժամանակի և ջանքերի ինչպիսի՜ վատնում: Աստծո զորությունը կհայտնվի, երբ լինի դրա կարիքը: Հարուստ մարդիկ միլիոնավոր դոլարներ չեն պահում իրենց մոտ: Նրանք փող են վերցնում իրենց պահոցներից, երբ ցանկանում են:

Կարիք չկա, որ առավոտից երեկո դողանք Աստծո զորության ներքո: Մենք գործում ենք, քանի որ ամբողջ զորությունը պատկանում է Նրան, ոչ թե մեզ: Ահա թե ինչն է կարևոր:

ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ԵՐԲԵՔ ՉԻ ՀԵՌԱՆՈՒՄ

> *Սուրբ Հոգին լիովին ներկա է, անկախ այն բանից՝ մենք զգո՞ւմ ենք Նրա ներկայությունը, թե՞ ոչ: Նրա պարգևները և զորությունը կախված չեն մեր զգալու կարողությունից: Եթե մենք հավատքով հենվենք Նրա Խոսքի վրա, Մխիթարիչը կգա և կբնակվի մեզ հետ (տե՛ս Հովհ. 14.16): Մենք գիտենք, որ Նա մշտապես մեզ հետ է և երբեք չի թողնում և չի լքում մեզ՝ անկախ հանգամանքներից (տե՛ս Եբր. 13.5):*

ՄԵԿ ԱՆԳԱՄ ԵՍ ԼՍԵՑԻ ՄԻ ԱՎԵՏԱՐԱՆՉԻ ՄԱՍԻՆ, ՈՐԸ հրաժարվել էր բեմ դուրս գալ և քարոզել՝ պատճառաբանելով, որ չէր զգում Աստծո օծությունը: Բեմ դուրս գալու փոխարեն, նա սկսել էր աղաղակել և աղոթել դրա ետևում՝ խնդրելով Աստծո ներկայությունը: Սակայն նա սխալ էր. Սուրբ Հոգին հարմարանք չէ. Նա անձ է՝ Երրորդության երրորդ Անձը: Ոչ մի անձ չի կարող ներկա լինել մասնակիորեն՝ կես չափով կամ մեկ քառորդ չափով: Սուրբ Հոգին մշտապես լիարժեք կերպով ներկա է, նույնիսկ եթե մենք մտովի ցրված ենք կամ չենք զգում Նրան: Երբեմն, քարոզելով հարյուր հազարավոր մարդկանց առջև, ես չեմ զգում Նրա ներկայությունը: Ինչպե՞ս եմ ես վարվում: Ես հիշում եմ Հիսուսի խոսքերը, որ Սուրբ Հոգին հավիտյան կմնա մեզ հետ, և հավատքով ընդունում եմ այդ խոստումը: Ես քարոզում եմ Աստծո Խոսքը, որն Աստծո Հոգին մշտապես պատվում և հաստատում է: Մենք միշտ չէ, որ զգում ենք Նրա զորությունը, բայց Նա միշտ մեզ հետ է: Սուրբ Հոգին երբեք չի թողնում մեզ:

ԺԱՄԱՆԱԿՆ Է ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԵԼ ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ՀԵՏ

Այն ամենը, ինչը ոգեշնչված չէ Աստծուց, ժամանակավոր է, բայց Հիսուսի և Սուրբ Հոգու համագործակցությունը կհարատևի՝ մնալով շատ ավելի երկար, քան ցանկացած այլ բան: Այսպես է որոշել Աստված, երբ հաստատել է արարչագործության կարգը, և այսպես է լինելու հավիտյան՝ մեզ հետ, կամ առանց մեզ: Մենք կարող ենք լինել ձախողված մարդիկ, եթե այդպես ենք կամենում, կամ կարող ենք լինել հավատքի հերոսներ:

«ԻՆՉ ՈՐ ԱՍՏՎԱԾ ԱՆՈՒՄ Է, ԱՅՆ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ Է» (ԺՈՂՈՎՈՂ 3.14): Սա վերաբերում է թե՛ Աստծո արարչագործությանը, թե՛ մեր կյանքին և ծառայությանը: Մենք կարող ենք որոշում կայացնել, որ ընդգրկելու ենք Աստծուն մեր կյանքի ամեն բնագավառում և քրիստոսակենտրոն ենք լինելու մեր բոլոր գործերում, կամ կարող ենք բոլորովին անտեսել Աստծուն: Բայց անձամբ ես ցանկանում եմ կոչ անել, որ անեք ավելին, քան Աստծո մասին մտածելն է. ես ցանկանում եմ, որ դուք համագործակցեք Աստծո հետ: Թո՛ւյլ տվեք, որ Նա օգնի ձեր կյանքում, ձեր առողջական հարցերում, ձեր ընտանիքում, ձեր ծառայության մեջ և այլն: Նա և՛ կամենում է, և՛ կարող է օգնել ձեզ, որ լուծեք ցանկացած խնդիր, որը մտահոգում է ձեզ:

ԳԵՐԲՆԱԿԱՆՈՐԵՆ ԳՈՐԾՈՂ ԶՈՐՈՒԹՅՈՒՆ

«Որովհետև Աստված է, որ ներգործում է ձեզանում, կամենալն էլ, անելն էլ՝ Իր հաճության պես»:

ՓԻԼԻՊԵՑԻՆԵՐԻ 2.13

ԱՄՐԱՑՆԵԼ ԲԵՌԸ ՎԵՐԱՄԲԱՐՁ ԿՌՈՒՆԿԻՆ

Եթե անհրաժեշտ լիներ 1.000 տոննա քաշ ունեցող երկաթե բլոկ բարձրացնել վերամբարձ կռունկով, որքանո՞վ դուք կկարողանայիք օգնել: Պատկերացրեք, որ փորձեիք բռնել այն՝ բարձրացնելու կամ հրելու համար: Ի՞նչ դա կփոխեր: Ոչինչ չէր փոխի, և դուք որևէ կերպով չէիք կարողանա օգնել:

Ի՞ՆՉ ԿԱՍԵՔ ԱՄԲՈՂՋ ԱՇԽԱՐՀԸ ԲԱՐՁՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ: ԴԱ կարող է անել միայն Աստված՝ Իր քավչարար մահվան և հարության զորությամբ: Մի՞թե կարծում եք, որ կարող եք վերցնել այդ բեռը Նրա ուսերից և կրել այն՝ Հերկուլեսի պես: Մի՞թե Ամենակարող Աստված ունի մեր օգնության կարիքը: Հիսուսն ասաց, որ ԱՄԲՈՂՋ զորությունը պատկանում է Իրեն: Անկասկած՝ Նրա զորությունը բավական է: Եթե այդպես է, դուք կարող եք հանձնել ամեն բան Աստծո զորությանը. «Քո հոգսն Աստծո վրա գցի՛ր» (Սաղմոս 55.22):

Մի՞թե սա նշանակում է, որ մենք պետք է անգործ նստենք: Ո՛չ մի դեպքում: Քա՛վ լիցի, քանի որ դուք արտոնյալ և կարևոր դեր ունեք: Ո՞րն է այն: Ի՞նչ են անում կռունկավարները: Նրանք չեն փորձում անձամբ ծանր բեռներ բարձրացնել, բայց ո՛չ էլ կանգնում են՝ ձեռքերը գրպաններում: Նրանք գիտեն՝ ինչ անեն, և առանց իրենց՝ բեռը երբեք չի բարձրացվի: Նրանք ամրացնում են բեռը վերամբարձ կռունկին: Ահա թե որն է մեր գործը: Մի՛ փորձեք ինքնուրույն բարձրացնել բոլորի բեռները: Միայն Աստված կարող է անել դա: Մեր պարզ առաջադրանքն է՝ բերել մարդկանց Նրա մոտ: Ավետարանն Աստծո զորությունն է, որը կարող է բարձրացնել ամբողջ աշխարհը (տե՛ս Հռոմ. 1.16): Կա զորություն՝ անսահման զորություն, որի մասին ասաց Հիսուսը (տե՛ս Մատթ. 28.18):

ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԶՈՐՈՒԹՅՈՒՆ ՊԵՏՔ ՉԷ

Տեսիլքը Քրիստոսի արյամբ լվացված աշխարհամասերի մասին՝ կարող է իրականություն դառնալ, միայն եթե հավատանք Աստծուն և գործենք ըստ մեր հավատքի: Եթե մենք ոչինչ չանենք, ոչինչ չի կատարվի: Աստված չի տալիս մեզ ոգեշնչող տեսիլքներ այն մասին, ինչ կարող ենք անել մեր ուժերով. Նրա տեսիլքներն այն մասին են, ինչ ինքներս չենք կարող: Մեզ մոտ շատ լավ է ստացվում սովորական լինելը, այնինչ Հիսուսն ընտրեց մեզ արտասովոր կյանքի համար: Որսացե՛ք Նրա տեսիլքը: Մարդիկ ասում են. «Ես տեսիլքների և երազների մարդ չեմ»: Բայց Հովսեփը, ով «երազ տեսնող» էր, չէր երազում Խոստման երկրի մասին: Փոխարենը, նա ընդունեց իր կյանքում Աստծո Խոսքը, որն ուղղված էր Աբրահամին, Իսահակին և Հակոբին, և «իր ոսկորների համար հրաման տվեց», որպեսզի իսրայելցիներն իրենց հետ Քանան տանեին իր զմռսված մարմինը (տե՛ս Եբր. 11.22):

ՈՄԱՆՔ ԱՂՈԹՈՒՄ ԵՆ ԶՈՐՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ, ՍԱԿԱՅՆ ոչինչ չեն անում: Անգործության համար զորություն պետք չէ: Բացե՛ք ձեր հոգին Աստծո Հոգու համար, և տեսիլքն ու զորությունը կհոսեն վարար գետի պես: Հիսուսը չի նստում նստողների հետ, ո՛չ էլ քնում է քնողների հետ, այլ գործում է գործողների հետ և օժտում է նրանց Սուրբ Հոգու զորությամբ: Նա մարտական հոգ ի է դնում վախկոտ նապաստակների մեջ և թզուկներին դարձնում Ամենագետ Աստծո հետ համագործակցող հսկաներ: Հիսուսը փոխում է մեր նստակյաց վարքագիծը, լցնում է մեզ Իր Սուրբ Հոգով և անհնարինը հնարավոր է դարձնում:

ԱՇԽԱՐՀԸ ՍՊԱՍՈՒՄ Է

«Եվ նրանց ասաց. «Գնացե՛ք ամբողջ աշխարհով, Ավետարանը քարոզե՛ք ամեն արարածի: Ով որ հավատաց և մկրտվեց, կփրկվի, և ով որ չհավատաց, կդատապարտվի: Նրանց էլ, որ հավատացին, այս նշանները կհետևեն. Իմ անունով դևեր կհանեն, նոր լեզուներով կխոսեն, օձեր վեր կառնեն, և եթե մի մահադեղ խմեն, նրանց վնաս չի տա, հիվանդների վրա ձեռք կդնեն, և նրանք կառողջանան»»:

ՄԱՐԿՈՍ 16.15-18

ԼՈԳԱՐԱՆԸ ԲԱՎԱԿԱՆ ՉԷ

> *Մենք պետք է ոչ միայն կրկին սովորենք քարոզել Ավետարանը եկեղեցիներում, այլև վերգտնենք այն փողոցները և արահետները, որոնցում կորսվածներն են: Հիսուսի Մեծ հանձնարարականը մեր օրերի համար է:*

ԵԹԵ ՈՒԶՈՒՄ ԵՔ ՄԱՐԴԿԱՆՑ ՇԱՀԵԼ, ՄԻ՛ ԳՑԵՔ ՁԵՐ ՑԱՆՑԸ լոգարանի մեջ: Դրանում ձուկ չկա: Լավագույն դեպքում, դուք մի կտոր օճառ կբռնեք: Եթե սրտանց ցանկանում եք մարդկանց փրկությունը, գցե՛ք ձեր ցանցը գետի, լճի կամ օվկիանոսի մեջ: Դուք պետք է գնաք այնտեղ, որտեղ ձուկ կա՝ այնտեղ, որտեղ Աստված ուղարկում է ձեզ: Եթե մտածում եք, թե որտեղ են այդ գետերը, պարզապես հեռացե՛ք սրբարանի մոտից, դո՛ւրս եկեք եկեղեցուց և քայլե՛ք փողոցներով: Հենց այդտեղից է սկսվում հունձքը: Ձեր կողքով անցնող բոլոր մարդիկ Հիսուսի կարիքն ունեն: Մենք չափազանց հարմարավետ ենք զգում մեզ մեր գունավոր ապակիներով պատված շենքերում. մենք պետք է վերգտնենք փողոցները և արահետները:

ՄԱԿԸՆԹԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՍԿՍՎՈՒՄ Է

> *Սուրբ Հոգին գալիս է սաստիկ փչող քամու պես, իսկ Ավետարանը քարոզվում է մեծ ուրախության ալիքներով (տե՛ս Ղուկ. 2.10): Ավետարանը նման է մակընթացության. այն բարձրանում է՝ գետնից պոկելով այն ամենը, ինչ գտնվում է իր ճանապարհին: Այն լողալ է տալիս թաղված կոչումները և պահում է դրանք մեծության հոսանքների վրա:*

ԵՍ ՄԵԾԱՑԵԼ ԵՄ ԷԼԲԱՅԻ ԳԵՏԱԲԵՐԱՆԻ ՄՈՏ՝ ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ: Տեղատվության ժամանակ մենք տղաներով խաղում էինք ցեխի մեջ խրված նավերի մոտ: Ես կարծում էի, որ անհնար էր տեղաշարժել դրանք: Բայց մակընթացության ժամանակ այդ նավերը հանկարծ վեր էին բարձրանում: Ես կարողանում էի մեկ ոտքով տեղաշարժել դրանք նավամատույցից: Երբ մենք քարոզում ենք Ավետարանը, մակընթա-

ցությունը սկսվում է, և անշարժը սկսում է շարժվել, անբուժելին՝ բուժվել, անհնարը՝ հնարավոր դառնալ: Եկեք վստահե՛նք Աստծուն:

ՀՈՒՅՍ՝ ԲՈԼՈՐԻ ՀԱՄԱՐ

Երբ մակընթացությունը սկսվում է, այն չի բարձրացնում մեկ կամ երկու նավ. այն բարձրացնում է բոլոր նավերը՝ բացի հատակ չունեցողներից: Բայց նույնիսկ այդ նավերի համար հույս կա. Սուրբ Հոգին կարող է նորոգել դրանք: Նորոգվելուց և վերականգնվելուց հետո այդ նավերը կբարձրանան նոր ծառայության մեջ:

ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ԶՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՈՂ Է ԲԱՐՁՐԱՆԱԼ ՄԱՐԴԿԱՆՑ անձնական կարիքներից և շարժվել՝ հպվելով ընտանիքներին, համայնքներին և քաղաքներին: Մի՛ սահմանափակեք Սուրբ Հոգու ազդեցությունը և զորությունը: Սուրբ Հոգու ծրագիրը միշտ ավելի մեծ է, քան մեկ մարդը, մեկ ընտանիքը և նույնիսկ՝ մեկ բնակավայրը: Երբ Սուրբ Հոգին գործում է, Նա հպվում է ավելի քան մեկ մարդու: Երբ Պետրոսը գնաց Կոռնելիոսի տուն՝ ծառայելու համար, Սուրբ Հոգին իջավ ոչ միայն նրա վրա, այլև՝ նրա ամբողջ տան (տե՛ս Գործք 10): Երբ Փիլիպոսը ծառայեց եթովպացի ներքինուն, դրա ազդեցությունը կրեց նրա ամբողջ ազգը (տե՛ս Գործք 8.26-40):

ԸՆՏՐԵՔ ՀԱՎԱ՛ՏՔԸ

«Եվ երկիրը լրտեսողներից Նավեի որդի Հեսուն և Հեփոնեի որդի Քաղեբն իրենց հանդերձները պատռեցին և Իսրայելի որդիների ամբողջ ժողովքի հետ խոսեցին՝ ասելով. «Այն երկիրը, որի միջով անցանք՝ նրան լրտեսելու համար, շատ-շատ բարի երկիր է: Եթե Տերը մեզ վրա հաճի, Նա մեզ այն երկիրը կտանի և այն մեզ կտա, որ կաթ ու մեղր բխող երկիր է: Միայն թե Տիրոջ դեմ մի՛ ապստամբեք և այն երկրի ժողովրդից մի՛ վախեցեք, որովհետև նրանք մեր կերակուրն են. նրանց պաշտպանությունը գնացել է իրենց վրայից, ու Տերը մեզ հետ է: Նրանցից մի՛ վախեցեք»»:

ԹՎՈՑ 14.6-9

ԴԱՏԱՐԿ ԳԵՐԵԶՄԱ՞Ն, ԹԵ՞ ՎԵՐՆԱՏՈՒՆ

> *Մովսեսն ասաց. «Կյանքը և մահը, օրհնությունը և անեծքը ձեր առջև դրեցի. ուրեմն, կյա՛նքը ընտրիր» (Երկրորդ Օրինաց 30.19): Դուք կարող եք կենտրոնանալ այն հարցերի վրա, որոնք առաջացնում են կասկածներ, հուսալքություն և մահ, կամ՝ այն պատասխանների վրա, որոնք բերում են կյանք, հույս և օրհնություններ: Սուրբ Հոգին տալիս է ձեզ պատասխաններ և զորություն՝ լիարժեք կյանքի համար:*

ԱՅՆ ԲԱՆԻՑ ՀԵՏՈ, ԵՐԲ ՀԻՍՈՒՍԸ ՓԱՌԱՎՈՐ ԿԵՐՊՈՎ հարություն առավ մեռելներից, Հովհաննեսը և Պետրոսն առաջինը մտան Նրա գերեզմանը: Նրանք կարող էին նստել այդտեղ երկար ժամանակ և գիտնականների պես ուսումնասիրել Նրա ԴՆԹ-ն՝ ըստ Թուրինյան պատանքի: Եթե նրանք մնային այդտեղ, կարող էին գիտական գրքեր գրել հետագա սերունդների համար: Բայց գոհությո՛ւն Աստծուն, նրանք դուրս եկան գերեզմանից, գտան Վերնատունը, և այնտեղ իջավ Աստծո կրակը:

ՊԱՏՎԵԼ ՄԱՐԴՈ՞ՒՆ, ԹԵ՞ ԱՍՏԾՈՒՆ

> *Եկեք հաճեցնենք ոչ թե մարդկանց, այլ Աստծուն: Նա, ով փառք չի ընդունում մարդկանցից, վնաս չի կրի մարդկանց քննադատությունից: Թող Տերը լինի ձեր փառքը և ձեր գլուխը բարձրացնողը:*

ՎԱԽԸ ՊԱՐԶԱՊԵՍ ՍԱՏԱՆԱՅԻ ԳՈՐԾԻՔՆ Է. ՆԱ ՉԻ ԿԱՐՈՂ ԻՐԱԿԱՆ վնաս հասցնել, սակայն կարող է վախեցնել մեզ: Սատանան խաբեբա է: Բաղաամը հարկադրված էր խոսել ճշմարտությունը (տե՛ս Թվոց 22.24), և մենք համոզվեցինք նրա խոսքերից, որ Աստծո ժողովրդին անկարելի է անիծել: Մենք անձեռնմխելի ենք: Մենք փրկված ենք: Այն, ինչ վերաբերում էր Աստծո փրկվածներին այդ ժամանակ, ճշմարիտ է նաև այսօր: Վախը լսում է Գողիաթի գոչյունը, իսկ հավատքը՝ թագավորների Թագավորի գոչյունը:

ԱՆՋԵՌՆՄԽԵԼԻՈՒԹՅՈՒՆ

Քրիստոնյան ունի հավատքի վահան՝ ընդդեմ սատանայի բոլոր հարձակումների: Այն անխոցելի է: Մենք անձեռնմխելի ենք սատանայի վերահսկողության համար և ապրում ենք փրկության, հաղթանակի և ազատության մեջ: Մենք կարող ենք լինել համարձակ և անխոցելի՝ Քրիստոսի փրկարար արյան հանդեպ ունեցած հավատքի և Սուրբ Հոգու միջոցով:

ՄԵԿ ԱՆԳԱՄ ՄԻ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑ ՔՆՆԱԴԱՏԵՑ ԻՆՁ ԵՎ ԻՄ ԳՈՐԾԸ: Մի քանի ծառայողներ զանգահարեցին ինձ և ասացին. «Ռեյնհա՛րդ, դու պետք է պաշտպանես քեզ»: Ես ծնկի իջա և ասացի. «Տե՛ր, ի՞նչ անեմ»: Սուրբ Հոգին խոսեց ինձ հետ. «Դու կոմբայնով բերքահավաք ես անում Իմ հունձքի դաշտում: Կանգ մի՛ առ՝ մի մուկ բռնելու համար»: Ինձ պաշտպանելու փոխարեն, ես մշտապես խոսում եմ իմ հաջորդ ավետարանչական հավաքույթների մասին: Դա ուրախություն է պատճառում ինձ և բարկացնում է սատանային: Տերն է արդարացնում ինձ: Երբ գա այն օրը, ես ուզում եմ լսել. «Լա՛վ, բարի և հավատարիմ ծառա» (Մատթեոս 25.21):

ԱՐՏԱՑՈՒԵԼ ՆՐԱ ՓԱՌՔԸ

Աստծո փառքն արտացոլվում էր քահանայապետի լանջապանակի թանկարժեք քարերով (տե՛ս Ելից 28.15-21): Դրանցից արձակվող լույսի երփներանգ փունջը թափանցում էր խորանի քթանե վարագույրներից՝ արտացոլելով միայն Տիրոջ փառքը: Սա կատարյալ խորհուրդ է: Մենք չունենք սեփական փառք, որքան էլ մեր տաղանդները փայլեն թանկարժեք քարերի պես: Միակ ճշմարիտ լույսը բխում է Հիսուս Քրիստոսից: Մենք այդ լույսի վկաներն ենք (տե՛ս Հովհ. 1.8), երբ դարձնում ենք Նրան մեր երեսը և արտացոլում ենք Նրան: Մինչև չորսանք Նրա լույսը մեր կյանքում, ոչ ոք չի տեսնի այն: Հոգու պարգևները Նրա պարգևներն են, ոչ թե մեր բնական տաղանդները կամ շնորհները:

ՄԵՐ ԲՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՈՐԾԵՐԸ՝ թե՛ բնական, եվ թե՛ գերբնական, պետք է արտացոլեն Սուրբ Հոգու կրակը և լույսը, որպեսզի փառքը երևա եկեղեցում՝ Հիսուս Քրիստոսի միջոցով: «Որովհետև Քոնն է թագավորությունը և զորությունը և փառքը հավիտյանս: Ամե՛ն» (Մատթեոս 6.13):

ԳՆԱԼՈՒ ԺԱՄԱՆԱ՛ԿՆ Է

«Եվ Փիլիպոսն իջավ Սամարիայի մի քաղաքը և Քրիստոսի մասին քարոզում էր նրանց: Ժողովուրդներն էլ միաբան ականջ էին դնում Փիլիպոսի խոսածներին՝ լսելով և տեսնելով այն նշանները, որ անում էր: Որովհետև պիղծ ոգիներ ունեցողներից շատերից մեծաձայն աղաղակելով դուրս էին գալիս, և շատ անդամալույծներ և կաղեր բժշկվում էին: Եվ մեծ ուրախություն եղավ այն քաղաքում»:

ԳՈՐԾՔ 8.5-9

ՍԱ ԹՌԻՉՔԻ ՍԻՄՈՒԼՅԱՏՈՐ Չէ

Ավարտելով այս գիրքը՝ դուք հասաք «Աստծո հրթիռին»: Բոլոր շարժիչները և համակարգերը միացած են և պատրաստ են թռիչքի: Այնուամենայնիվ, կա մեկ բացակա մասնիկ. դո՛ւք: Քա՛յլ արեք: Մտե՛ք օդաչուի խցիկը և թո՛ւյլ տվեք Սուրբ Հոգուն ուղարկել ձեզ Աստծո գերագույն նպատակների ուղեծիրը:

ՏԻԵԶԵՐԱԳՆԱՑՆԵՐԸ ՀԱՐՅՈՒՐԱՎՈՐ ԺԱՄԵՐ ԵՆ ԱՆՑԿԱՑՆՈՒՄ՝ մարզվելով թռիչքի սիմուլյատորների միջոցով, որպեսզի զարգացնեն այն տեխնիկական և գոյատևման հմտությունները, որոնք վճռորոշ դեր են խաղալու իրենց առաքելության բարեհաջող ընթացքի համար: Բայց թռիչքի սիմուլյատորը պարզապես մոդելավորում է իրական միջավայրը. այն իրական միջավայր չէ: Ի վերջո, տիեզերագնացները պետք է թողնեն իրենց հարմարավետությունը և ապահովությունը և գնան դեպի մեկնարկային հարթակ՝ իրենց առաքելությունն իրականացնելու համար: Նույն կերպով, Սուրբ Հոգին ցանկանում է, որ քայլ անեք դեպի ձեր կոչումը: Ժամանակն է մտնել տիեզերանավ-հրթիռի քթամասը Սուրբ Հոգու հետ և թռչել դեպի հրաշքներով ու հնարավորություններով լեցուն զարմանալի կյանք:

ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ԲԱԺԻՆ 9

ՄՈՒՏՔ ԴԵՊԻ ԿՐԱԿՈՏ ԿՅԱՆՔ. ԻՆՉՊԵ՞Ս ԸՆԴՈՒՆԵԼ ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆԸ



«Եվ եղավ, որ Ապողոսը Կորնթոսում եղած ժամանակ, Պողոսը, որ վերի կողմերում ման էր եկել, եկավ Եփեսոս: Եվ մի քանի աշակերտ գտնելով, ասաց նրանց. «Արդյո՞ք Սուրբ Հոգին ընդունեցիք, երբ որ հավատացիք»: Նրանք ասացին նրան. «Մենք չենք էլ լսել, թե Սուրբ Հոգի կա»: Եվ ասաց նրանց. «Ապա ինչո՞վ մկրտվեցիք»: Նրանք էլ ասացին. «Հովհաննեսի մկրտությամբ»: Եվ Պողոսն ասաց. «Հովհաննեսը ժողովրդին ապաշխարության մկրտությամբ էր մկրտում և ասում, թե Նա, որ նրա ետևից պիտի գա, Նրան հավատան, այսինքն՝ Քրիստոս Հիսուսին»: Եվ երբ որ լսեցին, Տեր Հիսուսի անունով մկրտվեցին: Եվ երբ որ Պողոսը ձեռք դրեց նրանց վրա, Սուրբ Հոգին եկավ նրանց վրա, և նրանք լեզուներով էին խոսում և մարգարեանում»:

ԳՈՐԾՔ 19.1-6

ՄԱՍ ՄԵԿ
ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆԸ. Ի՞ՆՉ Է ԱՅՆ

Սուրբ Հոգու մկրտությունն անչափ կարևոր է հավատացյալի կյանքի և ծառայության համար: Որպեսզի ողջամիտ աստվածաշնչյան պատկերացում կազմեք Սուրբ Հոգու մկրտության մասին, ես ներկայացրել եմ Պենտեկոստեին նախորդող և հաջորդող մի շարք իրադարձություններ՝ ըստ հաջորդականության: Սա Սուրբ Հոգու ժամանակագրությունն է:

ՀՐՈՎԱՐՏԱԿԸ

Ամենահիրաշալի ձայնը, որը երբևէ լսվել էր, հասնելու էր տասնյակ հազարավոր մարդկանց ականջներին, որոնք հավաքվել էին Երուսաղեմի տաճարի սրահներում: Տեղի էին ունենում ազգային տոնակատարության վերջին ծեսերը: Բոլորի աչքերը հետևում էին այն ոսկե անոթին, որը լցված էր ջրով և գինով: Թափելու ընծան պատրաստ էր Տիրոջը մատուցվելու համար:

Քահանաներից մեկը վեր բարձրացրեց արևի ճառագայթներից փայլող անոթը և կանգ առավ: Տիրեց քար լռություն. մարդիկ փորձում էին լսել սուրբ ջրի թափվելու ձայնը զոհասեղանի մոտ դրված բրոնզե անոթի մեջ: Հանկարծ այդ ամենը ընդհատվեց. մի ձայն, որը 1.000 տարի չէր հնչել, հանկարծակիի բերեց բոլորին: Դա Հիսուս Քրիստոսի՝ Աստծո Որդու ձայնն էր: Նա այն Խոսքն էր, որը խոսվել էր սկզբից և գոյության էր կոչել երկինքն ու երկիրը: Այժմ, կանգնած Երուսաղեմում, Նա հրատարակում էր թագավորական և աստվածային հրովարտակը, որով Աստծո գործելակերպը մարդկանց հետ նոր փուլ էր թևակոխում.

«Եթե մեկը ծարավ է, թող Ինձ մոտ գա և խմի: Ինձ հավատացողը, ինչպես Գիրքն ասում է, նրա փորից կենդանի ջրերի գետեր կբխեն» (Հովհաննես 7.37,38):

ԳԵՏԵՐ ԱՆԱՊԱՏՈՒՄ

«Կենդանի ջրերի գետե՛ր»: Գետեր, ոչ թե շշեր. թարմ, կայտառ, փայլուն, առատ և անվերջ գետեր: Որոշ մարդիկ ապրում են «շշալցված իրականության» մեջ: Այս աշխարհի հանրախանութներում շատ քիչ թարմ բան կա: Այսօր փաթեթավորված հաճույքը՝ պահածոյացված երաժշտությունը, ֆիլմերը և գրքերը, եկամտաբեր գործ է: Հեռուստատեսությունը ներկայացնում է կյանքի տարբեր դրվագներ միլիոնավոր մարդկանց, որոնք դիտում են, թե ինչպես են ոմանք ապրում կամ ձևացնում, թե ապրում են: Այս երևույթները չեն շրջանցել նույնիսկ երեխաներին, որոնք մոռացել են իրենց խաղերը:

ԱՊՐԵՔ ՀԻՄԱ՛

Մարդիկ միշտ «պատրաստվում են» ապրել... երբ իրավիճակները փոխվեն, երբ աշխատանքն ավարտվի, երբ նրանք փող ունենան, ամուսնանան, թոշակի անցնեն կամ արձակուրդի գնան: Հիսուսը եկավ, որ կյանք տա մեզ ՀԻՄԱ՛: Այս կյանքին ՊԵՏՔ ՉԷ ՍՊԱՍԵԼ. այն պետք է ընդունել՝ որտեղ էլ լինենք, և ինչ էլ անենք: Նա կենդանացնում է կյանքը:

ՊԱՏՄԱԿԱՆ ԳՐԱՏԱԽՏԱԿ

Աստված գրի առավ Իր ծրագիրն Իսրայելի համար, երբ նրանք անապատում էին՝ 40 տարվա լայնություն ունեցող գրատախտակի վրա: Իսրայելցիները ստիպված չէին տիկերում պահվող հնացած, թարմությունը կորցրած ջուր խմել: Տերը ջրի հորդացող հոսանքներ հանեց ժայռից (տե՛ս Ելից 17.1-7): Տաճարի «թափման նվերը» տոնակատարություն էր՝ ի հիշատակ այդ անապատի ջրերի (տե՛ս Թվոց 20.1-13): Այնուամենայնիվ, Հիսուսը նոր և փառավոր նշանակություն հաղորդեց այդ ծեսին՝ դարձնելով այն Սուրբ Հոգու թափման խորհրդապատկերը:

ՄԻԱՅՆ ՀԻՍՈՒՍԸ

ՀԻՍՈ՛ՒՍԸ: Այլևս ոչ ոք երբևէ չհամարձակվեց նման զարմանալի պնդում անել, իսկ հետո նաև ի կատար ածել այն: Նա համբարձվեց դեպի փառքը, որտեղ սկիզբ էր առել արարչագործությունը, և փոխեց դրա կարգը: Մի բան, ինչը նախկինում անհայտ էր, թափվելու էր երկնքից այս երկրի վրա: Նա անվանեց այն «Հոր խոստումը» (Գործք 1.4): Այս ձևակերպումն առանձնացնում է այն Աստվածաշնչում գտնվող 8.000-ից ավելի խոստումներից՝ ցույց տալով դրա բացառիկ և կարևոր բնույթը: Քրիստոսը դարձրեց այն Իր խոստումը: Այն Հոր պարգևն էր Իրեն, և Իր պարգևը՝ մեզ, ինչպես որ ասաց Հովհաննես Մկրտիչը.

> «Ես չգիտեի Նրան, բայց Նա, որ ինձ ուղարկեց ջրով մկրտելու, Նա ասաց, թե. «Որի վրա որ տեսնես՝ Հոգին վայր է գալիս և Նրա վրա մնում, Նա է Սուրբ Հոգով Մկրտողը»: Եվ ես տեսա ու վկայեցի, թե սա է Աստծո Որդին» (Հովհաննես 1.33,34):

ԵՐԲ ԲԱՌԵՐԸ ԲԱՎԱԿԱՆ ՉԵՆ

Այս հատվածում Հովհաննեսն օգտագործեց մեկ այլ արտահայտություն՝ «կենդանի ջրերի գետերի» փոխարեն: Աստվածաշնչում կան այս իրողությունը նկարագրող այլ արտահայտություններ, օրինակ՝ մկրտված սուրբ կրակով (տե՛ս Մատթ. 3.11, Ղուկ. 3.16), «զորություն հագած» (տե՛ս Ղուկ. 24.49), օծված Աստծո յուղով, ընկղմված Հոգու մեջ, «լցված Հոգով» (տե՛ս Եփես. 5.18), ինչպես նաև՝ վարվել, աղոթել և ապրել Հոգով (տե՛ս Գաղատ. 5.25, Հռոմ. 8.26). մեր մարմինները՝ Սուրբ Հոգու տաճար (տե՛ս Ա Կորնթ. 6.19), Քրիստոսից բացի «ուրիշ Մխիթարիչ» ունենալը (տե՛ս Հովհ. 14.16):

ՊԱՏԿԵՐԱՍՐԱՀ

Այս արտահայտությունները նման են ուրվանկարների, որոնց պետք է ավելացնել գույներ և դետալներ: Աստվածաշունչը Սուրբ Հոգու պատկերասրահն է՝ գործողության մեջ, որում ներկայացված են նշաններ և հրաշքներ: Դրանում պատկերված են մարդիկ, որոնք «Հիսուսի հետ են եղել», գլխիվայր շրջված աշխարհը և նրանք, ովքեր «ճանաչում են Տի-

րոջը» և ուրախությամբ ընդունում են այս նոր վերապրումը: Նրանք պարզապես խանդավառված կրոնավորներ կամ եկեղեցու այցելուներ չեն, այլ նոր տեսակի մարդիկ՝ կենդանի հավատքով: Պողոսն ասում է, որ երբ մենք «մեռած էինք հանցանքներում», Աստված «...մեզ կենդանի արեց Քրիստոսի հետ» (Եփեսացիների 2.5), և որ մենք «ամեն զորությամբ զորացված» ենք՝ «Իր փառքի զորության համեմատ» (Կողոսացիների 1.11): Տեր Հիսուս Քրիստոսն Անձամբ խոստացավ.

> «Բայց դուք զորություն կառնեք, երբ որ Հոգին ձեզ վրա գա» (Գործք 1.8):

Մենք՝ վերստին ծնված հավատացյալներս, հատուկ ենք. մենք սրբեր ենք, և Քրիստոսի Հոգու մկրտությունը հաջորդ մեծ վերապրումն է մեզ համար: Հիսուսը միակն էր, որ հնարավոր դարձրեց դա, երբ մահացավ, հարություն առավ և նստեց Մեծության աջ կողմը Երկնքում: Ինչպիսի՜ պարգև:

Ո՞Վ Է ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ

Տերը չի ուղարկում գովազդային նյութեր երկնային փոստով, որպեսզի պատմի բոլորին, թե ով է Ինքը: Նրա Հոգու կողմից կատարված գործերն են, որ տեսնվում են այս աշխարհում: Սուրբ Հոգին Անձ է. Նա գործող Աստված է: Արարչագործությունը ի հայտ եկավ, երբ «Աստծո Հոգին շրջում էր ջրերի վրայով» (Ծննդոց 1.2): Բոլոր ժամանակներում, երբ Աստված ընտրում էր Իր ծառաներին, Սուրբ Հոգու զորությունը հանգչում էր նրանց վրա.

> «Եվ Մովսեսն ասաց Իսրայելի որդիներին. «Տեսե՛ք, Տերը Ովրի որդի Ուրիի որդի Բեսելիելին կանչեց Հուդայի ցեղից՝ անունով: Եվ լցրեց նրան Աստծո Հոգով՝ իմաստությամբ, հանճարով և գիտությամբ, և ամեն կերպ ճարտարությամբ... Եվ նրա սրտի մեջ դրեց, որ սովորեցնի էլ, նրան էլ և Դանի ցեղից Աքիսամայի որդի Ողիաբին էլ»» (Ելից 35.30,31,34):

> «Եվ Տիրոջ Հոգին եղավ նրա (Գոթոնիելի) վրա, և Իսրայելի մեջ դատավորություն էր անում...» (Դատավորաց 3.10):

Հոգին «հանգչեց Գեդեոնի վրա» (Դատավորաց 6.34), և Գեդեոնը

պաշտպանեց Իսրայելը (տե՛ս Դատ. 6.11, 8.35): Հոգին շարժվեց Սամսոնի կյանքում, և նա գերբնական ուժ պահանջող գործեր արեց (տե՛ս Դատ. 13.1, 16.31): Տիրոջ Հոգին եկավ Հեփթայեի վրա և Իսրայելի թշնամիներին նրա ձեռքը տվեց (տե՛ս Դատ. 11.1, 12.7):

Այդ դատավորներից հետո Սամուել մարգարեն առաջնորդեց Իսրայելին իր ամբողջ կյանքի ընթացքում: Ինչպե՞ս: «Սուրբ Հոգուց շարժված խոսեցին Աստծո մարդիկ» (Բ Պետրոս 1.21): Միքիա մարգարեն վկայեց. «Ես լցված եմ զորությամբ՝ Տիրոջ Հոգով» (Միքիա 3.8):

Ահա թե ինչպես է պատկերված Սուրբ Հոգին: Նա այն Հոգին է, Որին խոստացավ Քրիստոսը՝ իմաստության և գիտության Հոգին, ստեղծարար, զորացնող, բժշկող Հոգին, զորության, վստահության և առաքինության Հոգին:

Աստծո զորությունը նման չէ գերլիցքի այն մարդկանց համար, որոնք արդեն իսկ օժտված են երևելի անհատականությամբ և կարողություններով: Նրա զորությունն այն մարդկանց համար է, որոնք ունեն դրա կարիքը՝ տկարների և անհայտների: «Նա է հոգնածին (կամ՝ տկարին) ուժ տվողը, և Նա կարողություն չունեցողին զորություն է շատացնում» (Եսայի 40.29):

ՉՈՐՍ ՄԵԾ ՊԱՏԿԵՐՆԵՐ

Մենք մանրամասնորեն կուսումնասիրենք Աստվածաշնչի պատկերասրահի պատկերներից չորսը:

ՄԱՐԳԱՐԵԻ ՑԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ

Առաջին պատկերը. Մովսեսը դրեց իր ձեռքերը 70 երեցների վրա ժողովքի վրանի մոտ, և Աստծո Հոգին իջավ նրանց վրա: Այդ պահին Հոգին հանգչեց նաև Ելդադի և Մովդադի վրա, որոնք մնացել էին ճամբարում, և նրանք սկսեցին մարգարեանալ: Մի երիտասարդ վազեց, որ պատմեր դա Մովսեսին: Հեսուն մտածեց, որ մարգարեանալու մենաշնորհը պետք է պատկաներ Մովսեսին, և հորդորեց. «Տե՛ր իմ, Մովսե՛ս, արգելի՛ր նրանց»: Արգելելու փոխարեն, Մովսեսն ասաց. «Ի՞նձ համար ես նախանձում: Երանի՜ թե Տիրոջ ամբողջ ժողովուրդը մարգարեներ լինեին, և Տերն Իր Հոգին նրանց վրա դներ» (Թվոց 11.24,29):

Միանգամից յոթանասուն մա՛րդ: Դա առավելագույնն էր մոտավո-

ռապես 1200 տարվա ընթացքում: Այդ փորձառությունը հազվագյուտ էր, սովորաբար՝ ժամանակավոր էր, և նախատեսված էր միայն առանձին մարդկանց համար: Այնուամենայնիվ, դարեր շարունակ շատերն էին կրում Մովսեսի ցանկությունն իրենց սրտերում:

ՊԱՅԾԱՌ ԵՐԿԻՆՔ

Երկրորդ պատկերը. Սողոմոնի կառուցած տաճարը լիարժեք կերպով գործում էր, բայց մեղքը տկարացրել էր ազգին: Մի մարգարե կանգնեց Երուսաղեմում՝ զգուշացնելով դատաստանի մասին: Մարգարեության հեռադիտակով Հովելը տեսել էր հեռվում գտնվող երկինք՝ սևացած պատերազմական ամպերով, սարսափով և կործանմամբ, որոնք ամայացնելու էին Իսրայելը: Այսօր մենք գիտենք, որ այդ ամենը կատարվեց, և դա ապացուցում է, որ Հովելը ճշմարիտ մարգարե էր: Այնուամենայնիվ, Հովելը պատմեց Իսրայելին ավելին: Բարձրացող փոթորկից շատ ավելի հեռվում նա տեսավ պայծառ երկինք. ոչ թե պարզապես վերականգնում, այլ՝ հրաշալի նոր սկիզբ:

> «Եվ պիտի լինի սրանից հետո, որ Իմ Հոգին պիտի թափեմ ամեն մարմնի վրա, և պիտի մարգարեանան ձեր տղաներն ու ձեր աղջիկները, ձեր ծերերը երազներ պիտի երազեն, ձեր երիտասարդները տեսիլքներ պիտի տեսնեն: Եվ ծառաների ու աղախինների վրա էլ պիտի թափեմ այն օրերում Իմ Հոգին: Եվ նշաններ պիտի տամ երկնքում ու երկրի վրա՝ արյուն և կրակ և ծխի սյուներ» (Հովել 2.28-30):

ԲՈԼՈՐԸ՝ ԱՐՏՈՆՎԱԾ

Այդ օրերին երիտասարդ ստրուկ աղջիկները ջուր էին լցնում իրենց տիրուհիների ձեռքերին, երբ նրանք լվացվում էին, բայց Աստված խոստացավ թափել Իր Հոգին նույնիսկ նրանց վրա: Իրականում, այս մարգարեությունը նշանակում էր, որ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ԹԱՓՎԵԼՈՒ ԷՐ ԱՇԽԱՐՀՈՎ ՄԵԿ՝ ԱՄԵՆ ՏԵՍԱԿԻ ՄԱՐԴԿԱՆՑ ՎՐԱ՝ անկախ նրանց հասարակական դիրքից:

Դա ապշեցուցիչ լուր էր: Այն, ինչ Նա մի ժամանակ շնորհում էր միայն Իր ընտրյալ ծառաների մի խմբի, դառնալու էր այնպիսի արտոնություն, որը յուրաքանչյուրը կարող էր համարել իրենը: Շատերի համար չափա-

զանց դժվար էր պատկերացնել դա կամ հավատալ դրան: Բայց Աստված ասաց դա, և Նրա Խոսքը հավիտյան հաստատ է:

ՄԱՐԳԱՐԵ՝ ԿԱՇՎԵ ՀԱՆԴԵՐՁՆԵՐՈՎ

Երրորդ պատկերը. Հովհաննես Մկրտիչը՝ կաշվե հանդերձներով, կանգնած էր Հորդանան գետի ափին: Նա Աստծո առաջին մարգարեն էր 400 տարվա ընթացքում: Բազմությունները եկան նրան լսելու և մկրտվելու: Նրա հզոր ուղերձը կոչ էր անում Իսրայելին ապաշխարել և պատրաստվել, քանի որ Նա, Ում երկար էին սպասել, հայտնվելու էր.

> «Ես ջրով եմ մկրտում ձեզ՝ ապաշխարության համար, բայց իմ ետևից Եկողն ինձնից զորավոր է, Ում կոշիկները վեր առնելու արժանի չեմ: Նա ձեզ կմկրտի Սուրբ Հոգով և կրակով» (Մատթեոս 3.11):

ՈՉ ՍՈՎՈՐԱԿԱՆ ՄԿՐՏՈՂ

Քսանչորս ժամ անց մկրտվելու թեկնածուների միջև Հովհաննեսը տեսավ մի երիտասարդի, որը մտել էր գետը և մոտենում էր իրեն, և ապշեց. «ԴՈ՞Ւ: ՀԻՍՈ՞ՒՍ: Ես արժանի չեմ մկրտել Քեզ: Դո՛ւ պետք է մկրտես ինձ»: Աստված ցույց էր տվել Հովհաննեսին, որ Հիսուսն էր Նա, Որի գալուստը խոստացված էր (տե՛ս Մատթ. 11.3, Ղուկ. 7.19,20): Նա կատարելու էր շատ ավելի մեծ ծես, քան այն, ինչ կատարում էր Հովհաննեսը Հորդանանում: Մկրտող Հիսուսն օգտագործելու էր ոչ թե երկրային տարերք՝ ջուրը, այլ՝ երկնային կրակը, որը հոգևոր տարերք է: Հովհաննեսը կանգնած էր Հորդանանի սառը ջրերի մեջ, իսկ Հիսուսը կանգնած էր հեղուկ կրակի գետի մեջ: Հովհաննեսն արդեն մի քանի օր էր, որ մկրտում էր, իսկ Հիսուսը մկրտելու էր դարեր շարունակ, ոչ թե ընդամենը մեկ խմբի Պենտեկոստեի օրը, այլ՝ «ամեն մարմնի»: Նա անում է դա նաև այսօր՝ գրեթե 700.000 օր անց:

ԽՈՍՏՈՒՄԸ ՊԱՀՈՂՆԵՐԸ

Չորրորդ պատկերը. վախենալով իշխանություններից, որոնք մահապատժի ենթարկեցին Հիսուսին՝ 120 աշակերտները թաքուն հավաքվել էին: Հիսուսը պատվիրել էր. «Նստե՛ք Երուսաղեմ քաղաքում, մինչև

վերևից զորություն հագնեք» (Ղուկաս 24.49): Նրանք սպասում էին, և ամբողջ աշխարհը մոռացել էր նրանց: Ոչինչ տեղի չէր ունենում, ոչ մի հրաշք չէր կատարվում: Ամեն ինչ այնքա՜ն հասարակ էր թվում:

ՊԵՆՏԵԿՈՍՏԻ ՕՐԵՐԸ

Տասներորդ օրը կիրակի էր՝ Շաբաթների տոնը, որը նաև կոչվում է Պենտեկոստե: Առավոտյան ժամը իններին քահանաներից մեկը Տաճարում բարձրացրեց առաջին բերքից պատրաստված հացը՝ երերացնելով այն Տիրոջ առջև: Դա ասես ազդակ լիներ համբարձված Քրիստոսի համար. մի աստվածային պտտահողմ պատռեց երկինքը Երուսաղեմի վերևում:

Հիսուսն Ինքը ճեղքեց երկինքն Իր ջախջախիչ և հաղթական համբարձման ժամանակ: Այժմ բաց երկնքով իջնում էր Սուրբ Հոգին՝ ցույց տալով, որ ճանապարհը դեպի երկինք փակ չէր: Փա՜ռք Աստծուն, դրանից հետո այն այլևս չի փակվել: Հիսուսի մահվան ժամանակ Տաճարի վարագույրը պատռվեց, և քահանաները, հավանաբար, փորձեցին կարել այն: Սակայն ոչ ոք չի կարող կարել այս պատռվածքը երկնքում, նույնիսկ՝ սատանան և նրա կամակատարները: Այն նոր և կենդանի ճանապարհ է, որը հավիտյան բաց է:

ԿՐԱԿԵ ԼԵԶՈՒՆԵՐ

Մովսեսը տեսավ Աստծուն՝ որպես կրակ մորենու մեջ: Այժմ, երկնային փառքի դռնով, որը ոչ մի մարդ չի կարող փակել, եկավ նույն կրակը՝ Սուրբ Հոգին: Գեղեցիկ կրակե լեզուներն իջան ամեն մի սպասող աշակերտի գլխին: Այն փառքը, որը լցնում է ամբողջ երկինքը, բնակվեց ներկաների սրտերում: Սուրբ Հոգին նրանց մեջ էր և նրանց վրա էր: Անցյալում ոչ ոք երբեք չէր վերապրել դա: Չկային բառեր՝ դա նկարագրելու համար: Դա անպատմելի էր: Դրանից հետո Աստված տվեց նրանց բառեր՝ նոր լեզուներ, որպեսզի նրանք՝ նման ոգեշնչված սաղմոսերգուների, պատմեին «Աստծո հրաշալի գործերը» (Գործք 2.11):

ՄԽԻԹԱՐՈՒԹՅՈՒՆ

Այս իրադարձության բացատրությունը պարզ է: Աշակերտները պատկանում էին Քրիստոսին: Նա Ինքն էր ասել դա, և քանի դեռ Նա նրանց հետ էր այս երկրի վրա, նրանք զարմանալի գործեր էին անում: Դրանից հետո Հիսուսը համբարձվեց Աստծո մոտ, և նրանք միայնակ ու վախեցած զգացին իրենց: Այնուամենայնիվ, Տերը խոստացավ ուղարկել մեկ այլ Օգնականի կամ Մխիթարիչի՝ Սուրբ Հոգուն (տե՛ս Հովհ. 14.16):

«Մխիթարիչ» բառը *(«պարակլետ»)* նշանակում է «ինչ-որ մեկը, ով քայլում է ձեր կողքին»: Երեք ու կես տարվա ընթացքում Հիսուսն աշակերտների հետ էր ցերեկ ու գիշեր: Նա սովորեցնում էր և հույս էր տալիս նրանց այս կյանքի և հավիտենության վերաբերյալ: Այդ գեղջուկները մխիթարող լուր էին ստացել անձամբ Տեր Քրիստոսից: Բայց երբ Նա այլևս այս աշխարհում չէր, նրանց անհրաժեշտ էր մեկ այլ Անձ, Ով կկատարեր Մխիթարիչի դերը՝ Սուրբ Հոգին, Ով Երրորդության երրորդ Անձն էր:

ՕԳՆԱԿԱՆԸ ԱՅՍՏԵ՛Ղ Է

«Օգնական» բառը ենթադրում է, որ ինչ-որ մեկը պատրաստ է օգնություն ցուցաբերել, երբ անհրաժեշտ է: Հիսուսը նրանց կողքին էր ավելի քան երեք տարի շարունակ: Նա նրանց մեծագույն Օգնականը, Ընկերը և Մխիթարիչն էր: Դրանից հետո՝ Պենտեկոստեի օրը, եկավ մյուս Անձը, մյուս Օգնականը՝ Սուրբ Հոգին: Այնպես էր, ասես Հիսուսը կրկին նրանց հետ էր, և նրանք կարող էին կատարել Մեծ հանձնարարականը՝ քարոզել Ավետարանը, բժշկել հիվանդներին, հանել դևերին և հրաշքներ գործել առաջվա պես, մի խոսքով՝ կատարել վկայության գործը, որն ամեն վերստին ծնված մարդու արտոնությունն ու պատասխանատվությունն է (տե՛ս Մատթ. 28.19,20, Մարկ. 16.15-18):

ԺԱՌԱՆԳԱԿԻՑՆԵՐ

Նույնը վերաբերում է նաև մեզ: Մենք նույն խոստման ժառանգակիցներն ենք: Առաջինը՝ մենք պետք է ընդունենք Քրիստոսին և նվիրվենք Նրան, և ապա կարող ենք ընդունել զորության մկրտությունը: Մեր կյանքը պետք է լինի Նրա հարության ապացույցը: Անհրաժեշտ է ավելին, քան խոսելն է. անհրաժեշտ են մարդիկ, որոնք կհայտնեն Հոգու լիությունը:

ԸՆԿՂՄՎԱԾ՝ ԿՐԱԿԻ ՄԵՋ

«Մկրտություն» բառի սկզբնական իմաստը կրոնական չէր: Այդ բառն օգտագործվում էր ներկարարության մեջ: Դրա համարժեքը մեր լեզվում «ընկղմել» բառն է: Կտորը կամ հանդերձն ընկղմվում էր ներկի մեջ, և այն ընդունում էր այդ ներկի գույնը կամ բնույթը: Երբ Քրիստոսը մկրտում է մեզ Հոգով, մենք ստանում ենք Հոգու «գույնը» կամ բնույթը՝ հաղորդակից դառնալով աստվածային բնությանը (տե՛ս Բ Պետր. 1.4): Հոգին մեզանում է, և մենք Հոգու մեջ ենք: Մենք Սուրբ Հոգու մարդիկ ենք՝ ընկղմված կրակի մեջ:

ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՅԼ ԳՈՐԾԵՐ

ՓՐԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՎԵԼԻՆ

Մենք փրկություն ենք ստանում և վերստին ծնվում ենք Սուրբ Հոգու միջոցով: Բայց դրանով Նրա աշխատանքը չի ավարտվում: Նրա գործողությունները բազմապիսի են: Նա զորացնում է մեզ՝ վկայելու համար: Հոգով մկրտությունը նշանակում է, որ շնորհքով փրկված և վերստին ծնված մարդիկ կարող են ունենալ նոր վերապրումներ և դառնալ Հոգով լցված վկաներ Քրիստոսի համար:

ՍԱ ԸՆՏՐՈՎԻ ՉԷ

Որքանո՞վ է անհրաժեշտ Սուրբ Հոգու մկրտությունը: Այն անփոխարինելի էր նույնիսկ աշակերտների համար, որոնք մինչ այդ բժշկում էին հիվանդներին և դևեր էին հանում: Դա հնարավոր էր, քանի դեռ Հիսուսը նրանց կողքին էր: Տեր Հիսուսը պատվիրեց նրանց սպասել մինչև Հոգուն ստանալը, և միայն դրանից հետո գնալ դաշտեր՝ ծառայելու համար: Մարիամը՝ Քրիստոսի մայրը, ևս մեկ օրինակ է: Անկասկած, նա գիտեր, որ Սուրբ Հոգին գործել էր իր կյանքում, և որ Նա էր Հիսուսի ծննդյան պատճառը, բայց նա նույնպես սպասում էր Երուսաղեմում Հոգու այս հետագա աշխատանքին, որը կոչվում էր «Հոր խոստումը»: Եթե նա ուներ դրա կարիքը, նշանակում է՝ դա պետք է բոլորիս (տե՛ս Գործք 1.4):

ՕԺՏՎԱԾ ԶՈՐՈՒԹՅԱՄԲ

Պարզապես Հիսուսին տեսնելը և Նրա ձայնը լսելը չէր, որ ակնառու դարձրեց աշակերտներին, քանի որ նրանցից ոմանք հավատացին, իսկ մյուսները կասկածեցին (տե՛ս Մատթ. 28.17, Մարկ. 16.13,14, Ղուկ. 24.41). դա տեղի ունեցավ Սուրբ Հոգով մկրտվելու շնորհիվ: Նրանք կողպում էին դուռը, երբ հավաքվում էին, քանի որ վախենում էին հրեաներից (տե՛ս Հովհ. 20.19): Նրանք չէին գոչում փողոցներում. «Հիսուսը կենդանի՞ է»: Սկսած առաջին օրերից՝ Գալիլեայում նրանք գաղտնի էին հավաքվում, և նույնիսկ գնացին ձուկ որսալու (տե՛ս Հովհ. 21): Այնուամենայնիվ, այդ ամենը փոխվեց Պենտեկոստեի օրը: Նրանք այլևս չէին վախենում հրեաների բազմությունից. Փոխարենը՝ բազմություններն էին դողում նրանց առջև՝ աղաղակելով. «Ի՞նչ անենք, մարդի՛կ եղբայրներ» (Գործք 2.37): Իրականացավ այն, ինչի մասին ասում էր Հիսուսը.

> «Բայց դուք զորություն կառնեք, երբ որ Հոգին ձեզ վրա գա, և Իմ վկաները կլինեք... մինչև երկրի ծայրերը» (Գործք 1.8):

ԻՆՉՊԵ՞Ս ԴԱ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՎ

ՁԱՅՆ ԵՐԿՆՔԻՑ

Կրկին նայենք չորրորդ պատկերին.

> «Եվ երբ որ Պենտեկոստեի օրերը լրացան, ամենքը միաբան մեկտեղ էին: Եվ հանկարծակի երկնքից մի հնչյուն եղավ՝ սաստիկ փչող քամու պես, և լցրեց ամբողջ տունը, ուր նստած էին: Եվ երևացին նրանց բաժանված լեզուներ՝ ինչպես կրակից, և նստեց նրանցից ամեն մեկի վրա: Եվ ամենքը Սուրբ Հոգով լցվեցին և սկսեցին ուրիշ լեզուներով խոսել, ինչպես որ Հոգին նրանց խոսել էր տալիս»
> ԳՈՐԾՔ 2.1-4:

ՈՉ ՄԻ ԴԱՏԱՐԿ ԽՈՍՏՈՒՄ

Ինչպիսի՜ աստվածային զորություն և փառք: Գործք առաքելոց գրքի երկրորդ գլուխն աղմկոտ է և հագեցած է գործողություններով: Երկնային Հայրը դատարկ խոստումներ չի տալիս, որպեսզի հուսադրի մեզ, իսկ հետո ծիծաղի մեզ վրա: Քրիստոսն ասաց. «Գնացե՛ք ամբողջ աշխարհով...» (Մարկոս 16.15): Այն պահին, երբ այդ «կրակե լեզուները» հպվեցին նրանց գլուխներին, այդ հանձնարարականը դրվեց նրանց մեջ: Աստված գործեց, իսկ հետո նրանք գործեցին: Աստվածային ազդեցությունն առաջացրեց մարդկային հակազդեցություն, և հենց դա է պատճառը, որ այս գիրքը կոչվում է Գործք առաքելոց (Առաքյալների գործերը):

ԱՐՏԱՀՈՍՔ

Տեղի ունեցավ ներհոսք երկնքից, և դրան պետք է հետևեր արտահոսքը. «Նրա սրտից գետեր կհոսեն» (Հովհաննես 7.38, NKJV), ոչ թե՝ «դեպի» Նրա սիրտը: Հոգով մկրտվելու նպատակը զգացմունքային բավականությունը չէր: Աշակերտները չասացին. «Եկեք ամեն շաբաթ աղոթքի հավաքույթ կազմակերպենք՝ այս զորությունը վերապրելու համար»: Նրանք այլևս չխնդրեցին զորություն իրենց համար, քանի որ գիտեին, որ արդեն ունեին այն: Պետրոս առաքյալն ասաց Գեղեցիկ դարպասի մոտ գտնվող անդամալույծին. «Ինչ որ ունեմ, այն քեզ կտամ» (Գործք 3.6):

ԿՐԱԿՈՏ ԱՎԵՏԱՐԱՆ

Նույնպես, նրանք պարզապես չնստեցին՝ ընտրելով նախագահողի և ընդունելով բանաձևեր հասարակական խնդիրների վերաբերյալ: Նրանք չէին կարողանում զսպել իրենց: Նրանք պետք է ոտքի ելնեին և գործեին: Պետրոսը կանգնեց՝ ասես լցված էլեկտրական ուժով, և սկսվեց քրիստոնեական ժամանակաշրջանը. աշխարհը լսեց առաջին ավետարանչական քարոզը: Իհարկե, դա կրակոտ Ավետարան էր:

ՊՏՂԱԲԵՐ ԱՎԵՏԱՐԱՆՉՈՒԹՅՈՒՆ

Եվ ինչպիսի՞ արդյունք դա ունեցավ: Երեք հազար մարդ ընդունեց փրկությունը: Հենց դա էր Պենտեկոստեի նպատակը: Իրականում, Երրորդությունը՝ ամբողջ Աստվածությունը, գործի դրեց Իր փրկության և ավետարանչության ծրագրերը: Հայրը միաբանվեց համբարձված Տիրոջ հետ, որպեսզի ուղարկեր Հոգուն՝ կորսված աշխարհը փրկելու համար (տե՛ս Եսայի 48.16): Հենց դա է Հոգով մկրտության գլխավոր նպատակը՝ այն, որ Աստված փրկում է մարդկանց: Իսկ ի՞նչ ենք անում մենք: Մկրտության նպատակը ոչ թե մեզ զգացմունքային վերապրումներ տալն է, այլ՝ օգնելը, որ գործենք Տիրոջ հետ: Մենք գիտենք, թե ինչու եկավ Հիսուսը, և ինչու եկավ Սուրբ Հոգին: Իսկ ՄԵ՞ՆՔ ինչու ենք այստեղ:

ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

Ինչպիսի՜ օր էր Պենտեկոստեն: «Գետերը» սկսեցին հոսել և, ի վերջո, հեղեղեցին ամբողջ Հռոմեական կայսրությունը: Մարդիկ հառաչում են՝ ցանկանալով ապրել Առաջին եկեղեցու օրերում, սակայն այդ ժամանակաշրջանը հատուկ չէր այդ օրերի և այդ մարդկանց պատճառով: Պատճառը Սուրբ Հոգու մկրտությունն էր: Առանց դրա՝ աշակերտները, հավանաբար, կրկին ձկնորսներ կդառնային Գալիլեայում և կծերանային՝ պատմելով տարօրինակ պատմություններ իրենց երիտասարդ օրերից: Այնուամենայնիվ, նրանք փոխեցին ամբողջ աշխարհը: Այսօր այդ մկրտությունը հասանելի է բոլորին:

ԱՅՍՕՐՎԱ ՀԱՄԱՐ

Այսօր ոմանք ցանկանում են զրկել հավատացյալներին՝ ասելով, որ Հոգով մկրտությունը, որին հետևում են նշանները, նախատեսված էր միայն առաջին հավատացյալների համար՝ «մինչև եկեղեցու հաստատվելը»: Նրանք համարում են, որ մենք պետք է սովորենք գործել առանց այդ հավատացյալների հրաշագործ պարգևների: Նրանք ներկայացնում են Առաջին եկեղեցու քրիստոնյաներին որպես էլիտար խումբ, ասես մենք չենք կարող լինել այնպիսի քրիստոնյաներ, ինչպիսին նրանք էին: Այնուամենայնիվ, նույնիսկ մեկ բառ Աստվածաշնչում նման բան չի ենթադրում:

Դա տեսություն է, որը հորինել է անհավատությունը: Իրականում, երբ Պողոսը Եփեսոս գնաց Եկեղեցու հիմնադրումից 20 տարի անց, 12 մարդ մկրտվեց Հոգով (տե՛ս Գործք 19.6,7):

ՊԵՆՏԵԿՈՍՏԵՆ՝ ԲՈԼՈՐ ՍԵՐՈՒՆԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ամեն սերունդ ունի Պենտեկոստեի կարիքը: Մ.թ. 30 թվականին աշխարհի բնակչությունը կազմում էր հարյուր միլիոն մարդ: Այսօր այդ թիվը գերազանցում է յոթ միլիարդը և արագորեն ավելանում է: Այսօր Հիսուսի մասին չգիտի տասն անգամ ավելի շատ մարդ, քան առաջին դարում: Եկեղեցին դեռ պետք է հաստատվի շատ վայրերում: Անհավատությունը և բացարձակ տգիտությունն Աստծո մասին ամենուր են: Անկասկած, մենք շատ ավելի հուսահատորեն ունենք Սուրբ Հոգու զորության կարիքը:

Այդ իսկ պատճառով, ուզում եմ մանրամասնորեն բացատրել ձեզ՝ ըստ Աստվածաշնչի, թե ինչու է նույն այդ մկրտությունը նախատեսված մեզ համար, և ինչպես ստանալ այն: Կարդացե՛ք այն, ինչ Պետրոսը՝ Սուրբ Հոգու օծության ներքո քարոզեց բազմությանը Պենտեկոստեի օրը՝ ասելով, թե ով կարող էր մկրտվել Սուրբ Հոգով.

> «Որովհետև ձեզ և ձեր որդիների համար է այս խոստումը, և այն բոլոր հեռավորների համար, որոնց մեր Տեր Աստված կկանչի» (Գործք 2.39):

ՁԵԶ ՀԱՄԱՐ

Առաջինը՝ Պետրոսն ասաց, որ այն «ձեզ համար» է՝ նույն մարդկանց, որոնց նա քիչ առաջ մեղադրեց. «Նրան (Հիսուսին)... առաք, անօրենների ձեռքով փայտի վրա բևեռած սպանեցիք» (Գործք 2.23): Չնայած դրան՝ նա հայտարարեց. «Ապաշխարե՛ք, և ձեզնից ամեն մեկը թող մկրտվի Հիսուս Քրիստոսի անունով՝ մեղքերի թողության համար, և Սուրբ Հոգու պարգևը կընդունեք» (Գործք 2.38): Խոսքն այն մարդկանց մասին է, որոնց Հիսուսն անվանեց «չար ազգ» (Ղուկաս 11.29), «անհավատ և խոտորված» (Մատթեոս 17.16, Ղուկաս 9.41):

ՁԵՐ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Երկրորդը՝ Նա ասաց. «Ձեր որդիների համար»՝ հաջորդ սերնդի: Ոմանք ուշ են երեխաներ ունենում: Այնպես որ, հնարավոր էր, որ Պենտեկոստեից 100 տարի անց մարդիկ դեռևս ստանային այս օրհնությունը և խոսեին լեզուներով: Ղուկասի 2.36-ում գրված է 84 տարեկան մի այրի կնոջ մասին: Այնուամենայնիվ, «որդիներ» բառը վերաբերում էր ոչ միայն նրանց ընտանիքներին, այլև՝ սերունդներին, այսինքն՝ Իսրայելի զավակներին:

ԲՈԼՈՐ ՀԵՌԱՎՈՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Երրորդը՝ Պետրոսն ասաց. «Այն բոլոր հեռավորների համար»՝ ժամանակի և տարածության մեջ, մինչև երկրի ծայրերը, որտեղ Քրիստոսը պատվիրեց եկեղեցուն տանել Ավետարանը (տե՛ս Մատթ. 28.19,20, Մարկ. 16.15,16): Այս առաջադրանքը պահանջելու էր շատ տարիներ, որոնք մեծապես գերազանցելու էին առաքելական ժամանակաշրջանը: Օրինակ, Նոր Զելանդիան կարելի է համարել երկրի ծայրերից մեկը. ոչ մի միսիոներ չէր գնացել այնտեղ մինչև 1814 թվականը: Այդ առաջադրանքն ավարտված չէ նույնիսկ այսօր. այնպես որ, մենք դեռ ունենք այս զորության կարիքը:

ՆՐԱՆՑ ՀԱՄԱՐ, ՈՐՈՆՑ ՄԵՐ ՏԵՐ ԱՍՏՎԱԾ ԿԿԱՆՉԻ

Չորրորդը՝ Պետրոսն ասաց այն, ինչն անկարելի է սխալ հասկանալ. «ամեն (մեկի)... համար, որին մեր Տեր Աստված կկանչի»: «Աստծուց կանչվածները» նրանք են, ովքեր ընդունում են Քրիստոսին. «Ոչ ոք չի կարող Ինձ մոտ գալ, եթե Հայրը, որ Ինձ ուղարկեց, չքաշի նրան» (Հովհաննես 6.44): Բոլոր հավատացյալները կանչված են, և բոլորն էլ խոստում են ստացել նույն պարգևի համար, որն այդ օրը ստացան Պետրոսը և նրա 119 ընկերները: Արե՛ք այն, ինչ արեցին առաքյալները, և դուք կստանաք այն, ինչ ստացան նրանք: Հավատացե՛ք, որ Աստծո խոստումները տրվել են բոլորին. «Եվ մի՛ արբեք գինով... այլ՝ լցվե՛ք Հոգով» (Եփեսացիների 5.18):

ԱՆՄԻՋԱՊԵՍ ՀԻՍՈՒՍԻՑ

Մկրտողը միայն Հիսուսն է, ուրիշ ոչ ոք: Մի՛ բավարարվեք երկրորդական վերապրումով: Ունեցե՛ք ձեր անձնական Պենտեկոստեն: Մի՛ փորձեք օգուտ քաղել ինչ-որ մեկի փորձառությունից որևէ խարիզմատական հավաքույթի ժամանակ: Սուրբ Հոգու կրակը չեկավ մեծ ընդհանուր կրակե լեզվով, որ բոլորը հավաքվեին դրա շուրջը և տաքանային՝ հարմարավետ համաժողովներ անցկացնելով: Փոխարենը, այն եկավ առանձին «լեզուներով»՝ փոքրիկ կրակներով, և «նստեց նրանցից ամեն մեկի վրա» (Գործք 2.3): Սա շատ կարևոր է: Իրականում, այդ կրակե լեզուները նման են հզոր շարժական էլեկտրակայանների, որոնք մարդկանց հետ են, ուր էլ նրանք գնան:

ՎԱՌՎԵԼ ՀՈԳՈՎ

Մենք ապրում ենք հոգևորապես խավար և ցուրտ աշխարհում: Չսառչելու լավագույն միջոցը Սուրբ Հոգով վառվելն է: Աստված կվառի ձեր սրտի զոհասեղանի կրակը, որպեսզի դուք դառնաք կրակը տարածող:

ՄԱՍ ԵՐԿՈՒ
ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆԸ. ԻՆՉՊԵ՞Ս ԸՆԴՈՒՆԵԼ ԱՅՆ

Միգուցե մտածեք, որ Սուրբ Հոգու նման թանկ պարգևն ընդունելը շատ բարդ կլինի: Ճիշտ հակառակը՝ դա շատ հեշտ է: Դուք կարող եք ընդունել մկրտությունը Սուրբ Հոգով հենց այնտեղ, որտեղ գտնվում եք: Այս բաժնում ես շատ պարզ կսովորեցնեմ, թե ինչպես ընդունեք Սուրբ Հոգուն:

ՀԱՎԱՏԱԼԻ ՊԱՐԳԵՎՈՂԻՆ

Հազարավոր անհավատներ գալիս են մեր ավետարանչական հավաքույթներին: Նրանցից ոմանք իսկապես հեռու են Աստծուց. նրանք չար և անբարո են, կախվածություններ ունեն, կապված են օկուլտիզմով կամ մեծ աշխատանք են կատարում այնպիսի կրոնների համար, որոնք ոչինչ չեն տալիս իրենց: Առաջին հերթին, նրանք պետք է փրկություն ստանան: Պողոսն ասաց իր օրերի նորադարձների մասին. «(դուք) լվացվեցիք... սրբվեցիք» (Ա Կորնթացիների 6.11): Միգուցե անցյալում նրանց մարմիններում բնակվում էին անմաքուր հոգիներ, սակայն մենք տեսնում ենք, թե ինչպես են հարյուր հազարավոր այդպիսի մարդիկ դառնում Սուրբ Հոգու տաճարները: Ինչպե՞ս: Կա ընդամենը երկու պայման. առաջինը՝ ապաշխարությունը, և երկրորդը՝ հավատքը Տեր Հիսուս Քրիստոսի հանդեպ:

> «Պետրոսն էլ նրանց ասաց. «Ապաշխարե՛ք, և ձեզնից ամեն մեկը թող մկրտվի Հիսուս Քրիստոսի անունով՝ մեղքերի թողության համար, և Սուրբ Հոգու պարգևը կընդունեք»» (Գործք 2.38):

ԱՊԱՇԽԱՐՈՒԹՅՈՒՆ

Հիսուսն ասաց. «Ես կխնդրեմ Հորը, և ուրիշ Մխիթարիչ կտա ձեզ... որին աշխարհը չի կարող ընդունել» (Հովհաննես 14.16,17): Պետրոսն ասաց. «Ուրեմն, զղջացե՛ք (կամ՝ ապաշխարեք) և ետ դարձեք, որ ձեր մեղքերը ջնջվեն, որ Տիրոջ երեսից հանգստանալու ժամանակները գան... Ապաշխարե՛ք... մեղքերի թողության համար, և Սուրբ Հոգու պարգևը կընդունեք» (Գործք 3.19,20, 2.38):

ՍՈՒՐԲ ՊԱՐԳԵՎ

Սուրբ Հոգին սուրբ է: Աստվածաշունչն օգտագործում է աղավնու խորհրդապատկերը՝ Սուրբ Հոգուն նկարագրելու համար: Աղավնին մաքուր թռչուն է. այն չի կառուցի իր բույնն աղբակույտի մոտ: Սուրբ Հոգին չի բնակվի մեղավոր մարդու կյանքում. Նա չափազանց զգայուն է: Երկնային ջրերը չեն հոսում կեղտոտ ջրանցքներով՝ ո՛չ կեղտոտ մտքերով, ո՛չ էլ կեղտոտ բերաններով:

ԼՎԱՑՎԱԾ ԱՐՅԱՄԲ

Սուրբ Հոգին միայն տրվում է Աստծո որդիներին և դուստրերին, որոնք լվացված են Հիսուսի արյամբ: Ոչ ոք չի կարող արժանանալ դրան՝ առանց Գողգոթայի աղբյուրի մեջ մաքրվելու: Արյունը նախորդում է կրակին: Ոչ մի այլ մաքրման միջոց անհրաժեշտ չէ և հնարավոր չէ: Մենք չենք կարող դարձնել մեզ ավելի սուրբ կամ ավելի արժանի, քան Հիսուսի արյունն է դարձնում մեզ: Սուրբ Հոգին պարգև է, որն անկարելի է վաստակել:

ՀԱՎԱՏՔ

> «Բայց առանց հավատքի անկարելի է հաճո լինել (Աստծուն), որովհետև Աստծուն մոտեցողը պետք է հավատա, թե Նա կա, և թե Իրեն խնդրողներին վարձահատույց կլինի» (Եբրայեցիների 11.6):
>
> «Սա ասաց այն Հոգու համար, որ ընդունելու էին Նրան հավատացողները» (Հովհաննես 7.39):

«Ո՛վ անմիտ գաղատացիներ... օրենքի գործերի՞ց ընդունեցիք Հոգին, թե՞ հավատքը լսելուց» (Գաղատացիների 3.1,2):

ԵԿԵ՛Ք ՀԱՄԱՐՁԱԿՈՒԹՅԱՄԲ

Գալ Հիսուսի մոտ խնդրելով և աղաչելով՝ նշանակում է բոլորովին հավատք չունենալ: ՀԱՎԱՏՔՆ ԸՆԴՈՒՆՈՒՄ է: Մի՞թե դուք պետք է համոզեք Հիսուս Քրիստոսին մկրտել ձեզ Իր սուրբ կրակով: Նա արդեն խոստացել է դա: Եկե՛ք համարձակությամբ, որ ընդունեք այն, ինչ Նա առաջարկում է ձեզ: Դա պարգև է, և դուք պետք է հավատաք Պարգևողին, մինչև կընդունեք այն, ինչ Նա տալիս է:

ԱՅԼԵՎՍ ՊԵՏՔ ՉԻ ՍՊԱՍԵԼ

Ի՞նչ կասեք «Երուսաղեմում նստելու» մասին: Հիսուսը պատվիրեց աշակերտներին՝ սպասել, բայց այդ ժամանակ Սուրբ Հոգին դեռ չէր տրվել, քանի որ Հիսուսը դեռ չէր փառավորվել (տե՛ս Հովհ. 7.39): Նրանք պետք է սպասեին այդ պատմական պահին: ԲԱՅՑ ԱՅԺՄ ՆԱ ԱՅՍՏԵՂ է: Պենտեկոստեն իրողություն է, և դուք կարող եք անձամբ վերապրել այն: Մեր հավաքույթների ժամանակ մենք չենք աղաչում. մենք ընդունում ենք: Հիսուսը սիրում է կատարել Իր Խոսքը մեր կյանքում: Մենք հավատացյալներ ենք, ոչ թե մուրացկաններ:

ՍՈՒՐԲ ԼԵԶՈՒՆ

Երբ մենք ստանում ենք Սուրբ Հոգու իրական մկրտությունը, դրան հետևում են այդ մկրտության իրական նշանները.

> «Ամենքը Սուրբ Հոգով լցվեցին և սկսեցին ուրիշ լեզուներով խոսել, ինչպես որ Հոգին նրանց խոսել էր տալիս» (Գործք 2.4):

Ինչպե՞ս: Հարյուր քսան աշակերտները փառք էին տալիս Աստծուն, երբ հանկարծ եկավ «սաստիկ փչող քամին» (Գործք 2.2) և կրակե լեզուները, և նրանց սրտերը պայթեցին ուրախությունից: Նրանք բացեցին

իրենց բերանները՝ խոսելու համար, և Հոգին խոսել տվեց նրանց՝ իրենց համար անհայտ լեզուներով:

ՆՈՒՅՆ ԱՐԴՅՈՒՆՔԸ

Եթե մենք ստանում ենք նույն մկրտությունը, այն պետք է ունենա նույն արդյունքը: Մկրտող Հիսուսը չի փոխվել, չեն փոխվել նաև Նրա մեթոդները: Աստծո թագավորության մեջ մենք պատճենների պատճեններ չենք. մենք բնօրինակներ ենք Բնօրինակից՝ ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻՑ: Երբ մկրտվում ենք Սուրբ Հոգով, մենք չենք ստանում մնացորդներ, այլ՝ իրական փորձառություն:

ԼԵԶՈՒՆԵՐ

Լեզուներով խոսելու կարողության մասին գրված է ամբողջ Գործք առաքելոց գրքում.

> «Եվ զարմացան Պետրոսի հետ եկող հավատացյալները, որ թլփատությունից էին, որ հեթանոսների մեջ էլ Սուրբ Հոգու պարգևը թափվում էր, որովհետև լսում էին, որ նրանք լեզուներով խոսում և Աստծուն փառավորում էին» (Գործք 10.45,46):

Առաքյալները լեզուներով խոսելը համարում էին Սուրբ Հոգով մկրտվելու ապացույց: Սիմոն մոգը «տեսավ» Հոգու այս գերբնական դրսևորումը (տե՛ս Գործք 8.17-19): Պողոսը ստացավ այս մկրտությունը (տե՛ս Գործք 9.17) և ասաց, որ ինքը խոսում էր լեզուներով (տե՛ս Ա Կորնթ. 14.18): Այս մասին գրված է նաև այլ դեպքերում (տե՛ս Գործք 11.17, 13.52, 19.6):

Պենտեկոստեի օրը Պետրոսը բացատրեց, թե ինչ էր կատարվում՝ մեջբերելով Հովել մարգարեին (տե՛ս Գործք 2.17-19): Հովելը մարգարեացավ, որ մարդիկ մարգարեանալու էին: Երբ նրանք խոսում էին լեզուներով, Պետրոսն ասաց. «Ահա՛ դա» (Գործք 2.16): Երբ լեզուներով խոսելը թարգմանվում է, դա մարգարեություն է:

ԱՐՏԱՔԻՆ ՆՇԱՆ

Մի՞թե Աստված կարող էր տալ ավելի լավ նշան, քան լեզուները, որպեսզի վստահեցներ մեզ, որ Հոգու ներկայությունը մեր ներսում է և մեզ վրա է, երբ մենք քարոզում ենք Ավետարանը: Երբ մենք տկար, վախեցած և ճնշված ենք զգում, ինչպես Պողոսը (տե՛ս Ա Կորնթ. 2.3), հրաշալի լեզուները վստահություն են ներշնչում մեզ: Առանց որոշակի արտաքին դրսևորման՝ մենք կարող էինք հավիտյան աղոթել և այդպես էլ չունենալ համոզվածություն, սակայն մենք ստացել ենք նշան Նրանից:

ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ԳԱՂՏՆԻ ԾԱԾԿԱԳԻՐԸ

Ինչպիսի՜ հրաշալի բան: Պողոսն ասաց, որ երբ խոսում ենք լեզուներով, մենք գաղտնիքներ ենք պատմում Աստծուն (տե՛ս Ա Կորնթ. 14.2): Լեզուները միակ հաղորդակցման միջոցն է, որը սատանան չի հասկանում: Ամեն ինչ շփոթեցնողը ի՛նքն է շփոթվում, քանի որ նա չգիտի նույնիսկ Սուրբ Հոգու այբուբենը: Սատանան չի կարող կոտրել Սուրբ Հոգու գաղտնի ծածկագիրը, որը կապ է ստեղծում մեր և երկնային գահի միջև:

ՆԱԽԱՏԵՍՎԱԾ՝ ԱՂՈԹՔԻ ՀԱՄԱՐ

Մեր մարմինները «Սուրբ Հոգու տաճար» են (Ա Կորնթացիների 6.19): Հիսուսն ասաց, որ տաճարն աղոթքի տուն է (տե՛ս Մատթ. 21.13, Մարկ. 11.17): Եթե մեր մարմինները տաճարներ են, այսինքն՝ աղոթքի տներ, որոնցում բնակվում է Սուրբ Հոգին, Նա կբարձրացնի մեր միջոցով պարզ և ազդեցիկ աղոթքներ, որոնք կհասնեն Աստծո գահին: Հոգին սիրում է աղոթել, և հենց այդ պատճառով է, որ Հոգով լցված մարդիկ մշտապես պատրաստ են աղոթել: Դա դառը պարտականություն չէ, այլ՝ փառավոր հաճույք և արտոնություն: Հիսուսն ասաց. «Երբ որ Նա՝ Ճշմարտության Հոգին գա, Նա... Ինձ կփառավորի» (Հովհաննես 16.13,14):

ՊԵՆՏԵԿՈՍՏԵԻ ՆՇԱՆԸ

Երբ Սողոմոնն ընծայեց Տաճարը, *«շխինայի»*՝ Աստծո տեսանելի փառքի լույսը շողաց Սրբության սրբոցում գտնվող ոսկե Քավության

(Ուխտի տապանակի կափարիչի) վրա: Նրա աղոթքից հետո տաճարի ամբողջ տարածքը՝ սրբարանը և արտաքին գավիթները լցվեցին փառքով: Քահանաները չէին կարողանում տաճար մտնել դրա պատճառով, և բոլորը ընկան գետնին՝ երկրպագելով Աստծուն և գոհանալով Նրանից (տե՛ս Բ Մնաց. 7.1-3): Սա հինկտակարանյան պատկեր է:

ԼԵՑՈՒՆՈՒԹՅՈՒՆ

Եթե մենք փրկված ենք, Քրիստոսի լույսը բնակվում է մեր սրտի ներքին սրբարանում, բայց երբ մենք աղոթում ենք Սուրբ Հոգուն ստանալու համար, Նա ազդեցություն է ձեռք բերում մեր ամբողջ էության վրա՝ հոգու, անձի և մարմնի: Նա ամբողջովին հեղեղում և մկրտում է մեզ:

ԽՆԴՐԵ՛Ք, ՓՆՏՐԵ՛Ք, ԹԱԿԵ՛Ք

Այսպիսով, խնդրե՛ք, և վերջ: Մաքրվելով Հիսուսի փրկարար արյամբ՝ մենք դառնում ենք Աստծո զավակներ, և Սուրբ Հոգու մկրտությունը դառնում է մեր բնածին իրավունքը: Հիսուսը խրախուսում է մեզ հատկապես այս պարգևի վերաբերյալ. «Խնդրե՛ք... որոնե՛ք... թակե՛ք... Որովհետև նա, ով խնդրում է, առնում է, և ով որոնում է, գտնում է, և ով դուռը թակում է, բացվում է նրան» (Ղուկաս 11.9,10): Խնդրե՛ք «հավատքով... առանց երկմտելու» (Հակոբոս 1.6):

ՈՉ ՄԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ՝ ԻՆՔՆԱԿՈՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Այն, ինչ մենք ստանում ենք, տրվում է միայն Աստծուց: Սատանան չի կարող պատասխանել Հիսուսի անունով արված աղոթքներին: Նա չունի ոչ մի հնարավորություն՝ միջամտելու մեր և երկնքի անմիջական կապի մեջ, երբ մենք խնդրում ենք Սուրբ Հոգուն երկնային Հորից: Ոչ մի պիղծ դև չի կարող գալ մեզ մոտ՝ Սուրբ Հոգու կերպարանքով: Կարդացե՛ք Ղուկաս 11.11-13-ը.

> «Եվ ձեզնից ո՞վ է, որ հորից իր որդին հաց ուզի, մի՞թե քար կտա նրան, կամ եթե ձուկ՝ մի՞թե ձկան տեղ օձ կտա նրան: Եվ կամ ձու ուզի, մի՞թե կարիճ կտա նրան: Արդ եթե դուք, որ

չար եք, գիտեք բարի պարգևներ տալ ձեր որդիներին, էլ որքա՞ն ավելի երկնավոր Հայրը Սուրբ Հոգին կտա նրանց, որ ուզում են Նրանից»:

Ահա և վերջնական պատասխանը: Մենք չենք կարող ավելի պարզ հավաստիացում ստանալ:

ԻՆՉ ՊԵՏՔ Է ԱՆԵՔ ՀԻՄԱ

Այժմ, կարդալով այս գիրքը, դուք գիտեք, թե ինչ է Տերը մտադիր անել ձեր կյանքում. մկրտել ձեզ Սուրբ Հոգով: Հիշե՛ք, որ ՀԻՍՈՒՍԸ և միայն ՀԻՍՈՒՍՆ է Սուրբ Հոգով Մկրտողը (տե՛ս Հովհ. 1.33): Եվ Նա ձեզ հետ է հենց հիմա:

Եթե դուք ընդունել եք Հիսուսին՝ որպես Տեր և Փրկիչ, ձեր մեղքերը ներված են: Դուք լվացվել եք Աստծո Գառան արյամբ՝ մաքրվելով ձեր բոլոր մեղքերից, և կարող եք ստանալ այս փառավոր պարգևը: Նույնիսկ կարիք չկա, որ սպասեք որևէ հատուկ եկեղեցական ծառայության: Հիսուսը ձեզ հետ է հենց այս պահին: Սկսե՛ք փառք տալ Նրա անվանը:

Երկրպագե՛ք Տիրոջը, փա՛ռք տվեք Նրա անվանը, և Հիսուս Քրիստոսը կմկրտի ձեզ Սուրբ Հոգով և կրակով:

Այն, ինչ ունեին առաջին քրիստոնյաները, նույնպես ձեզ համար է, ինչպես և յուրաքանչյուրի, քանի որ Հիսուսը սիրում է ձեզ: Հիշե՛ք. Հիսուսին պետք չէ համոզել, որ մկրտի ձեզ Սուրբ Հոգով: Նրան պետք չէ համոզել, որ սիրի ձեզ, և Նա այնքա՛ն է սիրում ձեզ, որ կմկրտի Սուրբ Հոգով հիմա... ՀԵՆՑ ՀԻՄԱ:

ԹՈՂ ԴԱ ՏԵՂԻ ՈՒՆԵՆԱ

Եվ հիմա, թանկագի՛ն Տեր Հիսուս, թող որ ինձ հետ կատարվի այն, ինչ կատարվեց 120 աշակերտների հետ, երբ լցվեցին Սուրբ Հոգով: Ես կարդացի Մարկոս 16.20-ը. «Նրանք էլ դուրս գնացին, ամեն տեղ քարոզում էին, և Տերը գործակցում էր նրանց հետ և Խոսքը հաստատում էր այն նշաններով, որ հետևում էին: Ամե՛ն»: Ես չեմ սպասի, այլ խոնարհաբար կընդունեմ Քո զորությունը, առաջնորդությունը և շտկումը: Շնորհակա՛լ եմ Քո օծության համար: Թող որ իմ մահկանացու շուրթերը քարոզեն հավիտենական Ավետարանը, և իմ մահկանացու ձեռքերը կառուցեն Քո հավիտենական Թագավորությունը՝ Հոր փառքի համար: Թող ամբողջ աշխարհը փրկվի, Հիսուսի անունո՛վ:

Այցելե՛ք ՌԵՅՆՀԱՐԴ ԲՈՆԿԵԻ Ֆեյսբուքյան էջը,

«Evangelist Reinhard Bonnke – Official Page»

որպեսզի խոսք ստանաք

Աստված քեզ հետ լինի օր:

«Ավետարանչությունը հրեղեն կառք է՝ բոցավառվող անիվներով, որում ջերմեռանդ ավետաբերը քարոզում է կրակե **ԱՎԵՏԱՐԱՆԸ**»:

ԱՅՑԵԼԵ՛Ք ՄԵԶ ԱՅՍՕՐ:

«ԱՎԵՏԱՐԱՆՉՈՒԹՅՈՒՆԸ ՀՐԵՂԵՆ ԿԱՌՔ Է՝ ԲՈՑԱՎԱՌՎՈՂ ԱՆԻՎՆԵՐՈՎ, ՈՐՈՒՄ ՋԵՐՄԵՌԱՆԴ ԱՎԵՏԱԲԵՐԸ ՔԱՐՈՋՈՒՄ Է ԿՐԱԿԵ ԱՎԵՏԱՐԱՆԸ: ԹՈՒՅԼ ՏՎԵՔ, ՈՐ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ՁԵՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՐՁՆԻ ԻՐ ԿԱՌՔԸ»:

ՌԵՅՆՀԱՐԴ ԲՈՆԿԵ

Դուք հրավտա՞նգ եք, թե՞ հրակայուն: Այս աշխատության մեջ, որը Սուրբ Հոգու մասին է, ավետարանիչ Ռեյնհարդ Բոնկեն պատմում է իր հաջողության գաղտնիքի՝ Սուրբ Հոգու կրակի մասին: Նա ներկայացնում է մի շարք անփոխզիջումային և մեծազույն ճշմարտություններ Սուրբ Հոգու մասին, որոնք հանդիսանում են իր՝ ավելի քան հիսունամյա ծառայության անկյունաքարը: Միսիոներական դաշտում վերապրած դժվարին պահերի և նեղությունների ընթացքում ծնված այս ճշմարտությունները՝ Սուրբ Հոգու Կրակե սկզբունքները, պարունակում են խորը դասեր Սուրբ Հոգու մասին, որոնք քննարկման ենթակա չեն այն հավատացյալի կամ ծառայողի համար, ով ցանկանում է գործել Սուրբ Հոգու գերբնական զորությամբ և պարգևներով:

Այս գրքում դուք կծանոթանաք Ռեյնհարդ Բոնկեի հավատքին և Սուրբ Հոգու մասին ուսմունքին, որը թարմություն կբերի ձեր կյանքում, կխթանի ձեզ և նորովի կներկայացնի Երրորդության երրորդ Անձի գործունեությունը: Եթե ուզում եք ունենալ կյանքով լեցուն և պտղաբեր ծառայություն կամ քրիստոնեական ընթացք, անպայման ընթերցեք այս գիրքը: Սուրբ Հոգու մկրտությունը շարունակում է մսալ այս աշխարհն ավետարանչության կրակով վառելու բանալին: Եվ մեր գիտելիքը Սուրբ Հոգու Անձի, ներկայության և զորության մասին, նաև Նրա հանդեպ ունեցած մեր արձագանքը և հավատքը այն գործոնն է, որը փոխելու է այս աշխարհը:

Ավետարանիչ Ռ.Բոնկեն «Քրիստոսը՝ բոլոր ազգերի համար» ծառայության հիմնադիրն է, որը հայտնի է իր մեծ ավետարանչական հավաքույթներով Աֆրիկայի մայրցամաքում և աշխարհով մեկ: Ներկայումս այս ծառայությունը ղեկավարում է Դանիել Կոլենդան: Ավետարանիչ Ռ.Բոնկեն մեծ նախանձախնդրություն ունի Ավետարանի համար և ծառայում է փրկության և բժշկության հզոր օծության ներքո: Նա մի շարք գրքերի հեղինակ է, որոնց թվում են «Ավետարանչություն՝ կրակով» նաև «Սուրբ Հոգի. հայտնություն և հեղափոխություն» գրքերը: Նրա գրքերը թարգմանվել են բազմաթիվ լեզուներով, և միլիոնավոր օրինակներ հասանելի են ամբողջ աշխարհում: Նա ամուսնացած է Աննիի հետ, ունի երեք երեխա և ութ թոռ: Այցելե՛ք ReinhardBonnke.com կայքը:

CfaN CHRIST FOR ALL NATIONS
CfaN.org

Հետևե՛ք Ռեյնհարդ Բոնկեին: Տեսածրե՛ք պատկերակը:

Այս գիրքը նվեր է հեղինակի կողմից և վաճառքի ենթակա չէ: